

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Յ Ո Ւ Ս Ի Ս Ա Փ Ա Յ Լ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

2 (10)

2022

ԵՐԵՎԱՆ

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2022

***Հրատարակության է երաշխավորել Հյուսիսային համալսարանի
գիտական խորհուրդը***

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ **Արմեն Ճուղուրյան**, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ, Հյուսիսային համալսարան

Խմբագրական խորհրդի անդամներ

Լուսինե Տլջյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Հյուսիսային համալսարան

Գայանե Հակոբյան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հյուսիսային համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոնի ղեկավար

Արթուր Ղամբարյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան

Վալերի Սիրգոյան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Պիթեր Կոստա, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սլավոնական լեզուների ամբիոնի վարիչ, Պոցդամի համալսարան, Գերմանիա

Ռադովան Ստոյանովիչ, Էլեկտրական ճարտարագիտության և համակարգչային գիտությունների դոկտոր, Էլեկտրական ճարտարագիտության ֆակուլտետի պրոֆեսոր, Մոնտենեգրոյի համալսարան

Վիտալիյ Կոպնով, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ռեկտորի խորհրդական, Ռուսական պետական մասնագիտական-մանկավարժական համալսարան, Ռուսաստանի Դաշնություն

Գոհար Պետրոսյան, իրավագիտության դոկտոր, դոցենտ «Միջազգային հանցագործություն և արդարադատություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար, Նյու-Յուրք Սիթի համալսարան ԱՄՆ

Սերգեյ Զմիյակ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, «Միջազգային տնտեսություն և միջազգային տնտեսագիտական

հարաբերություններ» ամբիոնի վարիչ, Դոնեցկի պետական տեխնիկական համալսարան, Դոնեցկի Ժողովրդական Հանրապետություն

Նինո Ապցխաուրի, պատմագիտության դոկտոր, դոցենտ, Իվանե Ջավախիշվիլի անվան Թբիլիսիի պետական համալսարան, խորհրդական, Արտաքին գործերի նախարարություն, Վրաստան

Նինո Աբեգաձե, Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Վիճակագրական տնտեսագիտության ամբիոն, Իվանե Ջավախիշվիլի անվան Թբիլիսիի պետական համալսարան

Իլուտա Արբիդանե, Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ռեզեկնեի տեխնոլոգիական ակադեմիա, Լատվիա

© «Հյուսիսային համալսարանի հրատարակչություն», 2022 թ.

ЮСИСАПАЙЛ

(Северное сияние)

НАУЧНЫЙ ЖУРНАЛ СЕВЕРНОГО УНИВЕРСИТЕТА

2 (10) 2022

Редакционная коллегия

Главный редактор – **Армен Джугурян**, доктор экономических наук, профессор, заведующий кафедрой экономики и менеджмента, Северный университет

Члены редакционной коллегии

Лусине Флджян, доктор филологических наук, профессор, проректор по учебно-исследовательской работе и интернационализации, Северный университет

Гаяне Акопян, кандидат филологических наук, доцент, руководитель учебно-практического центра по связям с общественностью и СМИ, Северный университет

Артур Гамбарян, доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права, Российско-армянский (Славянский) университет

Валерий Мирзоян, доктор философии, профессор, Армянский государственный экономический университет

Питер Коста – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой славянских языков, Поцдамский университет, Германия

Радован Стоянович, доктор инженерных и компьютерных наук, профессор факультета электрической инженерии, Университет Черногории, Черногорье

Виталий Копнов, доктор технических наук, профессор, советник ректора, Российский государственный профессионально-педагогический университет, Россия

Гоар Петросян, доктор юриспруденции, доцент, директор магистерской программы “Международная преступность и правосудие”, Городской университет Нью-Йорка, Университет, США

Сергей Змияк, доктор экономических наук, доцент, заведующий кафедрой "Мировая экономика и международные экономические отношения", Донской государственный технический университет, Донецкая Народная Республика

Нино Апциаури, доктор исторических наук, доцент, кафедра арменологии, Тбилисский государственный университет имени Иванэ Джавахишвили, советник, Министерство иностранных дел, Грузия

Нино Абездзе, доктор экономических наук, профессор, кафедра экономической статистики, Тбилисский государственный университет имени Иванэ Джавахишвили, Грузия

Илута Арбидане, доктор экономических наук, профессор, кафедра экономики и менеджмента, Резюкненская академия технологий, Латвия

HYUSISAPAYL

(Northern Lights)

SCIENTIFIC JOURNAL OF NORTHERN UNIVERSITY

2 (10) 2022

Editorial Board

Chief Editor` **Armen Tshughuryan**, Doctor of Sciences in Economics, Professor, Head of the Chair on Economic and Management, Northern University

Members of the Editorial Board

Lusine Fljyan, Doctor of Sciences in Philology, Professor, Vice-Rector for Education, Research and Internationalization, Northern University

Gayane Hakobyan, PhD in Philology, Associate Professor, Gayane Hakobyan, PhD in Philology, Associate Professor Head of Media and Public Relations Training Centre, Northern University

Artur Ghambaryan, Doctor in Law, Professor, Head of the Department of Theory and History of State and Law, Russian-Armenian (Slavonic) University

Valeriy Mirzoyan, Doctor of Philosophy, Professor, Armenian State Economical University

Peter Kosta, Professor Doctor phil. habil, Head of the Chair of Slavic languages, Potsdam University, Germany **Vitaliy Kopnov**, Doctor of Technical Sciences, Professor, Advisor to Rector, Russian State Professional Pedagogical University, Russia

Gohar Petrossian, PhD in Law, Associate Professor, Director of International Crime and Justice MA Program, City University of New York, USA

Vitaliy Kopnov, Doctor of Technical Sciences, Professor, Advisor to Rector, Russian State Professional Pedagogical University, Russia

Radovan Stojanović, Doctor in Electrical Engineering and Computer Sciences, Professor at the Faculty of Electrical Engineering, University of Montenegro, Montenegro

Nino Abezadze, Doctor of Sciences in Economics, Professor, Chair on Economic Statistics, Ivane Javakhishvili State University, Georgia

Iluta Arbidane, Doctor of Sciences in Economics, Professor, Chair on Economic and Management, Resekne Academy of Technologies, Latvia

Sergey Zmiyak, Doctor of Sciences in Economics, Professor. Head of the Chair on World Economy and International Economic Relations, Donetsk State Technical University. Donetsk People's Republic

Nino Aptsiauri, Doctor of History, Associate Professor, Chair on Armenology, Ivane Javakhishvili State University, Counselor, Ministry of Foreign Affairs, Georgia

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍԸ» ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Արմեն Ճուղուրյան

Հյուսիսային համալսարան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

jarmen1@yandex.ru

Ներածություն

Ներկայումս կազմակերպություններում կիրառվող ֆինանսական հաշվառումը, որն ի դեպ շուրջ երկու տասնամյակ իր հաշվետվական կարգավորումներն է ստանում միջազգային ստանդարտով, չի կարող ամբողջությամբ բավարարել գործարարության թե արտաքին, և թե ներքին շահառուների տեղեկատվական պահանջմունքները, քանի որ այն հետահայաց բնույթ ունի և արձանագրում է սոսկ ռետրոսպեկտիվ արդյունքներ: Այսինքն, ֆինանսական հաշվառման համակարգը ընդհանուր առմամբ միտված է դեպի անցյալ ժամանակաշրջանի տնտեսական գործունեության դեպքերի և արդյունքների արձանագրմանը և տեսանելի ապագային առնչվող նպատականիշեր չի արձանագրում, որն էլ թուլացնում է ձեռնարկատերերի զգոնությունը մրցակցային պայքարում: Այսօր արդեն պահանջ է դրվում այնպիսի հաշվապահական տեղեկատվության ձևավորման, որն հստակ ցույց է տալիս ոչ միայն ձեռնարկության հաջորդիվ նպատակակետերը, այլև գործարարության շահառուներին է փոխանցում սահմանված թիրախային նպատակադրումներին հասանելիության փաստացի աստիճանը: Այս դեպքում արդեն, ձեռնարկները կարողանում են արագորեն կողմնորոշվել մրցակցային շուկայում և ճկունություն ցուցաբերել սահմանված նպատակակետերին հասանելիության բացթողումների վերացման հարցերում: Ուստի, գործարարության կառավարման տեղեկատվական ապահովման համակարգում նպատակադրումների հաշվառումը գալիս է կատարելու առանցքային դերակատարում՝ տեղին և արդյունավետ կառավարչական որոշումների կայացման համար, և թերևս կիրառվելու է ֆինանսական հաշվառմանը զուգահեռ:

Ինչու առաջավ ֆինանսական հաշվառման անհրաժեշտությունը

Որպես գիտության, ֆինանսական հաշվառման ակունքները ձևավորվել են Բուսիայում՝ Լուկա Պաչոլոյի կրկնակի գրանցման եղանակի առաջարկով, որը ներկայացվեց 1494 թվականի «Տրակտատ հաշիվների և գրանցումների մասին» իր աշխատությունում: Առաջին անգամ կրկնակի գրանցման եղանակի հենքով հաշվապահական հաշվառումը համակարգային ձևաչափ ստացավ, նրանում շխթայապես փոխկապակցվելով տնտեսական գործարքների արժեքային արդյունքների տեղեկատվական հոսքերը: Եվ մինչև այսօր, կրկնակի գրանցմամբ հաշվապահական հաշվառման սկզբունքները գրեթե չեն փոփոխվել և գործնականում կիրառ-

վող հաշիվների “դեբետն ու կրեդիտը” կարծես ֆինանսական հաշվառման միջազգային լեզուն լինեն և կիրառվում են բոլոր երկրներում: ¹

Սակայն, միջնադարյան վաճառականները, երբ սկսեցին կրկնակի գրանցման հենքով կիրառել համակարգային ֆինանսական հաշվառում, սկզբնական շրջանում ունեին մեկ նպատակ՝ արժեքային չափումներով վերահսկելի դարձնել իրենց ակտիվների ձևավորումն ու ստանձնած պարտավորությունների մարումը: Վարելով հաշվապահական հաշիվներ, նրանք կարողանում էին ժամանակին և ճշգրիտ ձևով չափելու կայացված տնտեսական գործարքների արդյունքները և այդ տեղեկատվությունը համակարգելու ֆինանսական հաշվառման հաշվետվություններում, ինչպիսիք էին հաշվապահական հաշվեկշիռը կամ շահույթի ու վնասի հաշվետվությունը: Հետագայում, ֆինանսական հաշվառումը հայրուրամ-յակների ընթացի զարգացման ճանապարհին գրեթե չընդլայնեց իր առջև դրված խնդիրների շրջանակը, մինչև մեր օրերը հիմնականում ներկայանալով որպես տեղեկատվական համակարգ, հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, կապիտալի, մնացորդների փոփոխությունների, ինչպես նաև եկամուտների ու ծախսերի ձևավորումների վերաբերյալ: Այդ ընթացքում ընդամենը ձևավորվեց որոշից պահանջ, որ ֆինանսական հաշվառման տեղեկատվությունը հանրայնացվելու է, քանզի դրանով որոշումներ են կայացվելու ոչ միայն ձեռնարկատերերը, այլև դրանց արտաքին գործընկերները (մատակարարները, փոխատուները, ներդրողները, պետական լիազորված մարմինները և այլն): Այնուամենայնիվ, այդ որոշումների կայացումն մինչև այժմ իրականացվում է գործարարության հետահայց ընթացքի արդյունքներով, քանի որ գործող ֆինանսական հաշվառումը ընդամենը արձանագրում և խմբավորում է նախորդող ժամանակահատվածի տնտեսական իրադարձությունները, առանց մեկնաբանելու շահառուների ակնկալիքները և տեղեկատվության օգտագործողների նպատականիշերը:

Ինչ նպատակներ են հետապնդում ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գործող ստանդարտները

Ֆինանսական հաշվետվությունները կազմակերպությունների պատրաստվում և ներկայացվում են արտաքին օգտագործողներին: Չնայած տարբեր երկրների այդպիսի ֆինանսական հաշվետվությունները կարող են իրար նման թվալ, սակայն առկա են տարբերություններ, որոնք, հավանաբար, արդյունք են տարաբնույթ հասարակական, տնտեսական և իրավական հանգամանքների, ինչպես նաև այն բանի, որ տարբեր երկրներում ազգային պահանջների առաջադրման ժամանակ նկատի են առնվում ֆինանսական հաշվետվությունների տարբեր օգտագործողների կարիքները: Նշված հանգամանքները հանգեցրել են ֆինանսական հաշվե-

¹ St' u История возникновения бухгалтерского учета,
<https://econ.wikireading.ru/10409>

տվությունների տարրերի տարբեր սահմանումների օգտագործմանը, օրինակ՝ ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի: Դրանք հանգեցրել են նաև ֆինանսական հաշվետվությունների մեջ հոդվածների ճանաչման տարբեր չափանիշների օգտագործմանը և չափման տարբեր հիմունքների նախընտրությանը: Ֆինանսական հաշվետվությունների շրջանակները և նրանցում ներկայացվող բացահայտումները նույնպես ենթարկվել են ազդեցության: Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՄԻ) հանձն է առել նվազեցնել այս տարբերությունները՝ աշխատելով ներդաշնակեցնել ֆինանսական հաշվետվությունների պատրաստմանը և ներկայացմանը վերաբերող կարգավորումները, հաշվապահական հաշվառման ստանդարտներն ու ընթացակարգերը: Խորհուրդը կարծում է, որ հետագա ներդաշնակության կարելի է լավագույնս հասնել՝ կենտրոնանալով ֆինանսական հաշվետվությունների վրա, որոնք պատրաստվում են տնտեսական որոշումներ կայացնելու համար օգտակար տեղեկատվություն ապահովելու նպատակով:²

Հանդես գալով որպես տնտեսավարման տեղեկատվական ապահովման կարևորագույն օղակ, ֆինանսական հաշվառումը միջնորդավորում է կազմակերպությունների, դրանց գործող ու պոտենցիալ գործընկերների, տնտեսական հարաբերությունների կարգավորումը, որը դրսևորվում և ամփոփվում է ֆինանսական հաշվետվություններով:

Սահմանված միջազգային ստանդարտներով ֆինանսական հաշվետվությունների կազմման անհրաժեշտությունը մեր կողմից մեկնաբանվում է նաև հետևյալ կարևոր հանգամանքներով:³

- Հաշվապահական տեղեկատվության համընդհանուր ընկալում սպառողների կողմից: Տնտեսական տեղեկատվության սպառողներին առաջին հերթին հետաքրքրում է ներկայացվող հաշվետվությունների ընթերցելիության աստիճանը, որը նշանակում է ոչ միայն ֆինանսական հաշվետվությունների տիպային ձևերով ներկայացում, այլև մատուցվող տեղեկատվության տնտեսական արժեքների ճշգրիտ ընկալման հնարավորություն:
- Ֆինանսական հաշվապահական տեղեկատվության համադրելիության ապահովում: Տնտեսական կան որոշումներ կայացնելիս ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ նրա առկա և պոտենցիալ գործընկերների շրջանակներում հաճախակի պահանջվում են միջձեռնարկատիրական համեմատություններ, որն իրականացվում է հաշվապահական ստանդարտներով մշակված

² Տե՛ս Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներ, //Նախաբան, 2010 թվ.

³ Տե՛ս **Ճուղության Ա.**, Հաշվապահական հաշվառում, ուս. ձեռն, “Տնտեսագետ”, 5-րդ հրատարակում, Եր., 2009, էջ 131

տեղեկատվության ներկայացումով: Փաստորեն, ստանդարտներով հաշվապահության վարումը հնարավորություն է ստեղծում համեմատման միևնույն դաշտում ընդգրկելու բազմաբնույթ ձեռնարկատիրական սուբյեկտներին՝ միաժամանակ դրանց միջև համադրելիության որակի ապահովմամբ:

- Ճկուն հաշվապահական հաշվառման քաղաքականության իրականացման ապահովում: Ֆինանսական հաշվառման ստանդարտների կիրառումը հիմնականում ծառայելով տնտեսական տեղեկատվության սպառողների շահերին, հաշվի է առնում նաև կազմակերպությունների պահանջները հաշվառման կարգի վերաբերյալ: Հաշվապահական ստանդարտների կիրառումը հաշվային մեթոդաբանության ունիֆիկացմանը զուգահեռ թույլ է տալիս սահմանված դեպքերում ճկուն հաշվապահական քաղաքականության վարում, որը նշանակում է հաշվառման կազմակերպման ուղիների ընտրման հնարավորության ընձեռում: Ուստի, ցանկացած հաշվապահական ստանդարտի ներկայացում ավարտվում է հարցերի լուծման այն բացահայտումների ցանկով, որի անհրաժեշտությունը զգում է ֆինանսական հաշվետվություն կարդացողը:

Հետևաբար, միջազգային չափանիշներով հաշվապահական հաշառումն առաջին հերթին ենթադրում է ֆինանսական հաշվետվությունների կազմման միասնականությունն և հաշվային արդյունքների արժանահավատության սկզբունքի պահպանում, որն էլ հիմնականում ապահովվում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համընդհանուր ստանդարտների կիրառմամբ: Սակայն, բավարար է արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունների կազմման հետահայց մոտեցումը, որը հիմնականում մեկնաբանություններ է տալիս անցյալ ժամանակաշրջանի դեպքերի առնչությամբ և չի դիտարկում տեսանելի ապագան և տնտեսական գործունեության առաջընթացը, գնահատականներ չտալով կազմակերպությունների ռազմավարական կառավարման տեղեկատվական շրջանակի ձևավորմանը:

Թևակոխում է արդյո՞ք ներկայիս ֆինանսական հաշվառումը «ճգնաժամային փուլ»

Ստացվում է այնպես, որ կազմակերպությունների կողմից միջազգային ստանդարտների հենքով հրապարակվող հաշվապահական հաշվառման տեղեկատվությունը ոչ միայն հետահայց բնույթ ունի, այլև հիմնականում տնտեսական գործունեության ֆինանսական կողմն է արտացոլում: Սակայն, հաշվետվություններ օգտագործողները որոշումներ կայացնելիս պահանջ են զգում նաև ոչ ֆինանսական տեղեկատվության:

Իհարկե, կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների որոշակի շրջանակ միշտ էլ ենթարկվում է հաշվառման, այն էլ տարբեր հարթություններով: Այսպես, օպերատիվ հաշվառումը

ներկայացնում է աշխատակիցների աշխատաժամանակի օգտագործումը, կազմակերպության հումք և նյութերի ծախսը և ամենօրյա մնացորդները: Հաշվապահական անալիտիկ հաշվառումը ներկայացնում է պաշարների քանակային շարժը, հիմնական միջոցների տեղաբաշխումները, սարքավորումների ներկազմակերպական շարժունությունը, արագամաշ առարկաների քանակային փոփոխությունները, կադրերի հոսունությունը և այլն: Եվ թվում է, թե ոչ ֆինանսական տեղեկատվության տրամադրումը արդեն իսկ գործում է հաշվապահական հաշվառման համակարգում:

Սակայն, որոշումների ընդունման տեսանկյունից տվյալ տեղեկատվությունը բավարար չէ, նամանավանդ, երբ խոսքը վերաբերում է հաշվետվությունների արտաքին օգտագործողների շահերին և կազմակերպությունների գործարարության մրցունակության գնահատումներին: Որպես կանոն, հաշվապահական հաշվառման ոչ ֆինանսական ավանդական հաշվետվողականությունը նպատակաուղղվում է կազմակերպության ներքին շահերի բավարարմանը, ակտիվների պաշտպանությանը, արտադրական գործընթացի անխափանությանն ուղղված որոշումների կայացմանը:

Այդ իսկ պատճառով, տեղեկատվության արտաքին օգտագործողներին հասցեագրված տնտեսական գործունեության ոչ ֆինանսական արդյունքների հաշվետվողականությանը ներկայումս առանձնակի ուշադրություն չի դարձվում, այնինչ դրա անհրաժեշտությունը զգացվում է կազմակերպությունների մրցակցային դիրքերի ապահովման որոշումների կայացման ոլորտում: Արդեն իսկ, կազմակերպությունների գործունեության արտաքին շահակիցներին ներկայումս հետաքրքրում է ոչ միայն ֆինանսական հաշվետվությունների ցուցանիշների շրջանակը, այլև կայուն զարգացում և մրցակցային դիրքերի ամրապնդում հուսադրող ոչ ֆինանսական հաշվետվողականությունը կապված գործարարությանը առնչվող ոչ միայն նեղ տնտեսական, այլև հանրային շահերի բավարարման հետ, ինչպիսիք են բնապահպանական խնդիրները, սոցիալական ոլորտը, պետության նկատմամբ կազմակերպությունների ստանձնած հանրային պարտավորությունների կատարումը, համայնքային խնդիրների լուծումները, գործընկերների նկատմամբ դրսևորվող գործարարության վարքագիծը և այլն: Հենց այս շարժառիթներով ներկայումս խնդիր է դրվում կազմակերպելու ոչ ֆինանսական արդյունքների կառավարչական հաշվառում և դրանից բխող համապատասխան հաշվետվությունների ներկայացում:⁴

Գործող միջազգային ստանդարտներով ֆինանսական հաշվետվությունների կազմման շրջանակում առանձնակի հստակ պահանջ չի դրվում ներկայացնելու կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական

⁴Տե՛ս Գրիգորյան Լ., Ճուղուրյան Ա., Կառավարչական հաշվառում, “Տնտեսագետ”, Եր. 2022, 128-129

արդյունքների տեղեկատվություն: Սակայն, դրան զուգահեռ, տարեկան հաշվետվությունների փաթեթը կարող է ներկայացնել ոչ միայն կորպորատիվ շահերին հասցեագրված ոչ ֆինանսական ոլորտից բացատրություններ, այլև հանրային շահեր հետապնդող ոչ ֆինանսական արդյունքներ, որոնք առնչվում են կազմակերպության գործունեությանը: Դրանք հիմնականում ղեկավարության մեկնաբանություններն են, որոնք նպատակ են հետապնդում ամրապնդելու կազմակերպության բարի համբավը կազմակերպության ներքին և արտաքին շահակիցների շրջանում: Եվ, այդ իսկ պատճառով, նման ճանապարհով ներկայացվող ոչ ֆինանսական տեղեկատվությունը համակարգային բնույթ չի կրում և շատ հաճախ ներկայացվում է կազմակերպության գործունեության դրական կողմերով՝ շրջանցելով բացասական դրսևորումները:⁵

Այս առումով, ֆինանսական հաշվառման ներկայիս գործող համակարգը թևակոխում է ճգնաժամային փուլ, քանի որ թերևս լիովին չի բավարարում հաշվետվություններն ներքին և արտաքին օգտագործողների տեղեկատվական սպասումներին ինչպես ոչ ֆինանսական արդյունքների ձեռքբերման առումով, այնպես էլ ապագային միտված թիրախային սպասումների կատարողականի գծով:⁶

Ինչպե՞ս կազմակերպել ոչ ֆինանսական տեղեկատվության հաշվառում

Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտներով (IFRS) կարգավորվում են հրապարակվող հաշվապահական հաշվետվությունների կազմման մոտեցումները: Սակայն, այստեղ շեշտադրում է կատարվում ֆինանսական տեղեկատվության ներկայացման սկզբունքներին, իսկ ոչ ֆինանսական տեղեկատվությունը, որպես կանոն, դուրս է մնում հաշվետվական համակարգից: Դա հիմնականում պայմանավորված է ֆինանսական հաշվառման շրջանակով, որտեղ ընդգրկվում են կազմակերպության ատիվները, պարտավորությունները, կապիտալը, եկամուտներն ու ծախսերը: Իսկ այսօր, գործարար աշխարհին հետաքրքրում է նաև ոչ ֆինանսական տեղեկատվությունը, որպեսզի գնահատականներ տրվեն ոչ միայն կազմակերպության ֆինանսական դրության գծով, այլև մրցակցային դիրքերի ամրապնդման, կայուն զարգացման հնարավորությունների, կորպորատիվ շահերի, անվտանգային խնդիրների, բնապահպանական, սոցիալական գործունեության ուղղություններով:

⁵ Sté u Exploring the term “non-financial information”: an academics’ view, <https://www.emerald.com/insight/content/doi/10.1108/MEDAR-11-2019-0602/full/html>

⁶ Sté u Tshughuryan A., Conceptual issues of accounting development, //Finance and accounting scientific journal, 1(9) 2022, pp. 6-15

Բնականաբար, նման տեղեկատվությունը չի կարող ներկայացվել ֆինանսական արժուրմամբ, որն էլ ներկայումս տեսաբանների շրջանակներում քննարկման հարց է դարձնում ոչ ֆինանսական տեղեկատվության ընդգրկման հնարավորությունները հաշվապահական հաշվառման համակարգ:

Ոչ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջարկը արդեն ավանդական է դարձել այն ընկերությունների համար, որոնցում ֆինանսական տեղեկատվությունը լրացվում է նաև գործունեության չափման այլ ցուցիչներով, գնահատելով ընկերության գործունեության արդյունավետությունը կորպորատիվ և սոցիալական պատասխանատվությանն առնչվող տարբեր նպատակներին հասնելու կապակցությամբ: Ինտեգրացված հաշվետվությունը ցույց է տալիս, թե ինչպես են կազմակերպության մարտավարական և ռազմավարական նպատակադրումները, և դրանց կատարողականը հանգեցնում ոչ միայն ֆինանսական, այլև ոչ ֆինանսական արժեքների ստեղծմանը:⁷ Նման տեղեկատվության ստացմամբ շահագրգիռ են այնպիսի խմբեր, ինչպիսիք են՝ աշխատողները, սպառողները, մատակարարները, համայնքները, օրենսդրական մարմինները, և այլն:

Իհարկե, ոչ ֆինանսական հաշվետվությունների կիրառումը հաշվապահական հաշվառման համակարգում կապված է մեթոդաբանական և գործնական մի շարք հիմնահարցերի հետ: Անգամ կարծիք է հայտնվում, որ հետագայում միայն հնարավոր կլինի մշակել և ընդունել միջազգային ստանդարտներ, որոնք կկարգավորեն ինտեգրացված հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հետ կապված հարցերը, ինչը թույլ կտա ներկայացնել տարբեր երկրներում միասնական սկզբունքների հիման վրա հաշվետվություններ և միևնույն ոլորտի ընկերությունների հաշվետվությունների միջև համադրելիություն կապահովի:⁸

Սակայն, մենք կարծում ենք, որ բիզնեսի ոչ ֆինանսական արդյունքները այսօր էլ հնարավոր է ընդգրկել հաշվապահական հաշվառման ոլորտ, անգամ այն ինտեգրելով ֆինանսական հաշվառման տեղեկատվական համակարգի հետ: Այս նպատակով առաջարկում ենք իրականացնել հայեցակարգային հետևյալ մոտեցումները (տես գծապատկեր 1):


Առաջին. հստակեցնել կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքների նպատակադրումները, դրանք փոխկապակցելով բիզնես գործունեության ոչ ֆինանսական հետևանքների հետ:

Ավանդական հաշվապահական հաշվառումը, շեշտադրում կատա-

⁷ Տե՛ս Exploring the term “non-financial information”: an academics’ view, <https://www.emerald.com/insight/content/doi/10.1108/MEDAR-11-2019-0602/full/html>

⁸ Տե՛ս **Karine Zurabyan, Rafii Aeksanyan**, Non financial reporting as a type of corporate reporting, http://ysu.am/files/Pages-from-Issues_2016.pdf

րելով կազմակերպությունների բիզնեսի կազմակերպման արդյունքներին, դիտարկում է տնտեսական գործունեության ֆինանսական կողմը: Սակայն, երբ փոխկապակցվում են առևտրային գործունեության ֆինանսական արդյունքները և դրանից բխող նաև սոցիալական, բնապահպանական, կորպորատիվ շահերի բավարարման հետևանքները, ապա հնարավորություն է ստեղծվում հաշվապահական հաշվառման համակարգում ինտեգրելու ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքային տեղեկատվական հոսքերը:



Գծապատկեր 1 Հաշվապահական հաշվառման զարգացման հայեցակարգային մոտեցումները⁹

⁹ Կազմել է հեղինակը:

Երկրորդ. հաշվապահական հաշվառման համակարգում կիրառել ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքների միասնական չափայնություն: Եթե ավանդաբար ֆինանսական հաշվառման համակարգում միասնական չափման միավորը ներկայացվում է դրամը, ապա ոչ ֆինանսական տեղեկատվական համակարգում այն բավարար չէ, քանի որ այստեղ դիտարկվում են բիզնես գործունեության արդյունքները բնութագրող այնպիսի չափիչներ, ինչպիսիք են ժամը, աշխատատեղերի շրջանակը, տեխնոլոգիական վտանգավոր արտանետումների, վնասակար թափոնների քանակը և այլն: Հետևաբար, ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական տեղեկատվությունը պետք է ներկայացնել միասեռ չափայնության հարթությունում, որը մենք առաջարկում ենք ձևավորել գործակիցների կիրառմամբ:¹⁰

Երրորդ, ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական տեղեկատվությունը հաշվապահական հաշվառման համակարգում արձանագրել կրկնակի գրանցման եղանակով, դրանց համար բացելով համապատասխան հաշիվներ:

Բնականաբար, առաջարկվող հաշիվները գործելու են ավանդական հաշվային համակարգից դուրս: Եվ որպեսզի տեղի ունենա ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների տեղեկատվական ինտեգրում, ապա միասեռ չափայնության հարթությունում գործակիցների վերաձված տնտեսական գործունեության արդյունքները կրկնակի գրացման եղանակով կգրանցվեն հաշիվներում: Դրանով իսկ, հնարավորություն կստեղծվի համակագելու ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվական հոսքերը և դրանք ներկայացնելու միասնական հաշվետվությամբ:

Չորրորդ, մշակել կազմակերպությունների գործունեության արդյունավետության հաշվետվական համակարգ, նրանում արտացոլելով ոչ միայն ֆինանսական արդյունքները, այլև դրանցից բխող ոչ ֆինանսական հետևանքները (շրջակա միջավայրի պահպանում, աշխատողների բարեկեցության մակարդակի աճ, կորպորատիվ շահերի բավարարում, գործընկերային հարաբերությունների ամրապնդում, սոցիալական ծրագրերի ընդլայնում, հանրային բնույթի նպատակադրումների իրագործում, շուկայում մրցակցային դիրքերի ամրապնդում և այլն): Նման հաշվետվությունը տեղեկատվության օգտագործողներին թույլ կտա գնահատելու, թե որքանով են կազմակերպության ֆինանսական շահերը ծառայում ոչ ֆինանսական նպատակադրումներին, որոնք ոչ պակաս կարևոր են բիզնես միջավայրում:

¹⁰Տե՛ս **Ճուղության Ա, Գևորգյան Զ.**, Կազմակերպությունների մրցունակության ռազմավարական հաշվառման հիմնախնդիրները, Բանբեր ՀՊՏՀ, #3, 2021, <https://asue.am/upload/files/science/banber/2021-year-3/3.pdf>

Ինչո՞վ է պայմանավորվում նպատակադրումների հաշվառման անհրաժեշտությունը


Կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով կարգավորումները միտված են տեղեկատվության արտաքին օգտագործողների պահանջմունքների սպասարկմանը: Սակայն, ներկայումս ձեռնարկատիրության արտաքին շահառուները ձգտում են ստանալ նաև այնպիսի տեղեկատվություն, որոնք առնչվում են կազմակերպությունների սոցիալական, բնապահպանական, ինչպես նաև հանրային տարաբնույթ պարտավորությունների կատարմանը, որոնք գրեթե չեն արտացոլվում ֆինանսական հաշվետվություններում: Ավելին, հաշվապահական հաշվետվությունները տեղեկատվական աղբյուր են հանդիսանում նաև կազմակերպությունների մենեջմենթի համար, որոնք դրանով գնահատում են տնտեսական գործունեության ուժեղ և թույլ կողմերը և որոշումներ են կայացնում ձեռներեցության մրցակցային դիրքերի ամրապնդման ուղղությամբ:

Հետևաբար, միայն ֆինանսական հաշվետվություններով, որտեղ չկան հստակ նպատակադրումներ և դրանց փաստացի հասանելիության ցուցիչներ, թե ներքին, և թե արտաքին օգտագործողները «տեղեկատվական քաղց» են զգում, քանի որ միայն ռետրոսպեկտիվ արդյունքների արձանագրումները բավարար չեն դառնում ինչպես ռազմավարական, այնպես էլ մարտավարական բնույթի որոշումներ ընդունելիս: Եվ ուրեմն, ներկայումս խնդիր է դրվում կիրառելու այնպիսի հաշվապահական հաշվառում, որը հստակ տեղեկատվություն կտրամադրի ոչ միայն կազմակերպության տնտեսական գործունեության անցյալի մասին, այլև կգնահատի ապագային միտված նպատակակետերին հասանելիության առաջնությամբ: Այս առումով, առաջարկում ենք գործող ֆինանսական հաշվառմանը զուգընթաց կազմակերպություններում կիրառել նաև նպատակադրումների հաշվառում, որը կլրացնի ֆինանսական հաշվետվությունների «տեղեկատվական բացը»: Մյուս կողմից, եթե հաշվապահական հաշվառման համակարգ են ներառվում ոչ ֆինանսական արդյունքներ, ապա դրանք պետք է համադրելի լինեն միատեսակ չափիչներով, ունենան նույն չափայնությունը, որպեսզի հաշիվներում ենթարկվեն կրկնակի գրանցման: Իսկ հիմնականում, տնտեսական գործունեության ոչ ֆինանսական արդյունքները ներկայացվում են տարբեր չափիչներով (կգ, մ, լիտր, մրադ/օր, ժամ և այլն), որը դժվարացնում է դրանց ներկայացումը համադրելի դաշտում, առավել ևս՝ համակարգային հաշվառումը: Հետևաբար, նպատակադրումների հաշվառում կազմակերպելիս արմատապես վերանայվում է ավանդական հաշվառման գործող կառուցակարգը և սկսում են գործել մեթոդաբանական այլ մոտեցումներ:

Ինչպիսի՞ն է նպատակադրումների հաշվառման «փիլիսոփայությունը»

Թերևս ոչ մի կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ հինգ հարյուր տարի առաջ ձևավորված ֆինանսական հաշվառման կառուցակարգը մինչ այժմ փոփոխությունների չի ենթարկվել հենց կրկնակի գրանցման սկզբունքի կիրառման պատճառով, որի օգնությամբ հնարավորություն է ստեղծվում համակարգելու արձանագրված ամբողջ տեղեկատվությունը և ներկայացնելու կանոնակարգված հաշվետվություններ: «Ակտիվներ = կապիտալ + պարտավորություններ» բանաձևը ընդունելով որպես հիմնասյուն, տնտեսական գործառնությունների կրկնակի գրանցմամբ հնարավորություն է ստեղծվում համակարգային մոտեցմամբ հաշվեկշռելու կազմակերպությունների տնտեսական գործունեության ֆինանսական տեղեկատվությունը:

Ձեռնարկատիրական նպատակադրումներ



$$a_0 + b_0 + c_0 + n_0 = a_1 + b_1 + c_1 + n_1 + \Delta a + \Delta b + \Delta c + \Delta n$$

Նպատակադրումներ = Փաստացի ձեռքբերումներ + Նպատակադրումներից շեղումներ

Գծապատկեր 1 Նպատակադրումների հաշվառման ընդհանրացված տեղեկատվական հոսքերը¹¹

¹¹ Կազմել է հեղինակը:

Այս առումով, նպատակադրումների հաշվառման համակարգը նույնպես առաջարկում ենք կառուցել հաշվեկշռման մոտեցմամբ, սակայն հաշվեկշռային փոխկապակցություն ստեղծելով արդեն կազմակերպությունների նպատականիշերի և դրանց փաստացի հասանելիության միջև, կիրառելով հետևյալ բանաձևը. «Նպատակադրումներ = փաստացի ձեռքբերումներ + շեղումներ», որը նույնպես իր արժեքային փոփոխություններն է ստանում կրկնակի գրանցմամբ և դրանով իսկ ապահովում է հաշվեկշռված ու համակարգված տեղեկատվական հոսքեր:

Այս դեպքում, նույնպես կիրառվում են հաշվապահական հաշիվներ, որոնցում կրկնակի գրանցման սկզբունքով արձանագրվում են կազմակերպությունների գործունեության ինչպես ֆինանսական, այնպես ոչ ֆինանսական հաշվեկշռված ցուցիչներ, սակայն արդյունքում ներկայացնելով այլընտրանքային հաշվապահական հաշվեկշիռ, հիմնված հաշիվների փոխկապակցման հետևյալ կառուցակարգի վրա:

Հետևաբար, նպատակադրումների հաշվառման փիլիսոփայությունը չի սահմանափակվում սոսկ անցյալ դեպքերի արձանագրմամբ, այլ այն տեղեկատվական մեկնաբանություններ է հաղորդում կազմակերպության կողմից ֆինանսական և ոչ ֆինանսական Տո նպատակադրումների փաստացի հասանելիության վերաբերյալ: Հենց այս առումով նպատակադրումների հաշվառումը առավել իսկ սերտ առնչության մեջ է գտնվում կառավարման համակարգի հետ, քանի որ ո թիրախային ցուցիչները բխում են մրցակցային գործարարության շահերից: Այս առումով, ի տարբերություն ավանդական ֆինանսական հաշվառման, նպատակադրումների հաշվառումը հայացքը ուղղում է դեպի ապագան և տեղակտվություն է հաղորդում սահմանված առաջադրանքների կատարողականի մասին, որն էլ օգտագործվում է ապագային միտված կառավարչական որոշումների կայացման համար: Եվ որքան մեծանում է ո թիրախային ցուցիչների շրջանակը, այնքան հավակնոտ են դառնում նպատակադրումների հաշվառման առջև դրված պահանջները:¹²

Ինչպիսի՞ն է նպատակադրումներով հաշվառման կառուցակարգը

Նպատակադրումների հաշվառում ներդնելիս անհարժեշտ է օգտվել ճանապարհային քարտեզից: Նախևառաջ, հաշվառման առջև խնդիր է դրվում պարզելու, թե ինչ ռազմավարական զարգացման ուղի է ընտրել կազմակերպությունը: Այն կարող է լինել նոր շուկաների նվաճում,

¹² Տե՛ս **Ճուղության Ա, Գևորգյան Զ.**, Կազմակերպությունների մրցունակության ռազմավարական հաշվառման հիմնախնդիրները, Բանբեր ՀՊՏՀ, #3, 2021, <https://asue.am/upload/files/science/banber/2021-year-3/3.pdf>

մրցակցային դիրքերի ամրապնդում, սոցիալական գործարարության ընդլայնում, բնապահպանության ակտիվացում և այլն: Ջարգացման ուղիների նպատակադրումների շրջանակը հստակեցնելուց հետո հաշվապահական հաշվառումը սահմանում է նպատակդրումից բխող թիրախային ցուցիչներ, որոնց հասանելիությունը առանցքային է համարվում տեսանելի հեռանկարում կազմակերպության զարգացման համատեքստում: Հաջորդ քայլը, տարբեր չափիչներով ընտրված հաշվառման օբյեկտների փոխակերպումն է միասնական չափայնության, որը մեր կողմից առաջարկվում է իրականացնել գործակիցների տեսքով:

Աղյուսակ 1

Նպատակադրումներից գործակցային շեղումների հաշվարկը

Նպատականիշեր	Նշանակում	Ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներ		Հասանելիություն	Շեղման գործակից
		Ակնկալվող	Փաստացի		
Իրացման տարեկան ծավալի ապահովում	a	250 մլն դրամ	230 մլն դրամ	0,92	0,08
Ակտիվների միջին մնացորդ	b	740 մլն դրամ	725 մլն դրամ	0,98	0,02
Կապիտալի շահութաբերություն	c	5%	4.5%	0.9	0.10
Հարկային բեռ իրացման ծավալի նկատմամբ	d	28%	37%	0,75	0,25
Սոցիալապես խոցելի խմբերի ներգրավում բիզնեսում	e	7%	2%	0,28	0,72
Նոր աշխատատեղերի բացում	f	36 տեղ	30 տեղ	0,83	0,17
Մրցակցային որակի ապահովում	g	100%	92%	0,92	0,08
Բնապահպանական գործունեության ընդլայնում	h	4%	4%	1,0	0

Այսպես, աղյուսակ 1-ում ներկայացված են կազմակերպության այն նպատականիշերը, որոնք առանցքային են համարվում կազմակերպության մրցունակության ապահովման համար և հետաքրքրություն են ներկայացնում հաշվապահական հաշվառման հաշվետվություններն

օգտագործողների կողմից: Ընդ որում, աղյուսակում ընդգրկված են ոչ միայն ակնկալվող նպատականիչները իրենց չափման տարբեր միավորներով, այլև հաշվետու ժամանակաշրջանի վերջում դրանց գծով փաստացի ձեռքբերումները: Որպեսզի հաշվառման ենթակա նշված ցուցանիշները ներկայացվեն համադրելիության դաշտում, դրանց գծով հաշվարկվում են հասանելիության գործակիցներ և շեղումներ (տես աղյուսակ 1): Ընդ որում, որքան շեղման գործակիցը փոքրանում է, այսինքն հասանելիությունը ձգտում է 1,0-ի, այնքան կոնյրետ նպատակադրման հասանելիության աստիճանը տեղեկատվությունն օգտագործողների կողմից բարձր են գնահատվում:

Նպատակադրումների հաշվառման կառուցակարգի ձևավորման ճանապարհային քարտեզը ներառում է նաև կրկնակի գրանցմամբ սահմանված նպատականիշերից փաստացի ձեռքբերումների շեղումների գրանցում: Այս դեպքում, յուրաքանչյուր նպատականիշի գծով բացվում են հատուկ հաշիվներ, որոնք արձանագրում են յուրաքանչյուր նպատակադրման գծով փաստացի ձեռքբերումների շեղումները, որոնք աղյուսակ 1-ի տվյալներով ձևակերպվում են հետևյալ հաշվապահական թղթակցություններով.

- ձևակերպվել է իրացման տարեկան ծավալի ապահովման նպատականիշը.
Դո «Իրացման տարեկան ծավալի նպատականիշ».....1,0
Կտ «Ձեռնարկատիրական նպատակադրումներ».....1,0
- ձևակերպվել է իրացման տարեկան ծավալի փաստացի հասանելիությունը.
Դո «Ձեռնարկատիրական նպատակադրումներ».....0,92
Կտ «Իրացման տարեկան ծավալի նպատականիշ».....0,92
- ձևակերպվել է իրացման տարեկան ծավալի ապահովման նպատականիշից շեղումը.
Դո «Ձեռնարկատիրական նպատակադրումներ».....0,08
Կտ «Իրացման տարեկան ծավալի նպատականիշ».....0,08
- ձևակերպվել է ակտիվների մնացորդի ապահովման նպատականիշը.
Դո «Ակտիվների միջին մնացորդի նպատականիշ».....1,0
Կտ «Ձեռնարկատիրական նպատակադրումներ».....1,0
- ձևակերպվել է ակտիվների միջին մնացորդին փաստացի հասանելիությունը.
Դո «Ձեռնարկատիրական նպատակադրումներ».....0,98
Կտ «Ակտիվների միջին մնացորդի նպատականիշ».....0,98
- ձևակերպվել է ակտիվների միջին մնացորդի ապահովման նպատականիշից շեղումը.
Դո «Ձեռնարկատիրական նպատակադրումներ».....0,02
Կտ «Ակտիվների միջին մնացորդի նպատականիշ».....0,02

Նույն սկզբունքով կրկնակի գրանցմամբ արձանագրելով մնացյալ նպատականիշերից գործակցային շեղումները, կստանանք կազմակերպության ձեռնարկատիրական նպատակադրումների կատարողականի հաշվեկշռային փոխկապակցվածությունը հետևյալ հաշվի օգնությամբ:

Ձեռնարկատիրական նպատակադրումներ

(a _i)	0,92	(a ₀)	1,00
(Δa)	0,08		
(b _i)	0,98	(b ₀)	1,00
(Δb)	0,02		
(c _i)	0,90	(c ₀)	1,00
(Δc)	0,10		
(d _i)	0,75	(d ₀)	1,00
(Δd)	0,25		
(e _i)	0,28	(e ₀)	1,00
(Δe)	0,72		
(f _i)	0,83	(f ₀)	1,00
(Δf)	0,17		
(g _i)	0,92	(g ₀)	1,00
(Δg)	0,08		
(h _i)	1,00	(h ₀)	1,00
(Δh)	1,00		
	6,00		6,00

Այսպիսով, առաջարկվող «Ձեռնարկատիրական նպատակադրումներ» հաշիվը հաշվետու ժամանակաշրջանի վերջին փակվում է, դեբետում ամփոփելով սահմանված նպատականիշերի հասանելիության կատարողականը, իսկ կրեդիտում՝ հաշվառման համակարգում ընդգրկված նպատակադրումների քանակը:

Եզրակացություն

Ունենալով կազմակերպության կողմից սահմանված նպատակադրումներից գործակցային շեղումների հաշվապահական հաշվետվություն, հնարավորություն է ստեղծվում.

Առաջին, հաշվապահական հաշվառումը փոխադրել ապագային միտված նպատականիշերի հասանելիության գնահատման ոլորտ, և դրանով իսկ համակարգված տեղեկատվություն տրամադրել կառավարիչներին կազմակերպությունների գործունեության առաջընթացի վերաբերյալ ըստ նախանշված թիրախային ուղղությունների:

Երկրորդ, հաշվառման համակարգ միաժամանակ ներառել ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվություն, դրանով իսկ հաշվետվողականություն ապահովելով բիզնես գործունեության ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական, բնապահպանական, և հանրային շահերի

բավարարման տարբեր բնագավառների վերաբերյալ, ներկայացնելով այդ ուղղություններով նպատականիշեր և փաստացի ձեռքբերումներ:

Երրորդ, գնահատել կազմակերպությունների կողմից ստանձնած նպատակադրումների իրականացման աստիճանը և դրանով իսկ նպաստել կառավարչական աուդիտի արդյունավետության բարձրացմանը, ներկայացնելով տեղեկատվություն ձեռնարկատիրության նպատակադրումներից փաստացի ձեռքբերումների շեղումների վերաբերյալ: Այսպես, եթե վերոնշյալ իրավիճակում նպատակադրումների իրագործման առավելագույն 6 միավոր է սահմանվել, և դրանից բացասական ընդհանուր շեղումը կազմել է 1,42, ապա կազմակերպությունը 23,7%-ով չի հաջողվել ապահովել իր առջև դրված զարգացման առանցքային ցուցանիշների հասանելիություն:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ֆինանսական հաշվետվությունները, որոնք հրապարակվում են կազմակերպությունների կողմից, ունեն ռետրոսպեկտիվ բնույթ և հիմնականում արձանագարում են անցյալի տնտեսական իրողությունները: Սակայն, կառավարչական որոշումների տեղեկատվական ապահովվածությունը ներկայումս պահանջում է ոչ միայն հաշվապահական հաշվառման հետահայաց արդյունքների վերլուծություն, այլև կազմակերպությունների նպատակադրումների հասանելիության աստիճանի գնահատում, որը դեռևս չի իրականացվում ֆինանսական հաշվառման կողմից: Հոդվածում առաջարկվում է գործարարության կառավարման տեղեկատվական ապահովման համակարգում նպատակադրումների հաշվառման մեթոդաբանություն, որի արդյունքում կազմակերպություններում ձևավորվում է արդյունավետ կառավարչական որոշումներին նպաստող ոչ ֆինանսական ներքին հաշվետվողական համակարգ:

Հիմնաբաներ. կառավարչական նպատակադրումներ, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվություններ, կառավարչական նպատակադրումներից շեղումներ, կառավարչական որոշումներ:

Օգտագործված գրականություն

1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներ, //Նախարան, 2010 թվ.
2. **Գրիգորյան Լ., Ճուղուրյան Ա.,** Կառավարչական հաշվառում, “Տնտեսագետ”, Եր. 2022, 128-129
3. **Ճուղուրյան Ա.,** Հաշվապահական հաշվառում, ուս. ձեռն, “Տնտեսագետ”, 5-րդ հրատարակում, Եր., 2009, էջ 131
4. **Ճուղուրյան Ա, Գևորգյան Զ.,** Կազմակերպությունների մրցունակության ռազմավարական հաշվառման հիմնախնդիրները, Բանբեր ՀՊՏՀ, #3, 2021, <https://asue.am/upload/files/science/banber/2021-year-3/3.pdf>

5. История возникновения бухгалтерского учета, <https://econ.wikireading.ru/10409>
6. Exploring the term “non-financial information”: an academics’ view, <https://www.emerald.com/insight/content/doi/10.1108/MEDAR-11-2019-0602/full/html>
7. **Tshughuryan A.**, Conceptual issues of accounting development, //Finance and accounting scientific journal, 1(9) 2022, pp. 6-15
8. **Karine Zurabyan, Rafii Aeksanyan**, Non financial reporting as a type of corporate reporting, http://ysu.am/files/Pages-from-Issues_2016.pdf

«ИНФОРМАЦИОННЫЙ КРИЗИС» ФИНАНСОВОГО УЧЕТА В КОНТЕКСТЕ УПРАВЛЕНЧЕСКИХ РЕШЕНИЙ

Армен Джугурян

Северный университет, доктор экономических наук, профессор

Финансовая отчетность, публикуемая организациями, носит ретроспективный характер и в основном отражает экономические реалии прошлого. Однако информационное обеспечение управленческих решений в настоящее время требует не только анализа ретроспективных результатов бухгалтерского учета, но и оценки степени достижения целей организации, что еще не реализовано бухгалтерским учетом. В статье предложена методика учета целей в информационной системе управления бизнесом, в результате чего в организациях формируется нефинансовая система внутренней отчетности, способствующая принятию эффективных управленческих решений.

Имея бухгалтерский отчет отклонений факторов от целей, поставленных организацией, можно:

Во-первых, бухгалтерский учет перевести в область оценки достижения перспективных целей и тем самым обеспечить системную информацию руководителям о ходе деятельности организаций по заданным целевым направлениям.

Во-вторых, одновременно включать в систему бухгалтерского учета финансовую и нефинансовую информацию, тем самым обеспечивая отчетность не только за экономические, но и за удовлетворение социальных, экологических и общественных интересов в различных сферах хозяйственной деятельности, представляя цели и фактические достижения в этих направлениях. .

В-третьих, оценивать степень реализации поставленных перед организациями целей и тем самым способствовать повышению эффективности управленческого аудита, представляя информацию об отклонениях фактических достижений от целей предприятия.

Ключевые слова: управленческие цели, финансовая и нефинансовая отчетность, отклонения от управленческих целей, управленческие решения.

THE "INFORMATION CRISIS" OF FINANCIAL ACCOUNTING IN THE CONTEXT OF MANAGERIAL DECISIONS

Armen Tshuguryan

Northern University, Doctor of Sciences in Economics, Professor

Financial statements published by organizations are retrospective in nature and mainly record past economic realities. However, the information supplying of managerial decisions currently requires not only the analysis of retrospective results of accounting, but also the assessment of the degree of achievement of the organization's objectives, which is not yet implemented by financial accounting. The article proposes a methodology for recording goals in the business management information system, as a result of which a non-financial internal reporting system contributing to effective management decisions is formed in organizations.

Having an accounting report of factor deviations from the goals set by the organization, it is possible to:

First, accounting should be transferred to the field of assessing the achievement of future-oriented goals, and thereby provide systematic information to the managers about the progress of the organizations' activities according to the specified target directions.

Second, to simultaneously include financial and non-financial information in the accounting system, thus providing accountability not only for economic, but also for social, environmental, and public interest satisfaction in various areas of business activity, presenting goals and actual achievements in these directions.

Thirdly, to assess the degree of realization of the objectives undertaken by the organizations and thereby contribute to the improvement of the efficiency of the managerial audit, presenting information about the deviations of the actual achievements from the objectives of the enterprise.

Keywords: managerial objectives, financial and non-financial reports, deviations from managerial objectives, managerial decisions.

Ներկայացվել է՝ 22.09.2022 թ.

Ընդունվել է՝ 12.10.2022 թ.

ANALYSIS OF SOCIAL MEDIA AND BUSINESS MANAGEMENT ASSOCIATION

Mohammad Sajjad Farzanegan

PhD student, Eouropian University

Rezabarati91@gmail.com

Abstract: Social media is currently used not only for entertainment or informational communication reasons, but also plays its decisive role in the management system of business activities of organizations. In particular, the functions of marketing activities, recruitment of employees, brand coverage of products released by organizations become prominent in the social media system. With these considerations, the article discusses the issues of using social media as a business management tool. In particular, it is suggested to use social media as a motivational tool along with sales promotion, as well as a method of behavioral study of the life of social classes, which will give an opportunity to be oriented in case of evaluating the satisfaction of the needs of the internal and external stakeholders of the business. The use of social media in the field of providing information feedback to managers and managed groups is also being discussed, and in this context, the use of the social trust indicator in the management system is proposed.

Introduction

Social media management is a technique that enables us, as active and dynamic audiences, to face the media messages and have the ability to discriminate. Social media management is a set of learnable skills which are related to the ability to access, analyze and produce different kinds of media messages and is essential in today's world.

To find our way in today's complicated media environment, we should have a better understanding of media messages.

Social media management, is like a diet regime that smartly monitors to see what is suitable for us and what is harmful; what should we consume and what we should not, and what is the base for the amount of consumption of each material. Since people have become more literate, they care for their diet and the amount of cholesterol, vitamins, and other material. Similarly, in the media environment too, one should be aware of the amount of visual,

audio, and text contents to consume and to know what should be taken from these contents.

The goal of social media management is to enable people to control media programming. The media urges us to adjust our life program to their schedule. People who do not develop their media management skills will get caught in the vortex of media messages. Therefore, the goal of media management is to show people how to regain control of the media. The first step for this is to know how the media programs our minds. This programming is done by the media over and over again in a recursive manner. One step used in this programming is to restrict our choices and the next step is to reinforce and consolidate the experience. On the other hand, the line between our real world and the media world and the distinction between the two is becoming increasingly blurred. The media do not wait for us to enter their world, instead, they impose their messages on our world. Because much of our exposure to media messages is not planned by ourselves, we do not realize how much we are exposed to media messages. The goal of social media management is to be consciously exposed to the media.

Research results

Social media management can be expanded and updated in various ways. As media tools and their functionality change, social media management should also change and progress. But social media management, apart from its critical perspective towards the media, is defined and implemented specially and uniquely in each social context and society; just as not all societies are the same and the same pattern of behavior could not be suggested for all.

Research can be considered a systematic science, as a result of which the answers to the questions raised on the subject of research can be found. Research has also been seen as a systematic process of finding an answer to a question or a solution to a problem. In this chapter, the research method, data gathering method, statistical population, measurement tools, validity and reliability of the questionnaire, sampling method and sample size determination and statistical methods used in this study are studied.




Figure.1 The social media and business composition performance¹³

When choosing the type of research method, one must keep in mind who is involved in the decision-making research, and who the research uses for, and with what viewpoints, so that the research does not face inefficiency. The typology of the research provides the method for its methodology¹⁴. The features of this research are summarized as follows: Based on the nature and methodology, scientific research can be divided into five groups: descriptive, historical, solidarity, experimental and causal. In descriptive research the researcher looks at how the subject is and wants to know what the status quo is and tries to systematically describe the current situation, study its features and traits, and examine the relationship between variables. Descriptive

¹³ Criatrd by author.

¹⁴ Dehdashti shahrokh (2011); Impact of brand equity from a consumer perspective; Tehran; Conference article; pars institute publication volume 3; pp70-88

research can be divided into three survey groups. Divided into depth and content analysis. According to the above, the current research is classified in the applied research group in terms of purpose and in terms of type, the research is classified in descriptive-survey research. Since the current research uses data collection tools that are intended to describe the conditions or phenomena under study, this research is a descriptive research, and since the data collection in this research is supported by library and questionnaire studies. It can be placed in the field research group¹⁵.

One of the most common topics in the management literature is the need to understand an industry in terms of structure, evolution, life cycle, change and its integrity to examine the extent to which the organization's strategy fits the competitive environment, both at the micro and macro levels. The present study explores the media management tools used by executives in Iranian social media to increase information available about the media industry¹⁶.

The concept of strategic fit leads to the study of how an organization and its strategies can best be adapted to the strategic changes of the environment. Strategy design process means how a specific strategy is formulated or how the media company's strategy is developed over time through linear and pre-determined formal processes, logical planning, execution and control. As a result of trial, error and learning, issues related to the competitive environment are formed and emerge, and behavioral patterns in the field of successful work activities are combined.

- Насколько возможно застраховать национальную экономику в процессе формирования единого финансового рынка, планируемого в рамках ЕАЭС в 2025 году, в результате этого и в последующие годы.

Ключевые слова. финансовая безопасность, национальная валюта, электронная валюта, ЕАЭС, финансовые риски

Tatul Manaseryan**ENSURING FINANCIAL SECURITY IN THE FACE OF COMPETITION
BETWEEN NATIONAL AND ELECTRONIC CURRENCIES**

The environment created in international monetary relations in the last decade following the global financial and economic crisis causes more concerns than optimism, both in terms of the financial systems of the national economies of individual countries, as well as the future course of the world economy. There are also many countries that have not even overcome the second wave of the global financial and economic crisis, the external debt crisis (Greece, Spain, Portugal, Holland, etc.). And in a broader sense, both in the economy and in the financial system, the general uncertainty is increasing. We, the Armenians, are particularly interested in the following issues for at least three reasons.

- In the years of independence, the established, even competitive and stable financial system in the post-Soviet territory faces certain risks. Even in the years when the national currencies of the neighboring countries - the Turkish lira, the Azerbaijani manat, the two Iranian currencies, the Georgian lari - were overvalued, the Armenian dram was advantageously distinguished by a stable trajectory, and what is more important for the economy, by a certain predictability. The year 2022 brought new challenges to the national currency, which may continue in 2023 as well.

- How to ensure the financial security of the country in the conditions of continuous turbulence of the currencies of trade and economic partners, global uncertainty and unprecedented fierce competition between electronic currencies and national currencies.

- To what extent it is possible to insure the national economy in the process of formation of the unified financial market planned within EAEU in 2025, as a result of it and in the following years.

Key words: financial security, national currency, electronic currency, EAEU, financial risks

*Ներկայացվել է՝ 29.09.2022 թ.
Ընդունվել է՝ 13.10.2022 թ.*

Արինե Ստեփանյան

Եվրոպական համալսարանի ասպիրանտ

arin-step88@mail.eu

**ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ
ՍՊԱՍՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

Պետության կողմից վարվող ազգաբնակչության զբաղվածության քաղաքականության նպատակը կայուն աշխատաշուկային միտված պայմանների ստեղծումն է, որն իրականացվում է տնտեսության պետական կարգավորման և բնակչության սոցիալական պաշտպանության ճանապարհով: ՀՀ-ում գործող «Զբաղվածության մասին» օրենքում հստակ արձանագրվում է, որ «Զբաղվածության պետական քաղաքականության նպատակը, որպես տնտեսական քաղաքականության բաղադրիչի, անհրաժեշտ քանակով և որակով աշխատուժի պահանջարկի բավարարման և առկա աշխատուժի առաջարկի արդյունավետ իրացման ապահովումն է, որը պետք է դիտվի տնտեսական կայուն զարգացման հիմնական պայմաններից մեկը»²⁰:

Սակայն պետք է նաև արձանագրել, որ պետական շահերի տեսանկյունից ազգաբնակչության զբաղվածությունը լուծում է նաև սոցիալական խնդիր: Ուստի, զբաղվածության պետական քաղաքականության նպատակը, որպես սոցիալական պաշտպանության քաղաքականության բաղադրիչի, արժանապատիվ աշխատանքի միջազգայնորեն ընդունված չափանիշների երաշխավորումն ու պայմանների հետևողական ապահովումն է, որը պետք է դիտարկվի որպես երկրում սոցիալական լարվածության թուլացման հիմնական պայմաններից մեկը²¹:

Հետևաբար, պետությունը կարգավորելով աշխատուժի զբաղվածությունը, նպատակ է հետապնդում ապահովելու սոցիալական համերաշխությունը, ձգտելով ստեղծել նոր աշխատատեղեր, համալրել թափուր մնացած աշխատատեղերը, բարելավելով աշխատանքի վարձատրության գործող համակարգերը:

Մյուս կողմից, զբաղվածության քաղաքականություն վարելիս, պետությունը գործընկերային հարաբերությունների մեջ է մտնում տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, գործատուների, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպու-

²⁰ **Տե՛ս** Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը, հոդված 7, Եր. 2013:

²¹ Նույն տեղը:

թյունների, ինչպես նաև շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ²²: Այս նպատակով, յուրաքանչյուր տարի ներկայացվում է զբաղվածության կարգավորման պետական ծրագիր, որի նպատակը բնակչության կայուն և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումն է: Այն ուղղված է կայուն զբաղվածության ապահովմանը և ինքնազբաղվածության խթանմանը, աշխատանք փնտրողների, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց, երիտասարդների զբաղվածության մակարդակի բարձրացմանը, կայուն զբաղվածություն ապահովող պետական ծրագրերին գործատուների շահագրգիռ ներգրավվածությունը խթանելուն, «կրթություն-աշխատաշուկա» փոխառնչությունների խթանմանը, գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերը որակյալ մասնագետներով համալրելուն, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման շրջանակներում՝ անմրցունակ խմբերի արդյունավետ և կայուն զբաղվածության ապահովմանը²³:


Այս ամենի հիմքում ընկած է աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշռության և կառուցվածքային համապատասխանության կարգավորումը, որն իրականացվում է աշխատավարձի, ձեռնարկատիրական, ֆինանսավարկային, ներդրումային, հարկային, տարածքային զարգացման, կրթական, ժողովրդագրական և աշխատուժի տեղաշարժի քաղաքականությունների միջոցով:²⁴

Աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշռության կարգավորման համընդհանուր մոտեցումները մեր կողմից ներկայացվում են գրաֆիկական վերլուծության ճանապարհով, գնահատելով ակտիվ բնակչության գործազրկության մակարդակը՝ Ս, և սոցիալ-տնտեսական լարվածության փոփոխությունները (UNR- unrest), որպես լարվածություն: Երբ աշխատաշուկայում աշխատուժի առաջարկը (S) աճում է և այն չի բավարարվում, ապա ձևավորվում է ինչպես գործազրկության մակարդակի աճ, այնպես էլ ազգբանակչության շրջանում սոցիալ-տնտեսական լրացուցիչ լարվածություն (տե՛ս գծապատկեր 1.):

²² Նույն տեղը:

²³ Տե՛ս «Զբաղվածության կարգավորման 2022 թվ. պետական ծրագիր», ՀՀ կառավարության 2021 թվ. թիվ 1589-Լ որոշում:


²⁴ Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը, հոդված. 10, Եր. 201:



Գծապատկեր 1. Աշխատուժի առաջարկի ավելացմամբ պայմանավորված գործազրկության մակարդակի աճի ու սոցիալ-տնտեսական լարվածության ուժեղացումը:²⁵

Սակայն, նման իրավիճակը չի կարող երկարաժամկետ բնույթ կրել, քանի որ ի վերջո կհանգեցնի սոցիալական դժգոհությունների և անգամ ընդվզումների, ուստի պետությունը ձգտում է միջոցներ ձեռնարկել ավելացնելու զբաղվածության կարգավորման ուղղությամբ՝ փորձելով ավելացնել աշխատուժի պահանջարկը և դրանով մեղմել գործազրկության մակարդակը, լրացնել թափուր աշխատատեղերը, աջակցել անմրցունակ աշխատանքային խմբերին աշխատանքի տեղավորումը: Հետևաբար, երբ ազգբնակչության շրջանում արձանագրվում է աշխատուժի պահանջարկի (D) անկում (տե՛ս գծապատկեր 2.), ապա այն հանգեցնում է ինչպես գործազրկության մակարդակի իջեցմանը, այնպես էլ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական լարվածության թուլացմանը: Սակայն այս իրավիճակը նույնպես կարող է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի խոչընդոտներ ստեղծել, քանի որ աշխատուժի պահանջարկի նվազումը շուկայում կարող է վկայել տնտեսության պասիվության, և կայուն զարգացման անկումային ազդակների մասին:


²⁵ Գծապատկերներ 1-4-ը կազմել է հեղինակը:



Գծապատկեր 2. Աշխատուժի պահանջարկի կրճատմամբ պայմանավորված գործազրկության մակարդակի ու սոցիալ-տնտեսական լարվածության նվազումը:


Հետևաբար, զբաղվածության կարգավորման ոլորտում պետությունը կարևորում է աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշռության կարգավորումը, որը գործազրկության մակարդակի և ազգաբնակչության սոցիալ-տնտեսական բավարարվածության համատեքստում առաջարկում ենք ներկայացնել գծապատկեր 3-ով:

Գծապատկեր 3-ը ցույց է տալիս, որ զբաղվածության պետական կարգավորման ճանապարհով հավասարակշռելով աշխատուժի առաջարկն ու պահանջարկը, երկրում ստեղծվում է մի իրավիճակ, երբ գործազրկության մակարդակն (U_0) ու ազգաբնակչության սոցիալ-տնտեսական լարվածության աստիճանը (UNR_0) համարվում են չափավոր և գտնվում են ողջամիտ սահմաններում:



Գծապատկեր 3. Աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշիռ վիճակը՝ գործազրկության մակարդակի ու սոցիալ-տնտեսական լարվածության փոխառնչության համատեքստում:

Սակայն, զբաղվածության կարգավորման հարցում պետության դերակատարումը միայն աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշռության սահմանումը չէ, այլև ձգտելը ապահովելու սոցիալական պաշտպանվածություն, աշխատուժի առաջարկի արդյունավետ իրացում, դրանով իսկ նպաստելով գործազրկության կրճատմանը ($-\Delta U$) և ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը ($-\Delta UNR$): Ուստի, զբաղվածության կարգավորման ուղղությամբ պետության կողմից միջոցներ են ձեռնարկվում մեղմելու աշխատուժի շուկայական աճող առաջարկը նոր պահանջարկի կառուցվածքային վերափոխումների արդյունքում, որն էլ իր հերթին հանգեցնում է մի նոր՝ վերանայված կետում աշխատուժի առաջարկի ու պահանջարկի հավասարակշռմանը (տե՛ս գծապատկեր 4.):



Գծապատկեր 4. Աշխատուժի առաջարկի և պահանջարկի վերափոխված հավասարակշիռ վիճակը՝ պետության կողմից կարգավորիչ գործառույթներ իրականացնելիս:

Գծապատկեր 4-ը ցույց է տալիս, որ զբաղվածության կարգավորման ուղղությամբ պետության գործառույթները արդարացված են համարվում, քանի որ աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշռումը հանգեցնում է ինչպես գործազրկության մակարդակի նվազմանը (U_0 կետից U_1 կետ), այնպես էլ ազգաբնակչության սոցիալ տնտեսական լարվածության թուլացմանը (UNR_0 կետից UNR_1 կետ):

Հետևաբար, ՀՀ օրենսդրությամբ ամրագրված զբաղվածության գծով պետական քաղաքականությամբ աշխատուժի առաջարկի իրացման ապահովումն ու սոցիալական լարվածության թուլացումը պետք է գնահատվեն արդյունավետության տեսանկյունից, որը մեր կողմից առաջարկվում է իրականացնել ազգաբնակչության սոցիալ-տնտեսական լարվածության թուլացման և գործազրկության մակարդակի նվազման համադրելիության հենքով: Մեր կարծիքով, աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշռությունն ապահովելիս, երբ պետությանը հաջողվում է զուգահեռաբար ապահովել սոցիալ-տնտեսական լարվածության անկման առաջանցիկություն՝ գործազրկության մակարդակի նվազման համեմատ ($\Delta UNR / \Delta U > 1$), ապա արձանագրվում է զբաղվածության պետական քաղաքականության իրականացման արդյունավետություն: Իր հերթին,

ΔUNR -ուն առաջարկում ենք ներկայացնել ցուցանիշների համախմբով, որոնք են.

- վճարվող իրական աշխատավարձի աճը (ΔUNR_1),
- աշխատանքային պայմանների բարելավումը (ΔUNR_2),
- հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունման հնարավորության դրական փոփոխությունը (ΔUNR_3),
- երիտասարդ շրջանավարտների մասնագիտական աշխատանքի անցման արագությունը (ΔUNR_4),
- գործատուի կողմից աշխատողի կարերիայի աճին աջակցման ընդլայնումը (ΔUNR_5),
- քաղաքային և մարզային աշխատողների անվանական միջին աշխատավարձերի համահարթեցման դրական միտումը (ΔUNR_6),
- աշխատաշուկայում անմրցունակ անձանց ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրման աճը (ΔUNR_7),
- սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ընդլայնումը (ΔUNR_8),
- երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրման ընդլայնումը (ΔUNR_9),
- թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության ստացում և հավաքագրման գործընթացի ակտիվացումը (ΔUNR_{10}):

Ընդ որում, զբաղվածության կարգավորման գործիքակազմի կիրառման ճանապարհով ազգաբնակչության սոցիալական լարվածության թուլացման ուղղությունները, ելնելով երկրի տնտեսական զարգացման կոնկրետ իրավիճակից, կարող են փոփոխվել և ներկայացվել ո թվաքանակով: Այս առումով, զբաղվածության պետական կարգավորման արդյունավետությունը առաջարկում ենք գնահատել հետևյալ ցուցանիշով՝ $W = \Delta U / (\Sigma \Delta UNR_n)$, որը հնարավորություն է տալիս.

Առաջին, գնահատելու ազգաբնակչության սոցիալ-տնտեսական լարվածության մեղմացումը զբաղվածության կարգավորման առանձին ուղղությունների և գործիքների կիրառման ներագդեցության շնորհիվ:

Երկրորդ, աշխատուժի պահանջարկի բավարարման և առաջարկի հավասարակշռման համատեքստում արձանագրելու գործազրկության և ազգաբնակչության սոցիալ-տնտեսական սպասումների փոխառնչության շրջանակը:

Երրորդ, պետական շահերի տեսանկյունից վերհանելու սոցիալական համերաշխության խաթարման ռիսկերը, որոնք ձևավորվում են

պետության կողմից զբաղվածության անարդյունավետ կարգավորման արդյունքում²⁶:

Զբաղվածության կարգավորման ուղղությունները ներկայացվում են նաև Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող ամենամյա Գլոբալ մրցունակության ինդեքսում, որտեղ սկսած 2019 թվականից՝ 100 բալային համակարգով 138 երկրների համար իրականացվում է վարկանիշավորում: Այդ համաթվի բաղկացուցիչ խմբերն են.

Առաջին խումբ.. աշխատանքի շուկայի ճկունությունը,

Երկրորդ խումբ. տաղանդների/ուղեղների օգտագործման արդյունավետությունը:

Ընդ որում, աշխատաշուկայի ճկունությունն արտահայտող ցուցանիշներն են.

- աշխատանքային հարաբերությունների ոլորտում գործատուի հետ համագործակցությունը,
- աշխատավարձի ամրագրման ճկունությունը,
- ընդունման և ազատման փորձը,
- հարկման ազդեցությունը աշխատանքի խթանման վրա:

Իսկ տաղանդների/ուղեղների օգտագործման արդյունավետությունն արտահայտող ցուցանիշների խումբն է.

- աշխատավարձը և արտադրողականությունը,
- պրոֆեսիոնալ կառավարման հենքը,
- երկրի ուղեղներ ներգրավելու կարողությունը,
- կանանց մասնակցության աստիճանը աշխատանքի շուկայում²⁷:

Քանի որ ներկայացվող ինդեքսի առավելագույն արժեքը սկսած 2019 թվականից գնահատվում է 100 միավոր, ապա համաձայն Համաշխարհային բանկի զեկույցի, ՀՀ աշխատաշուկայի արդյունավետությունը կազմում է 66%: ՀՀ աշխատաշուկայի արդյունավետության 2019 թ. ինդեքսի վերլուծությունը ցույց է տալիս, որ գրանցված բացասական արդյունքները փոխկապակցված են երկրորդ խմբի ցուցանիշների հետ (տե՛ս աղյուսակ 1): Հետևաբար, ՀՀ-ում զբաղվածության կարգավորման առաջնահերթություններից է համարվում աշխատաշուկայում հարկման ազդեցությունը աշխատանքի խթանման վրա, գործատուների հետ հարաբերությունների թույլ կապի սերտությունը, աշխատանքի ընդունման և ազատման սուբյեկտիվիզմը:

²⁶ Տե՛ս Ստեփանյան Ա., «Զբաղվածության պետական կարգավորման արդյունքների գնահատման հիմնախնդիրները» Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում, Երևան 2022, [http://www.iatc.am/pub/Journal_1\(9\)_2022.pdf](http://www.iatc.am/pub/Journal_1(9)_2022.pdf):

²⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վերլուծություն և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ, «Տնտեսագետ» հրատարակչություն, Եր. 2021, էջ 33, 244 էջ:

Աղյուսակ 1.
ՀՀ աշխատաշուկայի արդյունավետության համաթվի բաղադրիչները 2020 թվականին²⁸

Ցուցանիշ	Միավոր	Դիրքը 138 երկրների շարքում
Ճկունություն	75	25
Աշխատանքային հարաբերությունների ոլորտում գործատուի հետ համագործակցություն	47	40
Աշխատավարձի ամրագրման ճկունություն		52
Ընդունման և ազատման փորձ	36	26
Հարկման ազդեցությունը աշխատանքի խթանման վրա	27	56
Ուղեղների օգտագործման արդյունավետություն	71	79
Աշխատավարձ և արտադրողականություն	58	62
Պրոֆեսիոնալ կառավարման հենք	65	71
Երկրի՝ ուղեղներ ներգրավելու ունակություն	84	92
Կանանց մասնակցությունը աշխատաշուկայում	77	91

Զբաղվածության արդյունավետ կարգավորումը չի կարող տեղի ունենալ միայն պետության կողմից կիրառվող գործիքների միջոցով, այլ պահանջում է այդ գործընթացին առնչվող բոլոր շահառուների համատեղ աջակցություն: Եթե պետական գերատեսչական մարմինները կարողանում են զբաղվածության կարգավորման վրա ներազդել ուղղակի կամ անուղղակի ճանապարհով, ապա ոչ պետական կառույցներն ու կազմակերպությունները հիմնականում ուղղակիորեն են ներազդում զբաղվածության կարգավորման վրա:

Այսպես, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակում և կյանքի է կոչում զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագիր, որն ուղղակի ներազդեցություն ունի ոլորտի վրա: Էկոնոմիկայի նախարարությունը իրագործում է ներդրումային ծրագրեր, դրանով ստեղծելով նոր աշխատատեղեր: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ձեռնարկատիրական ոլորտին տրամադրելով հարկային արտոնություններ և արձակուրդներ, անուղղակիորեն օժանդակում է զբաղվածության կարգավորմանը:

²⁸ **Տե՛ս** Armenia Competitiveness Index,
<https://tradingeconomics.com/armenia/competitiveness-index>.

Դրան զուգահեռ, ոչ պետական կառույցները հիմնականում ուղղակիորեն են ազդում այդ գործընթացի վրա: Այսպես, մասնավոր ոլորտում գործատուները ձգտում են աշխատուժի վերապատրաստմանն այնպես, որ անձնակազմը յուրացնի մասնագիտական ոլորտում տեղի ունեցող դինամիկ փոփոխությունները, հակառակ դեպքում, կորցնելով մրցունակ աշխատանքային կարողությունները, այն կդառնա գործազուրկ: Զբաղվածության կարգավորմանը գործատուները աջակցում են նաև ներդրումային ճանապարհով նոր աշխատատեղերի բացման պարագայում: Կարևորվում է նաև պետական-մասնավոր հատվածների գործընկերային և փոխշահավետ համագործակցության ընդլայնումը, երբ հաշմանդամներին աշխատանքի ընդունելիս կազմակերպություններին տրամադրվում են հարկային զիջումներ, բուհի շրջանավարտներին համարելով որպես առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող մարդիկ, տրվում են սոցիալական արտոնություններ և այլն:

Զբաղվածության կարգավորմանը աջակցում են նաև ինքնակառավարման մարմինները, որոնց դերակատարումն էականորեն բարձրանում է արդի ժամանակահատվածում: Այսպես, ելնելով ՀՀ-ում զբաղվածության իրավիճակային վերլուծության ամփոփ արդյունքներից՝ 2022 թվականի համար առանձնացվում են հետևյալ հիմնախնդիրները.


- Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի քրոնիկ անհամապատասխանությունը, գործազրկության բարձր մակարդակը,
- աշխատաշուկայի տարածքային անհամամասնություններով պայմանավորված առանձին տարածաշրջաններում գործազրկության և զբաղվածության մակարդակների էական տարբերությունների առկայությունը,
- գյուղական և քաղաքային համայնքների զարգացման տարբերությունների և միգրացիայի բարձր տեմպերի աշխատաշուկայի և զբաղվածության վրա բացասական ազդեցության մեղմումը²⁹:

Հետևաբար, տեղական ինքնակառավարման մարմինները ձգտում են աջակցել մարզերում նոր աշխատատեղերի ձևավորմանը, պայմաններ ստեղծել գյուղական վայրերում աշխատատեղերի պահպանմանը, միջոցներ ձեռնարկել մասնագետների արտահոսքի կանխարգելման, մարզերում ազգաբնակչության սոցիալ-տնտեսական մակարդակի համահարթեցման ուղղություններով:

Այսպիսով, զբաղվածության կարգավորման շահառուների շրջանակը ընդարձակ է. որոնք ունեն իրենց առանցքային գործառույթները (տե՛ս գծապատկեր 1):

²⁹ Տե՛ս Զբաղվածության կարգավորման 2022 թվ. պետական ծրագիր, ՀՀ կառավարության 2021 թվ. թիվ 1589-Լ որոշում, կետ 27:


Այս առումով հիմնախնդիր է առաջանում գնահատելու զբաղվածության կարգավորման արդյունավետությունը՝ հենց շահառուների տեսանկյունից: Այս գործընթացը որոշակիորեն բարդանում է նրանով, որ տարբեր շահառուներ տարբեր չափման միավորներով են արձանագրում զբաղվածության կարգավորման արդյունքները և այդ առումով դժվարություններ են ստեղծվում մեկ ինտեգրալային ցուցանիշով գնահատելու զբաղվածության կարգավորման արդյունավետությունը: Այսպես, պետական գերատեսչական մարմինները գործազրկության մակարդակը ներկայացնում են %-րով, տեղական ինքնակառավարման մարմինները նոր աշխատատեղերի ստեղծումը ներկայացնում են մարդ/աշխատատեղ ցուցանիշով, սոցիալական աջակցություն ցուցաբերող կազմակերպությունները սոցիալապես խոցելի խմբերին աշխատանքի տեղավորելիս կիրառում են աշխատանքի տեղավորվածների թվաքանակ կամ վերապատրաստվողների համակազմ ցուցանիշները, իսկ գործատուները ներդրումների ճանապարհով ձեռնարկատիրության շրջանակն ընդլայնելիս ու նոր աշխատատեղեր բացելիս օգտագործում են դրամական չափիչներ:



Գծապատկեր 1. Զբաղվածության կարգավորման շահառուների շրջանակը և հիմնական գործառնությունները³⁰

³⁰ Կազմել է հեղինակը:

Տարբեր չափիչներով զբաղվածության կարգավորման արդյունքների գնահատումները հնարավոր է ներկայացնել չափայնության մեկ հարթությունում և դրանք դարձնել համադրելի, եթե կիրառվեն հարաբերական մեծություններ: Դիցուք, առաջարկում ենք զբաղվածության կարգավորման արդյունքները ներկայացնել գործակիցներով, որոնք ներառվում են կարգավորման արդյունավետությունը բնութագրող մեկ ինտեգրալային ցուցանիշում և ներկայացնում են շահառուների սպասումների իրագործման աստիճանը: Այս նպատակով առաջարկում ենք իրականացնել հետևյալ քայլերը (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Զբաղվածության կարգավորման արդյունավետության ինտեգրալային ցուցանիշի հաշվարկման քայլերը³¹

Առաջին քայլով հստակեցվում է զբաղվածության կարգավորման շահառուների շրջանակը և նրանց սպասումային ուղղությունները այդ գործընթացից:

Երկրորդ քայլով ներկայացվում են յուրաքանչյուր շահառուի սպասումներն արձանագրող ցուցիչները, որոնք կարող են ունենալ չափման տարբեր միավորներ (տե՛ս աղյուսակ 1): Այնուհետև այդ ցուցիչները բերվում են գործակցային տեսքի, դրանով իսկ ապահովելով համադրելիության դաշտ: Ընդ որում, գործակիցների հաշվարկային արդյունքները գտնվում են 0-ից մինչև 1.0 ինտերվալում, և որքան մեծանում է գործակ-

³¹ Կազմել է հեղինակը:

ցային շեղումը 1.0-ից, այնքան ցածր է գնահատվում շահառուների սպասումների փաստացի իրագործման աստիճանը՝ և հակառակը:

Երրորդ քայլով, յուրաքանչյուր շահառուի սպասելիքների իրագործման փաստացի աստիճանի շեղումները համախմբվում են մեկ ինտեգրալային ցուցանիշում և դրանով իսկ գնահատվում է զբաղվածության կարգավորման համապարփակ արդյունավետության ցուցանիշը՝ շահառուների սպասումների տեսանկյունից:

Աղյուսակ 2.

Զբաղվածության կարգավորման արդյունավետության ցուցանիշ³²

n	Շահառուներ	Սպասումներ	Սպասումների ցուցիչ	Զեռքբերումներ	Անբարենպաստ շեղումներ (ΔD)
1.	Պետություն	գործազրկության մակարդակ	8%	7%	0,875
2.		սոցիալական լարվածության մակարդակ	15%	19%	0,789
3.		սոցիալական համերաշխության խաթարման ռիսկ	22%	25%	0,880
4.		աշխատավարձի հարկման արտոնություններով խթանում	9%	6%	0,667
5.	Մասնավոր ոլորտ	նոր աշխատատեղերի ստեղծում	25 000 տեղ	23 000 տեղ	0,920
6.		որակավորման դասընթացների ունկրնդիրներ	34 000 մարդ	31 000 մարդ	0,912
7.		աշխատատեղերի ընդլայնմանը ուղղված բիզնես ներդրումներ	850 մլրդ դրամ	640 մլրդ դրամ	0,753
8.	Ինքնակառավարման	սեզոնային զբաղվածության համահարթեցում	42%	30%	0,714
9.	մարմիններ	աշխատուժի արտահոսքի կանխարգելում	90%	70%	0,778
10.		մարզերում նոր աշխատատեղերի բացման	55%	35%	0,636

³² Կազմել է հեղինակը:

		ծրագրերի ներդրում			
11.	Սոցիալական	սոցիալական խոցելի խմբերի վերաորակավորում	70%	65%	0,920
12.	աջակցման կառույցներ	սոցիալական խոցելի խմբերի աշխատանքի տեղավորում	95%	60%	0,631
Ընդամենը ΣΔD					9,475
Զբաղվածության կարգավորման արդյունավետություն (ΣΔD)/n					9,475/12 = 0,789

Հետևաբար, առաջարկվող զբաղվածության կարգավորման արդյունավետության ինտեգրալային ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$F = (\Sigma \Delta D) / n$$

որտեղ՝

F – զբաղվածության կարգավորման արդյունավետության մակարդակ՝ շահառուների սպասակադրումների իրագործման տեսանկյունից,

ΔD – զբաղվածության կարգավորման շահառուների սպասումներից փաստացի ձեռքբերումների գործակցային շեղումները,

n – սպասումները չափող ցուցիչների քանակը:

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Շահառուների սպասումների տեսանկյունից զբաղվածության կարգավորման արդյունավետության ցուցանիշի հաշվարկը հնարավորություն է տալիս.

Առաջին, համապարփակ ներկայացնելու զբաղվածության կարգավորման շահառուների սպասումների իրագործման փաստացի աստիճանը և գնահատելու կարգավորիչ գործիքների կիրառումից ստացվող ձեռքբերումները:

Երկրորդ, իրականացնելու զբաղվածության վարքագծային գործունային վերլուծություն, պարզելով կարգավորման յուրաքանչյուր ուղղության ազդեցությունը զբաղվածության մակարդակի փոփոխությունների վրա:

Երրորդ, ապահովելու զբաղվածության կարգավորման տարաբնույթ արդյունքների միասնական չափայնություն, որը հնարավորություն է ընձեռնում համադրելի դարձնելու պետություն-մասնավոր ոլորտ փոխհամագործակցված կարգավորիչ գործառույթների արդյունքները և դրանով իսկ վերհանելու զբաղվածության կարգավորման ուժեղ և թույլ կողմերը:

Հիմնարարներ. զբաղվածության պետական կարգավորում, զբաղվածության կարգավորման արդյունավետություն, զբաղվածության կարգավորման շահառուներ, շահառուների սպասումներ

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը, Եր. 2013:
2. Զբաղվածության կարգավորման 2022 թվ. պետական ծրագիր», ՀՀ կառավարության 2021 թվ. թիվ 1589-Լ որոշում:
3. Ստեփանյան Ա. «Զբաղվածության պետական կարգավորման արդյունքների գնահատման հիմնախնդիրները» Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում, Երևան 2022, [http://www.iatc.am/pub/Journal_1\(9\)_2022.pdf](http://www.iatc.am/pub/Journal_1(9)_2022.pdf):
4. Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վերլուծություն և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ, «Տնտեսագետ» հրատարակչություն, Եր. 2021, էջ 33, 244 էջ:
5. Armenia Competitiveness Index, <https://tradingeconomics.com/armenia/competitiveness-index>

Арине Степанян

аспирант Европейского университета

ПРОБЛЕМЫ ОЦЕНКИ ЭФФЕКТИВНОСТЬ РЕГУЛИРОВАНИЯ ЗАНЯТОСТИ В РАМКАХ ОЖИДАНИЙ БЕНЕФИЦИАРОВ

Целью проводимой государством политики занятости насильно является создание устойчивых условий, ориентированных на рынок труда, что реализуется посредством государственного регулирования экономики и социальной защиты людей. В действующем в РА Законе «О занятости» четко указано, что «Целью государственной политики занятости, как составной части экономической политики, является обеспечение удовлетворения спроса на рабочую силу в необходимом количестве и качестве и эффективное осуществление доступное предложение рабочей силы, которое следует считать экономическим одним из основных условий устойчивого развития.

В статье предлагается методика оценки эффективности регулирования занятостис точки зрения ожиданий бенефициаров, что дает возможность. Во-первых, всесторонне представить фактическую степень выполнения ожиданий бенефициаров регулирования занятости и оценить достижения, полученные в результате применения инструментов регулирования.

Во-вторых, провести поведенческий функциональный анализ занятости, выявив влияние каждого направления регулирования на изменение уровня занятости. В-третьих, обеспечить унифицированное измерение различных результатов регулирования занятости, что дает возможность сравнивать результаты межкооперативных регулирующих функций государства и частного сектора и тем самым выделять сильные и слабые стороны регулирования занятости.

Ключевые слова: государственное регулирование занятости, эффективность регулирования занятости, бенефициары регулирования занятости, ожидания бенефициаров

Arine Stepanyan

PhD student at European University

EFFECTIVENESS OF EMPLOYMENT REGULATION ASSESSMENT ISSUES WITHIN BENEFICIARY EXPECTATIONS

The purpose of the state employment policy is to create stable conditions, focused on the labor market, which is implemented through state regulation of the economy and social protection of people. The Law “On Employment” in force in the Republic of Armenia clearly states that “The goal of the state employment policy, as an integral part of economic policy, is to ensure that the demand for labor force is met in the required quantity and quality and the effective implementation of the available supply of labor force, which should be considered an economic one. of the basic conditions for sustainable development.

The article proposes a methodology for assessing the effectiveness of employment regulation in terms of the expectations of beneficiaries, which makes it possible. First, to comprehensively present the actual degree of fulfillment of the expectations of the beneficiaries of employment regulation and evaluate the achievements obtained as a result of the application of regulation instruments. Secondly, to conduct a behavioral functional analysis of employment, identifying the impact of each direction of regulation on changing the level of employment. Third, to provide a unified measurement of the various results of employment regulation, which makes it possible to compare the results of inter-cooperative regulatory functions of the state and the private sector, and thereby highlight the strengths and weaknesses of employment regulation.

Keywords: state regulation of employment, efficiency of employment regulation, beneficiaries of employment regulation, expectations of beneficiaries

Ներկայացվել է՝ 24.09.2022 թ.

Ընդունվել է՝ 18.10.2022 թ.

Հրաչյա Դանիելյան

Հյուսիսային համալսարան, տնտեսագիտության թեկնածու
hro@rambler.ru

**ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ**


Ռիսկերի ձևավորումը էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի գործունեության անբաժանելի մասն են կազմում: Ընդ որում, դրանց առաջացումը ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Օբյեկտիվ պատճառներ թվին են դասվում օրենսդրական բացթողումները, կիրճեռանվտանգության ապահովման ոչ պատշաճ մակարդակը, միջազգային գործընկերների պարտավորությունների կատարման թերացումները: Էլեկտրոնային վճարային համակարգերում ռիսկեր կարող են ձևավորվել այնպիսի սուբյեկտիվ պատճառներով, ինչպիսիք են վճարային գործիքների անարդյունավետ կիրառումը, գործարքներ իրականացնող կազմակերպությունների իրացվելիության կտրուկ անկումները, վճարային գործարքների մենեջմենթի թերացումները և այլն:³³

Չնայած այն հանգամանքի, որ մասնագիտական գրականության մեջ էլեկտրոնային վճարային գործարքների և էլեկտրոնային փողերի կիրառման ռիսկերը ներկայացվում են իրենց բազմազանությամբ, այնուամենայնիվ դրանք կարելի է խմբավորել: Ընդհանուր առմամբ, էլեկտրոնային վճարահաշվարկային գործարքների ռիսկերը կարելի է խմբավորել չորս ուղղություններով, ինչպիսիք են ֆինանսականը, գործառնականը, կիրճեռանվտանգությունը և համակարգայինը, որոնք շխթայապես փոխկապակցված են և ներազդում են միմյանց վրա (տե՛ս գծապատկեր 1.):

Քննարկման առիթ են հանդիսանում նաև վճարահաշվարկային համակարգերի կառավարման գործառնությունների իրականացնողների իրավասությունները և դրանց գործունեության առաջնայնությունները: Հարցադրումներ են կատարվում, թե ինչպես պետք է բաշխվեն ռիսկերի կառավարման ոլորտները կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների միջև:³⁴

³³ **Տե՛ս Ковалева Ю.В.**, Проблемы рисков электронных денег, Вестник ЮУрГУ, #10, 2007, стр. 33-37

³⁴ **Տե՛ս Солунаянов А.А.**, Управление рисками платежных систем и их минимизация, //Вестник финансовой академии, #1, 2008, стр. 140-149



Գծապատկեր 1. Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի գործունեության ռիսկերի դասակարգումը³⁵

Վճարային համակարգերը կարող են հանդիսանալ համակարգային ռիսկերի առաջացման և տարածման միջվայր: Համակարգային ռիսկեր կարող են առաջանալ, երբ տեխնիկական վթարի հետևանքով խափանվում է համակարգի սահուն գործունեությունը, կամ, երբ համակարգի մասնակիցներից մեկը անկարող է կատարել իր ֆինանսական պարտավորությունները, և համակարգում բացակայում են հատուկ մեխանիզմներ, որոնք կարող են սահմանափակել տեխնիկական վթարի կամ ֆինանսական խնդիրների բացասական հետևանքների շրջայական տարածումը այլ մասնակիցների վրա: Վճարահաշվարկային համակարգերի կայունությունը ապահովելու համար անհրաժեշտ է, որ ՀՀ ԿԲ-ն ապահովի, որ համակարգերի կազմակերպման և գործունեության կանոնները չնպաստեն ֆինանսական և գործառնական ռիսկերի գոյացմանը կամ տարածմանը, համակարգում սահմանված լինեն ռիսկերի կառավարման մեխանիզմներ և վճարային համակարգի մասնակիցները ունենան հնարավորություններ և խթաններ զսպելու հնարավոր ռիսկերը:³⁶

³⁵ Կազմվել է հեղինակը:

³⁶ Տե՛ս ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, www.cba.am, //Վճարահաշվարկային համակարգերի հսկողությունը (oversight)՝ որպես ՀՀ կենտրոնական բանկերի նորագույն ֆունկցիա

Ռիսկերի վերահսկողության տեսանկյունից վճարային համակարգերը տարանջատվում են երկու հիմնական տեսակների՝ համակարգային և հանրային նշանակություն ունեցող համակարգեր՝ կախված երկրի ֆինանսական համակարգի կայունության վրա դրանց ունեցած ազդեցության չափից: Փորձը ցույց է տալիս, որ երկրների մի մասը հսկողության շրջանակում ներառում են միայն համակարգային նշանակություն վճարահաշվարկային միջավայրը: Իսկ, օրինակ Եվրամիությունը ներառում է ոչ միայն համակարգային նշանակություն ունեցող համակարգերը, այլ նաև հանրային նշանակություն ունեցող մանրածախ վճարային համակարգերը:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից համակարգային նշանակություն վճարահաշվարկային ոլորտի համար սահմանվում են հետևյալ չափանիշները.

ա) տվյալ համակարգով է իրականացվում ներհանրապետական վճարումների համախառն ծավալի 75%-ը և ավելին,

բ) համակարգով իրականացվում են հիմնականում խոշորածավալ վճարումներ,

գ) տվյալ համակարգը կիրառվում է որպես ֆինանսական շուկայում գործառնությունների վերջնահաշվարկի իրականացման համակարգ:

Իսկ համակարգային նշանակություն չունեցող վճարահաշվարկային համակարգերը բավարարում են հետևյալ չափանիշներին.

- տվյալ համակարգը երկրի միակ մանրածախ վճարումների համակարգն է,

- համակարգով իրականացվում է ներհանրապետական վճարումների համախառն ծավալի 25%-ից ավելին

- համակարգով իրականացվում է տվյալ տեսակի (օրինակ՝ վճարային քարտերով ներհանրապետական վճարումներ, վճարային քարտերով միջազգային վճարումներ, առանց հաշվի բացման միջազգային վճարումներ, այլ) վճարումների ծավալի 30%-ը և ավելին: Հաշվի առնելով մասնավոր տրանսֆերտների զգալի մասնաբաժինը երկրի ՀՆԱ-ում՝ առանց հաշվի բացման միջազգային դրամական փոխանցումների դեպքում նշված շեմը սահմանվում է 10% և ավելին:³⁷

ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգով միայն 2019 թվականին կատարվել է 20007,7 մլրդ դրամի վճարում, և քանակով 3,7 մլն գործարք (վճարային հաղորդագրություն), ապահովելով համապատասխանաբար 30,3% և 6,8% աճ՝ նախորդ տարվա համեմատ:³⁸

³⁷ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք, //Վճարահաշվարկային համակարգեր, www.cba.am

³⁸ Տե՛ս Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2020, //ՀՀ կենտրոնական բանկ, Էջ 39

Այս առումով կարևորվում է վճարահաշվարկային գործառնական ակտիվությունը բնութագրող ցուցիչների վերլուծությունը: Վճարումների ժամային բաշխվածության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ վճարահաշվարկային համակարգում որ 2019 թվականին օրական կտրվածքով վճարումների քանակի պիկ է հանդիսանում 10:30-11:00 ժամային միջակայքը, որի ընթացքում կատարվել են վճարումների քանակի 19,7%-ը: Վճարումների ծավալային պիկը նույնպես գրանցվել է 10:30-11:00 ժամային միջակայքում, կազմելով օրվա ընթացքում վճարումների ընդհանուր ծավալի 23,9%-ը: Քանի որ պիկային միջակայքը բաժին է ընկնում օրվա առաջին կեսին, ապա որոշակիորեն մեղմվում են կենտրոնացման հետ կապված ռիսկերը, քանի որ խնդիրների առաջացման դեպքում մասնակիցները տվյալ օրում վճարումներ կատարելիս անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու ժամանակ են ունենում:³⁹

ՀՀ ում գործող վճարահաշվարկային համակարգի թողունակության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեկ ժամվա ընթացքում կատարած վճարումների քանակի առավելագույն ցուցանիշները 2019 թվականին 2018-ի նկատմամբ նվազել են: Առավելագույն ժամային ցուցանիշը 2019 թվականի ընթացքում կազմել է 4996 վճարում ժամում (2018 թ` 5990): Պիկ ժամը գրանցվել է 11:00- 12:00-ի միջակայքում` կազմելով այդ օրվա վճարումների քանակի 23,1%-ը, ծավալի` 7,9%-ը:


Չնայած էլեկտրոնային վճարումների ընդհանուր քանակի աճի, 2019 թվականին ժամում վճարումների քանակը բնութագրող որոշակի խոշոր սահմանաչափերի, ինչպես նաև ժամում վճարումների հոսքի մեծությունը բնութագրող ցուցանիշների նվազում է նկատվում: Մասնավորապես, դիտարկման արդյունքում գրանցվել է ժամում 4300 և ավել վճարումների ցուցանիշ` 1,8%, 3500-4300 վճարում/ժամ` 5,6%, 2500-3500` 15,6% ընդհանուր գործառնական ժամերում: 2019 թվականին նախորդ տարվա համեմատ վճարումների օրական առավելագույն ցուցանիշը ՀՀ վճարահաշվարկային համակարգում նվազել է` կազմելով 23187 վճարում/օր, երբ 2018 թվականին պիկը կազմել է 28549:⁴⁰ Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների, ժամում 3500 և ավելի վճարումների մասնաբաժինը 2019 թվականի կտրվածքով տարեկան կազմել է 7,4% (տե՛ս գծապատկեր 2):

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի մշտադիտարկման արդյունքների, 2019 թվականին էլեկտրոնային վճարումների համակարգի հասանելիության վրա ազդեցություն ունեցող էական (1 ժամ և ավելի տևողությամբ) միայն մեկ միջադեպ է գրանցվել` 1 ժամ 15 րոպե տևողությամբ, որի արդյունքում

³⁹Տե՛ս Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2020, //ՀՀ կենտրոնական բանկ, էջ 40

⁴⁰ Տե՛ս Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2020, //ՀՀ կենտրոնական բանկ, էջ 40

ԷՎՀ գործառնական հասանելիությունը տարվա համար կազմել է 99,9%: Միջադեպի արդյունքում թողունակության վրա ազդող վճարային հաղորդագրությունների կուտակումներ չեն եղել և համակարգի գործառնական օրը փակվել է սահմանված ժամին:⁴¹



Գծապատկեր 2 ՀՀ վճարահաշվարկային համակարգում վճարում/ծամ առավելագույն քանակն ըստ 2019 թ. ամիսների:⁴²

Կարևորվում է նաև ոչ միայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից վճարահաշվարկային ռիսկերի համակարգային կառավարումը, այլև վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից ռիսկերի ճանաչման և զսպման մեխանիզմների կիրառումը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վճարահաշվարկային կազմակերպությունների ակտիվներում գերակշռում են դրամական միջոցները (տե՛ս աղյուսակ 1), որոնց շարժի գծով ռիսկերը առնչվում են օրական վճարումների և դրամական միջոցների սկզբնական մնացորդի հարաբերակցությանը, ինչպես նաև վճարահաշվարկային համակարգում սեփական ռեսուրսներով վճարումների ապահովվածությանը:

⁴¹ Տե՛ս Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2020, //ՀՀ կենտրոնական բանկ, Էջ 41

⁴² Տե՛ս Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2020, //ՀՀ կենտրոնական բանկ, Էջ 40

Աղյուսակ 31

ՀՀ-ում գործող վճարահաշվարկային կազմակերպությունների ակտիվների կառուցվածքը (%)⁴³

Ակտիվներ	Արմենիան Քարդ ՓԲԸ	Թել Սել ԲԸ	Իզի Փեյ ՍՊԸ	Մոբի Դրամ ՓԲԸ	Իդրա մ ՍՊԸ	Ստակ Փրոցե- սինգ ՓԲԸ
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>						
Հիմնական միջոցներ	21,1	7,9	12,6	8,1	5,6	14,1
Ոչ նյութական ակտիվներ	17,3	22,8	19,2	23,4	7,1	9,3
Տված փոխառու- թյուններ	7,2	4,7	5,8	3,9	7,9	2,2
Հետաձգված հարկային ակտիվներ	0,3	1,1	2,3	0,8	0,2	3,4
<i>Ընթացիկ ակտիվներ</i>						
Զավարտված գործարքներ	4,5	3,9	3,2	8,7	19,2	6,7
Առևտրային դեբիտորներ	2,9	1,8	4,2	4,8	3,3	1,8
Պաշարներ	3,2	4,1	2,8	2,6	2,5	4,1
Դրամական միջոցներ	43,5	53,7	49,9	47,7	55,2	58,4

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ռիսկերի կառավարումը նպատակ է հետապնդում, որ վճարային համակարգի ենթակառուցվածքները.

ա/ աշխատեն անխափան, արդյունավետ և ապահովեն կայուն գործունեություն,

բ/ նվազեցնեն և վերահսկեն այն ռիսկերը, որոնք առաջանում են վճարային համակարգի առանձին մասնակցի կողմից իր պարտավորությունների վերջնահաշվարկը ապահովելու անկարողության հետևանքով և

⁴³ Կազմված է կազմակերպությունների կողմից հրապարակված հաշվետվությունների հիման վրա:

որոնք կարող են տնտեսությունում ցնցումների տարածման պատճառ հանդիսանալ;

զ/ ապահովեն տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ զարգացման այնպիսի մակարդակ, որը կարող է բավարարել զարգացող տնտեսության կարիքները վճարահաշվարկային բնագավառում:⁴⁴

Բացի վերոնշյալ հիմնական նպատակներից, ՀՀ ԿԲ-ն կարևորում է նաև հանրության վստահության ամրապնդումը անկանխիկ վճարումների նկատմամբ՝ սահմանելով այն որպես հսկողության օժանդակ նպատակ: Տվյալ նպատակը կապված է ՀՀ-ում բնակչության լայն խավերի կողմից անկանխիկ վճարային գործիքների և ծառայությունների կիրառման ավանդույթներ ստեղծելու և ազգային արժույթի նկատմամբ վստահությունն ամրապնդելու ՀՀ ԿԲ գլոբալ քաղաքականության հետ:⁴⁵

Հաշվի առնելով էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի գործունեությանը առնչվող վերը շարադարված ռիսկերը, մեր կողմից առաջարկվում է ռիսկերի բազմագործոնային գնահատման մոտեցում, հիմնված նպատակադրումների և դրանցից բխող բացասական շեղումների վրա: Այս դեպքում իրականացվում են հետևյալ քայլերը.

- ներկայացվում են վճարահաշվարկային գործունեության կայունությունը ապահովող նպատակադրումներ, յուրաքանչյուրի գծով սահմանելով չափայնության թույլատրելի շեմ,
- գործունեության փաստացի արդյունքները համադրվում են դրանց գծով սահմանված նպատակադրումների հետ, և ստացված շեղումները արտահայտվում են հարաբերական մեծություններով՝ գործակիցներով,
- ռիսկի աստիճանի համալիր մոտեցմամբ գնահատման նկատառումով հաշվարկվում է բոլոր գործոնների գծով գործակցային համախմբված շեղումը,
- որքան ստացված գործակիցները հեռանում են 1,0-ից, այնքան դրանց գծով ներկայացվող վճարահաշվարկային գործառույթները համարվում են ռիսկային:

Այսպես, աղյուսակ 2-ում ներկայացված են էլեկտրոնային վճարահաշվարկային գործառույթներին առնչվող նպատակադրումները և դրանցից գործակցային շեղումները: Ընդ որում, հաշվի առնելով ռիսկային բոլոր գործոնները, համալիր գնահատումների սկզբունքով ստացվել է համա-

⁴⁴ Տե՛ս ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, www.cba.am, //Վճարահաշվարկային համակարգերի հսկողությունը (oversight)՝ որպես ՀՀ կենտրոնական բանկերի նորագույն ֆունկցիա

⁴⁵ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի կողմից վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի հսկողության իրականացման հայեցակարգ, Եր. 2018 թ., էջ 8

խմբված բացասական շեղման 0,1611 գործակից, կամ վճարահաշվարկային գործունեության ռիսկի աստիճանի 16,11%, որը կարելի է համադրել նախորդ տարիների հետ, նպատակ ունենալով պարզելու ռիսկայնության փոփոխման աստիճանը:

Սակայն, երբ դիտարկվում են համախմբված ռիսկը ձևավորող առանձին գործոնները, ապա պարզ է դառնում, որ առավելագույն բացասական շեղումներ է արձանագրվել կրիպտոլիզացիայի և օրական էլեկտրոնային վճարումներ/դրամական միջոցների սկզբնական մնացորդ հարաբերակցություն գծով, որոնք առավել շեղումներն են ունեցել 1,0-ից՝ համապատասխանաբար կազմելով 0,67 և 0,33 (տե՛ս աղյուսակ 2): Ուստի, վերլուծվող ժամանակահատվածում վճարահաշվարկային համակարգի գործունեության հենց այս ոլորտներն են համարվում առավել ռիսկային, որը և մենեջմենթին ազդակ է հաղորդում կոնկրետ ոլորտային ռիսկերի մեղմանն ուղղված կառավարչական որոշումներ կայացնելիս:

Աղյուսակ 2.

Էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության ռիսկերի բազմագործոնային գնահատմը⁴⁶

Գործոններ	Նշանակում	Նպատակադրում	Փաստացի	Շեղման գործակից
Քարտային սպասարկման ծառայությունների ծածկույթ	R1	80%	65%	0,19
Կրիպտոլիզացիա	R2	3%	5%	0,67
Կիրճեռանվտանգություն	R3	98%	91%	0,07
Վճարումների ժամային միջին բաշխվածություն	R4	3200	3400	0,06
Վճարային համակարգի թողունակություն	R5	4300	4100	0,05
Վճարային գործարքների հասանելիություն	R6	100%	99%	0,01
Վճարումների և դրամական միջոցների սկզբնական մնացորդի հարաբերակցություն	R7	0,3	0,4	0,33
Սեփական ռեսուրսներով վճարումների ապահովվածություն	R8	85%	82%	0,03
Կազմակերպությունների իրազեկիության մակարդակ	R9	110%	105%	0,04
Համախմբված շեղում	ΣR/n	x	x	0,1611

⁴⁶ Կազմված է հեղինակի կողմից:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեությունում առաջարկվող ռիսկերի գնահատման մոեցումները հնարավորություն են տալիս.

Առաջին, իրականացնելու վճարահաշվարկային գործունեության ռիսկայնության բազմագործոնային վերլուծություն, հաշվի առնելով ոչ միայն ոլորտի ֆինանսատնտեսական, գործառնական, այլև կիբեռանվտանգային ու համակարգային ռիսկերը:

Երկրորդ, կիրառել ռիսկերի գնահատման ինչպես սինթետիկ, այնպես էլ ըստ առանձին գործոնային անալիտիկ մոտեցումներ, որի դեպքում բացահայտվում են էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության վրա բացասաբար ազդող առավել ռիսկային գործառնություններ:

Երրորդ, ներդնել ռիսկերի չափայնության միասնական համակարգ, բոլոր գործոնների գծով կիրառելով շեղումների գործակիցներ, որով հնարավորություն է ընձեռնվում գնահատումների դեպքում համադրելի դարձնելու չափման տարբեր միավորներով հանդես եկող ռիսկային գործոնները և կատարելու համեմատական վերլուծություններ ինչպես ժամանակային, այնպես էլ էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության ներդրոտային կտրվածքով:

Հիմնաբառեր. կրիպտոակտիվ, էլեկտրոնային փող, վճարահաշվարկային ռիսկեր, կիբեռանվտանգություն, վնարումների արագություն, վնարումների ապահովվածություն

Օգտագործված գրականություն

1. **Ковалева Ю.В.**, Проблемы рисков электронных денег, Вестник ЮУрГУ, #10, 2007, стр. 33-37.
2. **Солунаянов А.А.**, Управление рисками платежных систем и их минимизация, //Вестник финансовой академии, #1, 2008, стр. 140-149.
3. ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, www.cba.am, //Վճարահաշվարկային համակարգերի հսկողությունը (oversight)՝ որպես ՀՀ կենտրոնական բանկերի նորագույն ֆունկցիա:
4. ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք, //Վճարահաշվարկային համակարգեր, www.cba.am
5. Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2020, //ՀՀ կենտրոնական բանկ:
6. ՀՀ կենտրոնական բանկի կողմից վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի հսկողության իրականացման հայեցակարգ, Եր. 2018 թ:

ВОПРОСЫ ОЦЕНКИ РИСКА В ЭЛЕКТРОННО ПЛАТЕЖНЫХ СИСТЕМАХ

Грачья Даниелян

Северный университет, кандидат экономических наук

Формирование риска является неотъемлемой частью работы электронных платежных систем. При этом их возникновение имеет объективные и субъективные причины. К объективным причинам относятся пробелы в законодательстве, недостаточный уровень защиты от киберрисков, невыполнение обязательств международных партнеров. Риски в электронных платежных системах могут формироваться по таким субъективным причинам, как неэффективное использование платежных инструментов, резкие падения ликвидности транзакционных организаций, недостатки в управлении платежными операциями и др.

В статье предложены методы оценки рисков при учете электронных платежей, которые позволяют:

Во-первых, провести многофакторный анализ рискованности расчетно-платежной деятельности с учетом финансовых, экономических, операционных, а также кибербезопасности и системных рисков любого сектора.

Во-вторых, применять как синтетический, так и аналитический подходы оценки рисков по отдельным факторам, при этом выявляются наиболее рискованные функции, негативно влияющие на деятельность по учету электронных платежей.

В-третьих, внедрить единую систему измерения рисков, применяя коэффициенты отклонений для всех факторов, что дает возможность сравнивать факторы риска с разными единицами измерения в случае оценок и проводить сравнительный анализ как почасовой, так и электронной тарификации деятельности. Внутри-секторный разрез.

Ключевые слова: криптоактив, электронные деньги, расчетные риски, кибербезопасность, скорость оплаты, безопасность платежей

ISSUES OF RISK ASSESSMENT IN THE ELECTRONIC ACCOUNTING SYSTEMS

Hrachya Danielyan

Northern University, PhD in Economics

Risk formation is an integral part of the operation of electronic payment systems. Moreover, their occurrence has objective and subjective reasons. Objective reasons include legislative gaps, inadequate level of cyber risk protection, and failure to fulfill the obligations of international partners. Risks in electronic payment systems can be formed due to such subjective reasons as inefficient use of payment instruments, sharp drops in the liquidity of transaction organizations, shortcomings in the management of payment transactions, etc.

The article proposes methods of risk assessment in electronic payment accounting activities, which enable:

First, to carry out a multi-factor analysis of the riskiness of payment accounting activities, taking into account the financial, economic, operational, as well as cyber security and systemic risks of any sector.

Secondly, to apply both synthetic and analytical approaches of risk assessment according to individual factors, in which case the most risky functions that negatively affect the electronic payment accounting activity are revealed.

Thirdly, to introduce a unified risk measurement system, applying coefficients of deviations for all factors, which provides an opportunity to compare the risk factors with different units of measurement in the case of assessments and to perform comparative analyzes of both hourly and electronic billing activities. intra-sector cut.

Keywords: crypto asset, electronic money, settlement risks, cyber security, payment speed, payment security

Ներկայացվել է՝ 02.09.2022 թ.

Ընդունվել է՝ 28.10.2022 թ.

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈԻԼՈՒՄ**

Անի Խեչոյան

Հյուսիսային համալսարանի իրավագիտության և հասարակագիտական
առարկաների ամբիոնի վարիչ, ի.գ.թ

a.khechoyan@rambler.ru

Մարինե Հակոբյան

Հյուսիսային համալսարանի մագիստրանտ

m.hakobyan85@mail.ru

Միջազգային հանրությունը բազմիցս է բախվում ժողովուրդների իրավունքների կոպիտ ոտնահարումների՝ զանգվածային վայրագությունների, բռնությունների, էթնիկ զտումների, ցեղասպանության դեպքերի: Նման ոտնահարումներից և միջազգային անվտանգությանը սպառնացող մարտահրավերներից խուսափելու համար մարդասիրական միջամտության կիրառման բազմաթիվ դեպքերը հաճախ միանշանակ չեն ընդունվել միջազգային հանրության կողմից:

«Մարդասիրական միջամտություն» հասկացության իրավական հիմքերի շուրջ քննարկումներն ու բանավեճերը հատկապես ակտիվացան Կոսովոյում ՆԱՏՕ-ի իրականացրած գործողություններից և հատկապես Ռուսաստանի Դաշնության կողմից Ուկրաինայում իրականացված գործողություններից հետո, ինչը առաջինի կողմից որակվեց որպես «մարդասիրական միջամտություն»:

«Մարդասիրական միջամտություն» միջազգային իրավական եզրույթի ավանդական իմաստը միջազգային իրավունքում ընկալվել է որպես մարդասիրական նպատակով հարկադիր ռազմական միջամտություն: Սեփական բնակչության պաշտպանությունն առաջին հերթին պետության պատասխանատվությունն է, իսկ միջազգային հանրության կողմից պաշտպանելու պատասխանատվության իրականացումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ թիրախային պետությունը ի վիճակի չէ կամ չի ցանկանում պաշտպանել իր բնակչությանը:

Իրավական բաղադրիչի տեսանկյունից գուցե թվա, թե ամբողջ գործընթացը միջազգային իրավունքում հստակեցված է. վաղ նախազգուշացմամբ հնարավոր է կանխել մարդկությանը սպառնացող մի շարք մարտահրավերներ, մինչդեռ, մեր կարծիքով, կոնկրետ տարածաշրջանում որոշ դերակատարների շահերի, հետաքրքրությունների առկայությունը կամ բացակայությունը կարող են առավել որոշիչ դեր խաղալ և ձախողել վաղ նախազգուշացման արդյունավետությունը:

Վաղ նախազգուշացման հաջողելու դեպքում հաջորդ առանցքային նշանակություն ունեցող քայլը ստեղծված իրավիճակում կանխարգելող

միջոցների ճիշտ ընտրությունն է: Երբ վաղ նախագգուշացման փուլում համակարգված ինֆորմացիայի հիման վրա իրավասու կողմերը որոշեն գործել դա դեռ չի ենթադրում խնդրի կարգավորում: Առանձնակի նշանակություն ունի ճիշտ գործիքակազմի ընտրությունը, քանի որ, հակառակ դեպքում, հնարավոր են զարգացման անկանխատեսելի սցենարներ՝ բացասական հանգուցալուծմամբ: Ռազմավարական մակարդակում դա նշանակում է.

1. իմանալ, թե երբ և որտեղ ներդնել հակամարտությունների կանխարգելման սահմանափակ ռեսուրսներ՝ հիմնված ռիսկերի և դրական ազդեցության ներուժի գնահատման վրա,

2. ունենալ գիտելիքներ այն մասին, թե հակամարտությունների կանխարգելման գործիքակազմում որ գործիքներն օգտագործվեն տարբեր իրավիճակներում և փուլերում, և ինչ համադրությամբ,

3. իմանալ, թե գործառնական մակարդակում ինչպես օգտագործել հակամարտությունների կանխարգելման տարբեր գործիքներ՝ առավելագույն արդյունքի հասնելու համար: Հետևաբար, եթե անգամ վաղ նախագգուշացումը լիարժեքորեն կազմակերպված է, ինչպես նաև հաղթահարված է քաղաքական կամքի բացակայության մարտահրավերը՝ սա դեռ չի նշանակում, որ կանխարգելմանն ուղղված քայլերն արդյունավետ կլինեն:

Միջոցների վերաբերյալ փոխըմբռնման ձևավորումը ևս կարող է խոչընդոտներ առաջացնել, իսկ մշտապես նույն գործիքակազմի ընտրությունը տարբեր իրավիճակների համար չի երաշխավորում նույն արդյունքը: Հաշվի առնելով, որ գոյություն չունեն զարգացող հակամարտությունների համընդհանուր լուծումներ, հակամարտության կանխարգելման արդյունավետ ռազմավարության ձևավորումը պահանջում է հիմնական դերակատարների, հակամարտությունների շարժիչ ուժերի և հնարավոր մեղմացող գործոնների, ինչպես նաև սրացման հնարավոր ազդակների կամ հնարավոր պահերի ավելի խորը վերլուծություն:

Հետևաբար յուրաքանչյուր դեպք ենթադրում է մի շարք գործոնների, հանգամանքների ուսումնասիրություն, վերլուծություն, ապա դրա հիման վրա առավել նպատակահարմար գործիքակազմի ընտրություն: Գործիքակազմի ընտրությունն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ կանխարգելման պատասխանատվության հաջողելու համար այս գործընթացում անհրաժեշտ է մի շարք հանգամանքների ուսումնասիրություն, ճիշտ ռազմավարության մշակում ու իրականացում: Կանխարգելման պատասխանատվության արդյունավետությունը, ըստ էության, պայմանավորված է սպառնալիքների կանխարգելման համար անհրաժեշտ որոնողությունների իրականացման պատրաստակամությամբ, դրանք իրականացնելու քաղաքական կամքով:

Բոլոր պետությունները, ստորագրելով ՄԱԿ կանոնադրությունը, պարտավորվել են հարգել մարդու իրավունքներն ու ազատությունները, ուստի յուրաքանչյուրի գործունեության հիմքում նախ պետք է ընկած լինեն

համամարդկային արժեքները: Ցանկացած միջամտության իրականացման դեպքում նախ և առաջ կարևոր է գնահատել դրա արդյունքը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Միջազգային հանցագործությունների շարքում առավել ծանր հանցագործություն է համարվում ցեղասպանությունը, հետևաբար միջազգային իրավունքի տեսանկյունից առավել կարևոր ենք համարում ցեղասպանություն հանցագործության վերաբերյալ միջազգային փաստաթղթերի և դրանց կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը:

1944թ. «Առանցքի երկրների տիրապետությունը բռնազավթված Եվրոպայում» գրքում Ռաֆայել Լեմկինի առաջին անգամ կիրառած «ցեղասպանություն» եզրույթի և այն որպես հանցագործություն որակող նրա մի շարք գաղափարների հիման վրա ձևավորվեց ու ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում 1948թ. դեկտեմբերի 9-ին միաձայն ընդունվեց «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան: Կոնվենցիայի ընդունումից հետո այդ եզրույթը շատ արագ մտավ քաղաքական և առօրյա բառապաշար, սակայն անգամ միջազգային հանրությունը՝ միջազգային հարաբերություններում առանցքային դերակատարություն ունեցող կազմակերպության՝ ՄԱԿ-ի գլխավորությամբ, ձախողել է մարդկության դեմ կատարվող ամենավտանգավոր հանցագործության դեմ պայքարն ու հաճախ լիարժեքորեն չի կատարում դրան առնչվող գործառնությունները: Հետևաբար խիստ արդիական է այն հարցը, թե ինչու նման կարևորություն ունեցող կոնվենցիայի կիրառումը բխվում է լուրջ, հաճախ՝ անհաղթահարելի խոչընդոտների: Պատճառը նույնն է, ինչ միջազգային հարաբերություններում դժվար կարգավորվող այլ երևույթների, մասնավորապես, հակամարտությունների կարգավորման գործընթացների դեպքում է¹:

Ինչպես հայտնի է, միջազգային հարաբերություններում մի շարք հարցերի կարգավորման գործընթացների հանգուցալուծումները շատ հաճախ ձգձգվում են առանձին, հատկապես՝ քաղաքական և իրավական բաղադրիչների համադրման բարդությունների պատճառով:

Քանի որ Կոնվենցիայի ընդունման ժամանակահատվածում նմանատիպ այլ մարդկության դեմ ուղղված հանցագործությունները և պատերազմական հանցագործությունները ուղղակիորեն կապվում էին պատերազմի ժամանակահատվածի հետ /միայն 2002թ. Միջազգային քրեական դատարանի ստեղծման կապակցությամբ այս սահմանափակումը հաղթահարվեց և մարդկության դեմ կատարված հանցագործությունների դեպքում հանվեց պատերազմական ժամանակահատվածով պայմանա-

¹ Տե՛ս Մանուկյան Ս., «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի կիրառման հնարավորություններն ու դժվարությունները, Հայկական Քաղաքագիտական Հանդես 1(15) 2021, էջ 28:

վորված սահմանափակումը/, վտանգ կար, որ նույնը կարվի նաև ցեղասպանության դեպքում: Մակայն Կոնվենցիայի առաջին հոդվածը սահմանեց, որ «ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք /պայմանավորվող կողմերը/ պարտավորվում են կանխարգելել և պատժել»²: Դա փաստում է, որ այն կարող է իրականացվել ցանկանած իրավիճակում՝ խաղաղության, ներքին խռովության, քաղաքացիական պատերազմի, միջազգային զինված հակամարտության կամ այլ պայմաններում: Թերևս ամենաազդեցիկ նշանակությունն ունեցավ այն հանգամանքը, որ այդ շրջանում դեռևս թարմ էին տպավորությունները հրեաների նկատմամբ իրագործված բռնություններից, որոնք տեղի էին ունեցել ոչ միայն պատերազմի ընթացքում, այլ նաև դրանից առաջ: Այս երկու հասկացություններն էլ կիրառություն գտան Երկրորդ աշխարհամարտից հետո նացիստական հանցագործների նկատմամբ Նյուրնբերգում կազմակերպված միջազգային դատավարությունների ժամանակ: Նացիստական կուսակցության պարագլուխները դատապարտվեցին հենց պատերազմական հանցագործությունների և խաղաղության դեմ հանցագործությունների մեղադրանքով, սակայն քանի որ դրանք ամբողջովին չէին նկարագրում նացիստների կողմից իրականացված հանցանքը, ներմուծվեց ևս մեկ հանցագործության տեսակ՝ մարդկության դեմ կատարված հանցագործություն:

Յուրաքանչյուր պետություն պարտավոր է ազգային օրենսդրությունում ներդնել մեխանիզմներ, որոնք նպաստելու են իր տարածքում կատարված ցեղասպանության մեղավորներին պատժելուն և ունի սեփական տարածքում ցեղասպանական գործողություններ թույլ չտալու պարտավորություն: Եթե որևէ պետության տարածքում տեղի է ունենում ցեղասպանություն, ապա անկախ պետական իշխանությունների ներգրավվածության աստիճանի, նրանց կարող է մեղադրանք առաջադրվել հանցագործությունը չկանխելու համար:

Ակնհայտ է, որ «ցեղասպանություն» երևույթի սահմանումը պետք է ունենա այլ հանցագործություններից դրա տարանջատման հատկանիշ: Դա մարդկային այս կամ այն խումբը մասնակիորեն կամ լիովին ոչնչացնելու մտադրությունն է: Ակնհայտ է, որ տարանջատող հատկանիշի առկայությունը պարտադիր է հանցագործության որևէ տեսակ առանձնացնելու համար: Մակայն պարզ է նաև, որ օգտագործված հատկանիշը անհրաժեշտ է դարձնում ցեղասպանության մտադրությունը փաստարկված և հանգամանորեն հիմնավորող ապացույցների ներկայացում: Բնական է, որ յուրաքանչյուր հանցագործ փորձում է քողարկել արարքը, և այդ պայման-

² Տե՛ս Զեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժի մասին կոնվենցիա, ընդ.09.12.1948. www.arlis.am/վերջինայցելությունը՝ 15.04.2022

ներում, հանցագործության մտադրությունն ապացուցելը չափազանց դժվար գործ է դառնում: Իհարկե, երբեմն ցեղասպանություն նախաձեռնողները պարզորոշ հայտարարում են թիրախային խմբի ոչնչացման նպատակադրումը: Օրինակ, 1904թ. հարավային Աֆրիկայում բնակվող հերերոների ոչնչացումը միանշանակ ձևով հռչակվեց գերմանական գաղութային զորքերի հրամանատար գեներալ Ֆոն Թրոպայի հայտարարության մեջ: Ռուանդայում 1994թ. իրականացված ցեղասպանության ժամանակ հուրուզիայները ռադիոյով հաղորդում էին զոհերի գտնվելու վայրերը և կոչանում նրանց հայտնաբերել և ոչնչացնել, քանի որ նրանք պատկանում էին թուրքի ցեղին³: Այնուամենայնիվ, այդ հանցագործությունը կատարողները փորձում են խուսափել հանցավոր ապացույցներ թողնելուց:

Թուրքական կառավարությունը տասնյակ տարիներ պնդում է, որ 1915թ. մեկ ու կես միլիոն հայերի բնաջնջումը ցեղասպանություն չէր, այլ Առաջին համաշխարհային պատերազմի արդյունք է, որի ընթացքում տեղի են ունեցել խռովություններ, անկարգություններ և միգրացիա քաղաքացիական պատերազմ և հայերի զոհերը հենց տեղի ունեցածի հետևանք են⁴: Նրանք շեշտադրում են գրավոր և տարբերակներով գուրկ փաստաթղթի բացակայությունը՝ հրաժարվելով ընդունել մտադրության առկայությունը: Մեկ միանշանակ փաստաթղթի բացակայությունն են շեշտադրում նաև Հոլոքոստը ժխտողները: Ահա թե ինչու վերջին շրջանում մտադրության առկայությունը փորձ է արվում հիմնավորել ոչ թե փաստաթղթային հիմքով, այլ տեղի ունեցածի հետևանքների վերլուծությամբ: Կոնվենցիայի կիրառման մեկ այլ դժվարություն է զոհերի թվի խնդիրը, որը բխում է «մասամբ ոչնչացնելու մտադրություն» ձևակերպումից:

Մարդկության պատմության ընթացքում եզակի դեպքեր կարելի է նշել, երբ ցեղասպանությունների հետևանքով խմբերն ոչնչացել են ամբողջությամբ: Հետևաբար միանգամայն տրամաբանական էր Կոնվենցիայի քննարկման ժամանակ Նորվեգիայի պատվիրակի առաջարկը, ով շեշտեց, որ «ցեղասպանություն կատարելու համար չկա անհրաժեշտություն սպանել խմբի բոլոր անդամներին»: Հարավսլավիայի պատվիրակությունը երկրորդեց այդ առաջարկը, նշելով, որ «ցեղասպանության հիմնական բնութագիրն ընկած է խմբի վրա հարձակում գործելու մտադրության մեջ»: Դա կարևոր նկատառում էր, հակառակ պարագայում Կոնվենցիան ուղղակի անհնար կլիներ գործարկել, քանի որ ցանկացած ցեղասպանությունից հետո էլ աշխարհի ինչ որ մասում կպահպանվեին զոհ

³ Տե՛ս Պետրոսյան Գ. Միջազգային քրեական իրավունք, ԵՊՀ հրատարակչություն, 2021, էջ 144:

⁴ Տե՛ս Մանուկյան Ս., «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու նպատակով մասին կոնվենցիայի կիրառման հնարավորություններն ու դժվարությունները», Հայկական Քաղաքագիտական Հանդես 1(15) 2021, էջ 32:

ազգի որոշ թվով ներկայացուցիչներ, ինչը կհերքեր «ամբողջական» ոչնչացման փաստը: Մինչդեռ, ոճրագործները, ծրագրելով ցեղասպանությունը, հնարավորություն են ունենում բնաջնջել միայն թիրախային խմբի իրենց համար հասանելի հատվածը: Նույնիսկ մեկ մարդու սպանությունը խումբը ոչնչացնելու մտադրությամբ, կարող է բնորոշվել ցեղասպանություն, քանի որ այդ անհատը խմբի մաս է կազմում:

Հարկ է նաև արձանագրել, որ խմբի մասնակի կամ ամբողջական ոչնչացման խնդիրը վերաբերում է ոչնչացման մտադրությանը, այլ ոչ կատարված արարքին⁵: Հետևաբար Կոնվենցիան կարող է գործադրվել ցեղասպանության իրականացման փորձի մեղադրանքով, եթե առկա է մտադրությունը: Իհարկե, գոհերի թիվը կարող է լինել այդ մտադրության ապացույց, բայց այն բոլորովին էլ անհրաժեշտ նախապայման չէ: 1946թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի ընդունած բանաձևը նշում է. «Ցեղասպանությունը ամբողջական մարդկային խմբերի գոյության իրավունքի ժխտումն է, այն դեպքում, երբ սպանությունը դա անհատ մարդկային էակների կյանքի իրավունքի ժխտումն է»: Ցեղասպանության գոհերը թիրախավորվում են ոչ թե այն պատճառով, որ պատկանում են ինչ որ խմբի, այլ այն պատճառով, որ որևէ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի ներկայացուցիչներ են ի ծնե:

Կոնվենցիան ունի շատ կարևոր ևս մեկ առանձնահատկություն: 3-րդ հոդվածը սահմանում է, որ պետք է պատժվեն ոչ միայն նրանք, ովքեր ցեղասպանություն են կատարել, այլև ովքեր,

«ա) մասնակցել են ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրության,

բ) ուղղակի և հրապարակայնորեն հրահրել են ցեղասպանություն,

գ) արել են ցեղասպանություն կատարելու փորձը, և

դ) հանցակցություն ունեն ցեղասպանության կատարման մեջ»:

Ակնհայտ է, որ Կոնվենցիայում հստակորեն ձևակերպված է ամեն ինչ՝ ցեղասպանության սահմանումից մինչև պատժելի արարքները: Կոնվենցիայում սահմանված նպատակների իրագործման գլխավոր պայմաններից մեկը մեղավոր անձանց պատժելու գործուն մեխանիզմների գոյությունն է:

Թեև Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1951թ. հունվարի 12- ին, երբ նվազագույն անհրաժեշտ թվով՝ 20 երկրներ վավերացրեցին, սակայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամներից միայն երկուսը՝ Ֆրանսիան և Չինաստանը, դարձան պայմանագրի կողմ: Խորհրդային Միությունը վավերացրեց այն միայն 1954թ., Միացյալ Թագավորությունը՝ 1970թ., Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը՝ 1983թ., իսկ

⁵ Տե՛ս Պետրոսյան Գ., Միջազգային քրեական իրավունք, Ե. ԵՊՀ հրատարակչություն, 2021, էջ 148:

ԱՄՆ-ն՝ միայն 1988թ.: Կոնվենցիայի վավերացման ձգձգումը հանգեցրեց նրան, որ տևական ժամանակ այն չէր գործում և միայն 1990-ականներին սկսեց ավելի լայն կիրառություն ստանալ միջազգային իրավունքում: Ի պատասխան 1993թ. Խորվաթիայում և Բոսնիա և Հերցեգովինայում տեղի ունեցած զանգվածային վայրագությունների, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ստեղծեց նախկին Հարավսլավիայի հարցով միջազգային քրեական դատարանը (ICTY): Դա առաջին միջազգային քրեական տրիբունալն էր Նյուրնբերգից հետո և առաջինն էր ընդհանրապես, որի պարտավորությունների մեջ էր մտնում քննել ցեղասպանության դեպքերը: Հաջորդ քայլը 1998թ. Միջազգային քրեական դատարանի ստեղծումն էր Հռոմի ստատուտով: Որոշվեց հիմնել առաջին մշտական գործող միջազգային քրեական դատարանը: Հռոմի ստատուտի մշակման գործընթացը և Սուդանի նախագահի Օմար ալ-Բաշիրի՝ ԴարՖուրում իրականացված ցեղասպանության համար պատասխանատվության վերաբերյալ Միջազգային քրեական դատարանի կողմից քննվող գործը լրացուցիչ պարզաբանումներ մտցրեցին միջազգային իրավունքում ցեղասպանության հանցագործության վերաբերյալ:

Կարծում ենք, 2020թ. Ադրբեյջանի սանձազերծած պատերազմը միջազգային իրավունքի նորմերին համապատասխան իր ինքնորոշման իրավունքն իրացրած, սակայն միջազգային ճանաչում չունեցող Արցախի ժողովրդի նկատմամբ իրականացրած զանգվածային ոճրագործության օրինակ է: Զանգվածային ոճրագործությունների կանխարգելումն ունի առանցքային նշանակություն ոչ միայն պետական, այլև տարածաշրջանային անվտանգության և կայունության պահպանման տեսանկյունից: Կանխարգելումն առաջ է բերում ավելի քիչ մարտահրավերներ ու ռիսկեր, քան կոնկրետ դեպքին անմիջական արձագանքումը: Այն կարող է վերացնել կամ նվազեցնել ցեղասպանության կամ զանգվածային ոճրագործության այլ տեսակների պատճառները: Այդ տեսանկյունից Ցեղասպանության կանխարգելման հարցերով ՄԱԿ-ի գրասենյակի և «Պաշտպանելու պատասխանատվության» սկզբունքի հարցերով հանձնաժողովի համատեղ մշակած Շրջանակը կարող է ծառայել որպես արդյունավետ գործիք՝ զանգվածային ոճրագործությունների ռիսկերի գնահատման համար:

Ընդհանրապես, պետք է նշել, որ «Զանգվածային ոճրագործություններ» եզրույթը վերաբերում է միջազգայնորեն սահմանված երեք հանցագործությունների՝ ցեղասպանություն, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ և պատերազմական հանցագործություններ: Դրանք համարվում են մարդկության դեմ ուղղված առավել լուրջ հանցագործությունները, որոնք ունեն միջազգային հանցագործությունների կարգավիճակ: Միջազգային իրավունքի համաձայն, ցեղասպանությունը հանցագործություն է ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի անդամների նկատմամբ: Թեև այդ հանցագործության զոհերն անհատներ են, սակայն նրանք թիրախավորվում են այդ խմբերից որևէ մեկին պատ-

կանելու պատճառով: Մարդկության դեմ հանցագործությունները վերաբերում են այն գործողություններին, որոնք քաղաքացիական բնակչության դեմ ուղղված լայնածավալ կամ համակարգային հարձակումների մաս են կազմում: Ոչ քաղաքացիական անձինք ևս կարող են դառնալ այդ հարձակումների զոհ, սակայն որպեսզի տվյալ գործողությունը համարվի մարդկության դեմ ուղղված հանցագործություն, հարձակումների հիմնական թիրախը պետք է լինի քաղաքացիական բնակչությունը: Չանգվածային ոճրագործությունների կանխարգելումը կարևոր է ոչ միայն պետական անվտանգության, այլև տարածաշրջանային և միջազգային կայունության ու անվտանգության պահպանման տեսանկյունից: Այդ հանցագործությունները կարող են չսահմանափակվել ազգային սահմաններով և ներթափանցել հարևան երկրներ, օրինակ, ստեղծելով կամ մեծացնելով լարվածությունը կրոնական կամ էթնիկ բաժանարար գծերով:

Ի տարբերություն սառըպատերազմյան և վաղ հետսառըպատերազմյան շրջանների, ներկայումս ձևավորված են ավելի հստակ ռազմավարական շրջանակներ, մեխանիզմներ ու ինստիտուտներ (ՄԱԿ-ի գրասենյակները, Միջազգային քրեական դատարանը, զանգվածային ոճրագործությունների հարցերով զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունները և այլն)՝ զանգվածային ոճրագործությունները կանխարգելելու կամ դրանց համարժեք արձագանքելու նպատակով: Միաժամանակ, արդյունավետ կանխարգելումը կամ դեպքին անմիջական արձագանքումը, բացի քաղաքական կամքից, պահանջում են հակամարտության միջավայրի, դրա պատմության, ինչպես նաև այն գործոնների մանրակրկիտ ուսումնասիրություն, որոնք կարող են հրահրել զանգվածային ոճրագործություններ:

Ինչ վերաբերում է միջազգային հանցագործություն հանդիսացող ագրեսիային, ապա ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1974 թվականի դեկտեմբերի 14-ի ագրեսիայի N3314 բանաձևը սահմանում է, որ «Ագրեսիան պետության կողմից առաջինը զինված ուժի կիրառումն է, որն ուղղված է այլ պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ, որն անհամատեղելի է ՄԱԿ-ի կանոնադրության հետ»⁶: Չնայած այս բանաձևի ընդունմամբ առաջընթաց քայլ կատարվեց միջազգային խաղաղության և անվտանգության պաշտպանության գործում, սակայն այն իր հերթին ունի թերի և բաց կողմեր: Կարծում ենք, որ ավելի նպատակահարմար կլիներ, եթե 1974 թ. դեկտեմբերի 14-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված ագրեսիայի N3314 բանաձևում նշվեր՝ «Ագրեսիան պետության կողմից առաջինը զինված ուժի կիրառումն է, որն ուղղված է այլ պետու-

⁶ Տե՛ս Պետրոսյան Գ., Միջազգային քրեական իրավունք, Ե. ԵՊՀ հրատարակչություն, 2021, էջ214:

թյան ինքնիշխանության, տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ, որն անհամատեղելի է ՄԱԿ-ի կանոնադրության նպատակների և սկզբունքների հետ»:

Միջազգային իրավունքի գիտության մեջ ագրեսիայի ակտի առկայության համար էական է համարվում ոչ միայն պետության կողմից *առաջինը*՝ զինված ուժի կիրառման հանգամանքը, այլ նաև պարտադիր պայման՝ պետության կողմից առաջինը զինված ուժի կիրառումը՝ ուղղված մեկ այլ պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ: Այսինքն պարտադիր է համարում նաև *ագրեսիվ մտադրության չափանիշի* animus aggressionis առկայությունը⁷:

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1974 թ-ի դեկտեմբերի 14-ի ագրեսիայի N3314 բանաձևի ագրեսիայի հասկացությունը կոնկրետացվում է որպես ագրեսիա որակվող արարքների մոտավոր թվարկմամբ՝ անկախ նրանից տեղի է ունեցել պատերազմի հայտարարում, թե ոչ: Սա ևս էական պայման է, քանի որ ագրեսիա հանցագործության որակման համար պարտադիր չէ պատերազմ հայտարարելու կամ չհայտարարելու հանգամանքը:

Սահմանման 3-րդ հոդվածը նման գործողությունների թվին է դասում՝

ա) պետության զինված ուժերի ներխուժումը կամ ներթափանցումը այլ պետության տարածք կամ ցանկացած այլ ռազմական օկուպացիա՝ անկախ դրա ժամկետային բնույթից, որը հանդիսանում է այդպիսի ներխուժման կամ հարձակման արդյունք կամ այլ պետության տարածքի կամ դրա որևէ հատվածի անեքսիան, որը կատարվում է ուժի կիրառմամբ:

բ) մեկ պետության զինված ուժերի կողմից մեկ այլ պետության տարածքի ռազմական ներխուժումը կամ մեկ պետության կողմից ցանկացած տեսակի զենքի կիրառումը այլ պետության տարածքի նկատմամբ:

գ) մեկ պետության զինված ուժերի կողմից մեկ այլ պետության նավահանգիստների կամ ափերի շրջափակումը՝ բռնկադան:

դ) զինված ուժերի հարձակումը այլ պետության ցամաքային, ծովային, օդային ուժերի վրա:

ե) այլ պետության հետ կայացրած համաձայնությանը համապատասխան այդ պետության տարածքում գտնվող զինված ուժերի օգտագործումը, որը կատարվում է համաձայնության պայմանների խախտմամբ կամ ընդունող պետության տարածքում նման գորքերի պահումը, երբ համաձայնությունը դադարել է գործել:

⁷ Տե՛ս *Խլղաթյան Ա.* Ագրեսիայի հասկացությունը ժամանակակից միջազգային իրավունքում. Միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Ե., 2013, էջ 31:

զ) պետության գործողությունը, որը թույլ է տալիս, որ իր տարածքը, որը նա տրամադրել է այլ պետության, օգտագործվի երրորդ պետության նկատմամբ ագրեսիայի ակտիվ կատարման համար:

է) պետության կողմից կամ նրա անունից զինված խմբերի, խմբավորումների, անկանոն ուժերի կամ վարձկանների ուղղումը այլ պետության տարածք, որոնք այնտեղ իրականացնում են զինված ուժի կիրառման ակտեր այդ պետության դեմ, որոնք այնքան լուրջ բնույթ են կրում, որ հավասարաթեք են վերը թվարկած ագրեսիայի ակտերին կամ դրանցում մասնակցությանը: Բացի այդ, հարկ է նշել նաև, որ պետության կողմից զինված ուժի կիրառումը որակվում է որպես ագրեսիայի ակտ միայն այն դեպքում, երբ այն տեղի է ունենում միջազգային համակարտության ժամանակ, այսինքն կատարվում է մի պետության կողմից ընդդեմ մյուս պետության, անհամատեղելի է ՄԱԿ-ի Կանոնադրության հետ, այսինքն կատարվել է դրա նպատակների, սկզբունքների խախտմամբ:

1974թ դեկտեմբերի 14- ի ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված ագրեսիայի N3314 բանաձևի նախաբանում նշվում է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի բացարձակ իրավասությունը որոշելու ագրեսիայի ակտի առկայությունը: ՄԱԿ-ի Կանոնադրության 39 հոդվածի համաձայն՝ Անվտանգության Խորհուրդն է որոշում խաղաղությանը սպառնացող ցանկացած վտանգի առկայությունը և որոշում է կայացնում այն մասին, թե ինչպիսի միջոցներ պետք է ձեռնարկվեն 41 և 42 հոդվածներին համապատասխան միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման կամ վերականգնման համար:

Ամփոփելով ասվածը, հարկ ենք համարում ընդգծել, որ ժամանակակից միջազգային իրավունքը, ճանաչելով միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը՝ որպես մեծագույն արժեք և իրավական կարգավորման վերջնական նպատակ, բոլոր պետություններին պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել այդ արժեքները պաշտպանելու և դրանք վտանգող արարքների դեմ պայքարելու համար: Այս պարագայում ագրեսիայի դեմ պայքարում առավել արդյունավետ միջոցներից մեկը, կարծում ենք, հանդիսանում է կոլեկտիվ անվտանգության մասին բազմակողմ պայմանագրերի կնքումը, որոնց համաձայն նման պայմանագրի կողմ հանդիսացող ցանկացած պետության վրա հարձակումը դիտվում է նաև մնացած պետությունների վրա հարձակում և պարտավորեցնում է նրանց օգտագործել զինված ուժերը հավաքական ինքնապաշտպանության կարգով:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Միջազգային հանրությունը բազմիցս է բախվում ժողովուրդների իրավունքների կոպիտ ոտնահարումների՝ զանգվածային վայրագությունների, բռնությունների, էթնիկ զտումների, ցեղասպանության դեպքերի: Այդուհանդերձ, նման ոտնահարումներից և միջազգային անվտանգությանը սպառնացող մարտահրավերներից խուսափելու համար մարդասիրական

միջամտության կիրառման բազմաթիվ դեպքերը ևս միանշանակ չեն ընդունվել միջազգային հանրության կողմից: Որպես դրա վառ օրինակ կարելի է վկայակոչել Ռուսաստանի Դաշնության, այսպես կոչված, մարդասիրական միջամտության գործողությունները Ուկրաինայում: Նաև այս հանգամանքով պայմանավորված՝ կարծում ենք հատկապես արդիական է միջազգային հանցագործությունների պատժի և կանխարգելման վերաբերյալ նորմերի և դրանց կիրառման պրակտիկայի միջազգային իրավական ուսումնասիրությունը:

Հիմնաբաներ. միջազգային հանցագործություններ, մարդասիրական միջամտություն, ագրեսիա, ցեղասպանություն, մարդկության դեմ հանցագործություններ, պատերազմական հանցագործություններ, միջազգային քրեական դատարան

Օգտագործված գրականություն

1. **Մանուկյան Ս.,** «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի կիրառման հնարավորություններն ու դժվարությունները, Հայկական Քաղաքագիտական Հանդես 1(15) 2021, էջ 28:
2. Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժի մասին կոնվենցիա, www.arlis.am
3. **Պետրոսյան Գ.** Միջազգային քրեական իրավունք, ԵՊՀ հրատարակչություն, 2021, էջ 144:
4. **Մանուկյան Ս.,** «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի կիրառման հնարավորություններն ու դժվարությունները, Հայկական Քաղաքագիտական Հանդես 1(15) 2021, էջ 32:
5. **Խլղաթյան Ա.** Ագրեսիայի հասկացությունը ժամանակակից միջազգային իրավունքում. Միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Ե., 2013, էջ 31:

ПРОБЛЕМЫ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА МЕЖДУНАРОДНЫЕ ПРЕСТУПЛЕНИЯ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

Ани Хечоян
Марине Акопян

Статья посвящена международно-правовому анализу практики многочисленных нарушений прав народов, которые выражаются в виде массовых истреблений, этнических чисток, случаев геноцидов. Попытки принятия превентивных мер для недопущения таких нарушений также

неоднозначно были приняты со стороны международного сообщества: наглядным примером являются действия России на Украине под видом гуманитарной интервенции. Последние события делают особо актуальным изучение международно-правовой базы и практики применения конвенционных норм в сфере предупреждения международных преступлений со стороны государств и физических лиц.

Ключевые слова: международные преступления, гуманитарная интервенция, агрессия, геноцид, преступления против человечества, военные преступления, международный уголовный суд

PROBLEMS OF RESPONSIBILITY FOR INTERNATIONAL CRIMES AT THE PRESENT STAGE

Ani Khechoyan
Marine Hakobyan

The issue of the article are the serious violations of the international norms concerning the basic rights of people, by means of mass tortures, ethnic cleansings and genocide. The attempts to prevent such cases also have not been accepted as so : the latest example are the actions of Russia in Ukraine. The latest events in Ukraine make the study of the conventional basis and the practice of implementing of the norms concerning the prevention and punishment of international crimes more actual.

Keywords: international crimes, humanitarian intervention, aggression, genocide, crimes against humanity, war crimes, international criminal court.

Ներկայացվել է՝ 15.09.2022 թ.
Ընդունվել է՝ 26.10.2022 թ.

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ-ում**

Վահագն Պետրոսյան

Հյուսիսային համալսարանի դասախոս

v_petrosyan@gmail.com

Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված: Նշված սահմանադրական կարգավորման համատեքստում, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մեկ այլ կարգավորմամբ նախատեսվում է, որ պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին⁸:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 186-րդ հոդվածի 2-րդ մասի, համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման: Սահմանադրական նշված նորմի հիման վրա, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ պետության պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման՝ պետության պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է հետևյալը. «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից օրենքով պատվիրակված՝ պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով»:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի. «Պետության պատվիրակված լիազորություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»:

Մինչ օրս, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման որևէ կարգ սահ-

⁸Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 182, 2-րդ մաս:

մանված չէ, սահմանվել են միայն նորմատիվներ, այն էլ ընդամենը հետևյալ երկու պատվիրակած լիազորությունների իրականացման մասով.

- ⇒ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակած լիազորությունների իրականացման.
- ⇒ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների շրջանակներում պետության կողմից Երևանի քաղաքապետին, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի համայնքների ղեկավարներին պատվիրակած լիազորությունների իրականացման նպատակով սոցիալական աջակցության տարածքային բաժինների գործունեության կազմակերպման⁹:

Հարկ է արձանագրել, որ վերը նշված երկու բնագավառներում՝ համայնքների ղեկավարներին պատվիրակած լիազորությունների իրականացման մասով ընդունվել են ոչ թե պատվիրակած լիազորության կարգը սահմանող որոշումներ, այլև ծախսերի տարեկան նորմատիվները սահմանող որոշումներ:

Պատվիրակված լիազորությունները կարելի է բնորոշել որպես տեղական ինքնակառավարման մարմինների երկրորդ խմբին պատկանող լիազորություններ: Դրանք առավել քան բնորոշ են պետական մարմիններին, որոնք ենթակա են փոխանցման, կամ որ նույնն է, պատվիրակման, այդ լիազորությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Մեջբերվածի համատեքստում, արժանահավատ է դիտարկել այն հանգամանքը, որ ո՛չ ՀՀ Սահմանադրությունը և ո՛չ էլ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, չեն սահմանում այն հիմնական չափորոշիչները, որոնք հնարավորություն կտան որոշելու կամ գնահատելու պատվիրակված լիազորության իրականացման արդյունավետությունը: Այնուհանդերձ, ենթադրվում է, որ լիազորությունների պատվիրակման հարցը լուծելիս, պետությունը պետք է հաշվի առնի մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝

- Պատվիրակված լիազորությունից բխող ծառայությունների ծավալը և բնույթը.
- Համայնքի մակարդակով դրանց լուծման օպերատիվությունն ու արդյունավետությունը.
- Հասցեականությունը.
- Ծախսարդյունավետությունը, ծախսերի կրճատումը և այլն:

⁹ Ծանոթություն: Սոցիալական համալիր ծառայությունների գծով պատվիրակված լիազորությունը օրենքով ճանաչվել է ուժը կորցրած, սակայն նորմատիվները սահմանող համապատասխան ենթաօրենսդրական ակտը դեռևս ուժի մեջ է:

Փաստորեն, համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահվում են պատվիրակած լիազորություններ այն նպատակով, որպեսզի պետական մարմինների լիազորությունները իրականացվեն առավել արդյունավետ: Իրավաիրացնող և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ օրենքով համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակած լիազորությունները փոխանցվում են ոչ այդ նպատակով, այլ կարծես թե, պետական մարմինների լիազորությունները առավել «անարդյունավետ» իրականացնելու համար: Քանի որ, անիմաստ է խոսել կամ փաստել որևէ լիազորության իրականացման արդյունավետության մասին, երբ այդ լիազորությունը՝ պետության կողմից համապատասխան ֆինանսավորման բացակայության պայմաններում ընդհանրապես չի իրականացվում:

Տեղական ինքնակառավարման սկզբունքներից մեկն է՝ պետական մարմինների լիազորությունների փոխանցումը տեղական ինքնակառավարման մարմիններին, եթե այդ լիազորություններն առավել արդյունավետ կարող են իրականացվել համայնքներում¹⁰: Նշված սկզբունքը, ըստ էության, ՀՀ ներպետական օրենսդրությամբ սահմանվել է հետևյալ պատճառաբանությամբ, որպեսզի կառավարության կամ որ նույնն է, պետության համար սահմանված լիազորության պատվիրակման նպատակը, իր տեղը ունենա տեղական ինքնակառավարման իրավունքի իրացման համատեքստում, տվյալ պարագայում, հանդես գալով որպես տեղական ինքնակառավարման սկզբունք:

Ստացվում է այնպես, որ սահմանադրական և օրենսդրական կարգավորումների համատեքստում, ամրագրված է պետության կողմից լիազորությունների պատվիրակման՝ պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման իմպերատիվ պահանջ, ինչն ենթադրում է, կամ հենց այդպես էլ կա, որ համայնքների բյուջեների ձևավորման օրենքով ամրագրված աղբյուրների շարքում առանձնացված է պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից տրամադրվող հատկացումները:

Վերը նկարագրվածի շրջանակում, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ համայնքների բյուջեների նախագծերը կազմելիս Կառավարության կամ ֆինանսների նախարարության կողմից բյուջետային ծախսերի հաշվարկման համար սահմանված նորմերը և նորմատիվները համայնքների բյուջեներով նախատեսվող ծախսերի հաշվարկման ժամանակ կրում են խորհրդատվական բնույթ: Բացառություն են կազմում

¹⁰ Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ:

տեղական ինքնակառավարման մարմինների՝ պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի և պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրվող այլ նպատակային ծախսերի ֆինանսավորման դեպքերը¹¹:

Թե՛ «Տեղական ինքնակառավարման մասին», և թե՛ այլ օրենսդրական ակտերով, համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանված են բազմաթիվ պատվիրակված լիազորություններ, որոնց կազմակերպման և իրականացման նպատակով պետության կողմից չեն տրամադրվում համապատասխան ֆինանսական միջոցները: Տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունները թույլ են տալիս արձանագրելու, որ համապատասխան ֆինանսավորման բացակայության պայմաններում համայնքների ՏԻՄ-երը ուղղակիորեն չեն իրականացնում այդ լիազորությունները:

Մակայն կան պատվիրակված մի շարք լիազորություններ, որոնց մասով ֆինանսավորում համայնքներին չի տրամադրվում, բայց փաստացի համայնքների ՏԻՄ-երը իրականացնում են այդ լիազորությունները: Մասնավորապես՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ղեկավարի համար քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում սահմանված է հետևյալ պատվիրակված լիազորությունը. «սահմանում է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ»: Նշված պատվիրակված լիազորության իրականացման մասով պետությունը համայնքներին որևէ ֆինանսավորում չի հատկացնում, սակայն Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքները անխտիր իրականացնում են այս լիազորությունը՝ համայնքերում ձևավորված հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովների միջոցով:

Նույնը վերաբերում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին, որով համայնքի ղեկավարի համար հոդօգտագործման բնագավառում սահմանված է հետևյալ պատվիրակված լիազորությունը. «օրենքով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը»: Իրավակիրառ պրակտիկայում, համայնքների գերակշիռ մասը իրականացնում է

¹¹ **Տե՛ս** «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մաս:

այս լիազորությունը, սակայն իրենց սեփական միջոցների հաշվին, առանց պետական բյուջեից համապատասխան հատկացումների տրամադրման:

Վերը բերված վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված պատվիրակած լիազորությունների իրականացման հետ կապված առկա են մի շարք իրավախրաքնող խնդիրներ: Առաջին հերթին, այն պայմանավորված է պատվիրակած լիազորության իրականացման նպատակով պետության կողմից համապատասխան ֆինանսավորման բացակայությամբ: Հարց է առաջանում, եթե պետությունը՝ ի դեմս օրենսդրի, օրենքով համայնքի ՏԻՄ-երի համար պետք է սահմանի պատվիրակած լիազորություն, ու նույն պետությունը՝ ի դեմս կառավարության, չի իրականացնում այդ լիազորության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման տրամադրումը, ապա ինչու՞մ է կայանում այդ մարմիններին օրենքով այդպիսի լիազորություններով օժտելու իմաստն ու տրամաբանությունը: Նմանատիպ օրենսդրական պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում իրացվում է տեղական ինքնակառավարման համակարգի ներդրումից ի վեր:

Գտնում ենք, որ նման իրավակիրառական պրակտիկան, լի է բազմաթիվ բացասական իրավական հետևանքներով, քանի որ օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորություններով ծանրաբեռնելը և դրանց ֆինանսավորումը չապահովվելը, կարող է հանգեցնել իրավական անհավասարակշռության: Անկախ նրանից, այդ լիազորության համար պետությունը տրամադրել է կամ չի տրամադրել համապատասխան ֆինանսավորում, միևնույն է օրենքով նման լիազորության սահմանում ինչ որ տեղ «պարտավորեցնող» շարժառիթ է հանդիսանում համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների համար, մասնավորապես՝ համայնքի ղեկավարի համար:

Թերևս վերը նշվածը փաստվում է այն հանգամանքով, որ մի շարք պատվիրակած լիազորություններ, համայնքների ղեկավարների կողմից իրականացվում են պետական ֆինանսավորման բացակայության պայմաններում: Նման օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայից խուսափելու համար, անհրաժեշտ է կոնկրետ հայեցակարգային իրավական մոտեցում ցուցաբերել պատվիրակած լիազորությունների սահմանման և իրականացման նկատմամբ: Մասնավորապես՝ անհրաժեշտ է առաջնորդվել այն սկզբունքով, որ «եթե լիազորությունը պետք է սահմանվի օրենքով և դրանից բխող ֆինանսավորման բացակայության պայմաններում այդ նույն լիազորությունը չպետք է իրականացվի, ուրեմն անիմաստ է և ոչ իրավաչափ նման լիազորության սահմանումը և վերապահումը»:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է հետևյալը. «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման

նպատակով, ինչպես նաև պետության կողմից օրենքով պատվիրակված՝ պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով»:

Ընդհանուր առմամբ, միայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համայնքների ՏԻՄ-երի համար սահմանված են թվով «33» պատվիրակված լիազորություններ: Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների համար, բացի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից, պատվիրակված լիազորություններ են սահմանված նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ ընտրական օրենսգրքի սահմանադրական օրենքով, ՀՀ հողային օրենսգրքով, ջրային և բնապահպանական ոլորտը կարգավորող օրենսդրությամբ, գյուղատնտեսության, քաղաքաշինության և այլ ոլորտները կարգավորող տասնյակ օրենքներով: Փաստորեն, տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող օրենսդրության վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ օրենքով համայնքների ՏԻՄ-երին վերապահված պատվիրակված լիազորությունների մեծ մասը չի իրականացվում, քանի որ դրա իրականացման նպատակով պետությունը չի հատկացնում համապատասխան ֆինանսական միջոցներ և դրանց մասով կառավարության կողմից չեն սահմանվել լիազորությունների իրականացման կարգերը:

Գտնում ենք, որ օրենքով ՏԻՄ-երին պատվիրակված լիազորություններով օժտելը և դրանց իրականացման համար նախատեսվող ֆինանսական միջոցները չտրամադրելը, հանգեցնում է սահմանադրական սկզբունքի խախտման: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին»:

Սահմանադրական այս կարգավորման հիման վրա, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ամրագրել է այդ հիմնարար սկզբունքը և դրա հիման վրա համայնքի ղեկավարի համար սահմանել է տասնյակ պատվիրակված լիազորություններ: Սակայն, գործադիրը իշխանությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, չի իրականացնում թե՛ Սահմանադրությամբ, և թե՛ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված պարտավորությունները, այն է՝ պետական բյուջեից պատվիրակված լիազորության իրականացման նպատակով պարտադիր ֆինանսավորման հատկացումները և պատվիրակված լիազորության իրականացման կարգերի սահմանումը:

Հեղինակի կողմից կատարված ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համայնքի ղեկավարի համար սահմանված

պետության պատվիրակած լիազորությունների գերակշիռ մասի իրականացման համար պետական բյուջեից համապատասխան ֆինանսական հատկացումներ չեն կատարվում: Համապատասխան ֆինանսավորման բացակայությունը հիմք է հանդիսանում համայնքի ղեկավարի համար, օրենքով իրեն վերապահված պետության պատվիրակած լիազորությունը չկատարելու մասով: Օրենքով վերապահված պատվիրակած լիազորությունները և դրանց համապատասխան ֆինանսավորումը գտնվում են անհավասարակշիռ վիճակում: Նշված լիազորությունների իրականացման նպատակով համապատասխան ֆինանսավորման բացակայությունը և այդ պատճառով համայնքների ՏԻՄ-երի կողմից իրենց վերապահված լիազորությունների չկատարումը, հանգեցնում է մի իրավիճակի, երբ այդ լիազորությունների մեծ մասը այդպես էլ մնում են չիրականացված, ո՛չ հանրապետական գործադիր, ո՛չ տարածքային կառավարման և ո՛չ էլ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Հաշվի առնելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ՏԻՄ-երին վերապահված պետության պատվիրակած լիազորությունների կարևորությունը, դրանց մեծ մասի հանրային ծառայության բնույթ կրելու հանգամանքը, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 186-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով առաջարկվում է, կազմել և մշակել, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունել «Պետության պատվիրակած լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին» համապատասխան որոշում, որը կկրի շրջանակային բնույթ և ընդհանուր ընթացակարգային դրույթներ կսահմանի պատվիրակած լիազորությունների իրականացման վերաբերյալ:

Միաժամանակ, վերը նշված շրջանակային բնույթ կրող կառավարության որոշման տրամաբանությամբ՝ օրենքով համայնքի ՏԻՄ-երին վերապահված յուրաքանչյուր պատվիրակած լիազորության մասով կազմել, մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունել համապատասխան պատվիրակած լիազորության իրականացման կարգը սահմանելու մասին որոշում: Յուրաքանչյուր պատվիրակած լիազորության մասով ընդունված որոշմամբ առաջարկվում է սահմանել ոչ միայն իրականացման կարգը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, այլև ֆինանսավորման նորմատիվները, ֆինանսավորման չափը և ժամկետները:

Վերը մեջբերված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի միջոցով համապատասխան կառուցակարգերը չսահմանելու պարագայում, միանգամայն արժանահավատ է ուժը կորցրած ճանաչել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանված պետության պատվիրակած լիազորությունները սահմանող այն դրույթները, որոնց մասով իրավակիրառ պրակտիկայում պետական

բյուջեի միջոցների հաշվից ֆինանսական համապատասխան միջոցներ չեն հատկացվում:

ՀՀ տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրության համալիր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, պատվիրակված լիազորությունները վերապահվում են ոչ թե տեղական ինքնակառավարման մարմիններին միասին վերցրած, այլև համայնքի ղեկավարին: Նման իրավաիրացնող պրակտիկան ունի իր օբյեկտիվ պատճառները, սակայն հարկ է արձանագրել, որ ոչ բոլոր դեպքերում է, որ այդ պատճառները արդարացված են:

Այսպես՝ համայնքի ավագանին, լինելով ներկայացուցչական մարմին, համայնքային մակարդակում իրականացնում է տեղական օրենսդիր մարմնին բնորոշ լիազորություններ և գործառնություններ: Որպես կանոն, համայնքի ավագանին է սահմանում լիազորությունների իրականացման կարգերը և ընթացակարգերը, այդ մասին է վկայում Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ավագանուն վերապահված գրեթե բոլոր լիազորությունները, ինչպես նաև Սահմանադրությամբ ամրագրված հետևյալ կարգավորումը, համաձայն որի, «Համայնքի ղեկավարը կատարում է համայնքի ավագանու որոշումները: Համայնքի ղեկավարը պատասխանատու է համայնքի ավագանու առջև¹²»:

Արժանահավատ է դիտարկել այն հանգամանքը, որ սահմանադրական մեջբերված կարգավորումները լիովին կարող են տեղայնացվել տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման համատեքստում, սակայն պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման դեպքերում, առկա են մի շարք առանձնահատկություններ:

Պատվիրակված լիազորությունը, ինքնին պետության կողմից համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին «պատվերի» տեսքով փոխանցված լիազորությունն է, որի պարագայում, պետությունը ի դեմս փոխանցվող կամ պատվիրակվող լիազորության գծով լիազոր պետական կառավարման մարմնի՝ սահմանում է «այն հիմնական խաղի կանոնները» (չափորոշիչները կամ նորմատիվները), որոնց կիրառման պարագայում հնարավոր է լինելու կազմակերպել և իրականացնել համապատասխան լիազորությունը (եզրահանգումը մերն է - Վ. Պետրոսյան): Օրենսդրության կարգավորման տեսանկյունից եթե դիտարկենք, ապա ակնհայտ է դառնում, պատվիրակված լիազորությունների իրականացման գործընթացներից համայնքի ավագանու դուրս մնալու իրավական հետևանքը:

Նման իրավական հետևանքի հանգեցումը լուրջ և էական վտանգ է ներկայացնում տեղական ինքնակառավարման իրավունքի պատշաճ իրա-

¹² Տե՛ս ՀՀ Սահմանադրություն 182-րդ հոդվածի 4-րդ մաս:

կանացման համար, մասնավորապես, ժողովրդավարական այս ինստիտուտի գլխավոր կառավարման մարմինը համարվում է համայնքի ընտրողների ուղիղ մանդատը ստացած՝ համայնքի ներկայացուցչական մարմինը, որն ի սկզբանե, ի հեճուկս բոլոր տեսակի գործողությունների, գործունեության ոլորտների, լիազորությունների տեսակների և այլնի, ոչ միայն պետք է տեղյակ լինի այդ գործընթացների իրականացումից, այլև իր անմիջական և որոշիչ դերակատարումն պետք է ունենա այդ գործընթացների կազմակերպման և իրականացման հարցերում, հարաբերություններում: Կենտրոնական կամ տարածաշրջանային մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորությունների պատվիրակման դեպքում նրանք պետք է, հնարավորության սահմաններում, ազատություն ունենան դրանց իրականացումը հարմարեցնելու տեղական պայմաններին¹³:

Միջազգային իրավունքի վերը մեջբերված իրավանորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին ազգային օրենսդրությամբ պետք է տրվեն համապատասխան երաշխիքներ, որոնք հնարավորություն կընձեռեն վերջիններիս, տվյալ համայնքի առանձնահատկություններից ելնելով, կոնկրետ լիազորությունների գծով, այդ թվում՝ պետության կողմից պատվիրակված լիազորությունների մասով ունենալ ազատություն, ինչը ենթադրում է, համայնքային մակարդակում մշակել տվյալ լիազորության իրականացմանը միտված տեղական քաղաքականություն: Այս իմաստով, հարկ է նկատել, որ տեղական քաղաքականությունը համայնքներում մշակվում է համայնքի ղեկավարի կողմից և հաստատվում համայնքի ավագանու կողմից: Վերջին հաշվով, համայնքի կառավարման երկու մարմիններն էլ, ունեն հավասար դերակատարում համայնքի տեղական քաղաքականության թե՛ մշակման, և թե՛ իրագործման համատեքստում:

Հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 4-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումները, առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, մշակել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով բոլոր պատվիրակված լիազորությունները վերաշարադրել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այդ լիազորությունները համահավասար իրականացնելու համատեքստում, մասնավորապես՝ պատվիրակված լիազորությունները վերապահելով ինչպես համայնքի ղեկավարին, այնպես էլ համայնքի ավագանուն: Նշված առաջարկությունը առաջարկվում է ընդունել ի ղեկավարումն հետագայում լիազորությունների ա-

¹³ Տե՛ս Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, հոդված 4, մաս 5:

պակենտրոնացման գործընթացը ինստիտուցիոնալ մակարդակում իրականացնելիս:

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Հոդվածը նվիրված է համայնքների՝ տեղական ինքնակառավարման մարմիններին ներպետական օրենսդրությամբ վերապահված՝ պետության կողմից պատվիրակված լիազորություններին, գործնականում դրանց իրականացման հետ կապված հիմնախնդիրներին, տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Հոդվածի նպատակն է նաև ուսումնասիրել տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրության՝ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված պատվիրակված լիազորությունների շրջանակը, դրանց իրականացման օրենսդրական կառուցակարգերը և իրավակիրառական պրակտիկան:

Հիմնաբառեր. տեղական ինքնակառավարման մարմին, համայնք, պատվիրակված լիազորություն, իրավունք, օրինական շահ, դատական պաշտպանություն, իրավակիրառ պրակտիկա, իրավաբանական տեխնիկա, իրավակարգավորում:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն, հոդված 182, 2-րդ մաս:
2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված:
3. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդված:
4. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, հոդված 4, մաս 5:

ПРЕДОСТАВЛЕННЫЕ ПОЛНОМОЧИЯ ГОСУДАРСТВОМ ОРГАНАМ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ И ПРОБЛЕМЫ ИХ ОСУЩЕСТВЛЕНИЯ В РА

Ваагн Петросян

Настоящая статья посвящена делегированным государством полномочиям местных органов самоуправления, проблем, связанных с их реализацией, форм судебной защиты прав и законных интересов общин и их органов местного самоуправления.

Автор одновременно исследовал законодательство относительно рамок полномочий, делегированных государством местным органам самоуправления, разработал и представил обоснованные предложения

по совершенствованию действующего законодательства, направленного на защиту прав и законных интересов общин.

Ключевые слова: орган местного самоуправления, община, право, законный интерес, судебная защита, суд, конституционный суд, юридическая техника, праворегулирование

AUTHORITIES GRANTED BY THE TO LOCAL SELF- GOVERNMENT BODIES OF AND THE BASIC ISSUES OF THEIR IMPLEMENTATION IN RA

Vahagn Petrosyan

This article is devoted to the state-delegated rights of communities and their local self-governing bodies, the problems that arise during their realization, the judicial protection of the rights and legitimate interests of communities and their local self-governing bodies.

The author simultaneously developed and submitted to the reader substantiated proposals for the improvement of existing legislation to protect the rights and legitimate interests of communities.

Keywords: LSG, community, right, lawful interests, judicial protection, court, constitutional court, legal technique, legal regulation

Ներկայացվել է՝ 11.09.2022 թ.

Ընդունվել է՝ 28.10.2022 թ.

ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎՐԱ

Գրիգորյան Լիանա

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
պրոֆեսոր, տ.գ.դ.

lianagrigoryan11@gmail.com

Լուսինե Առուստամյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մագիստրոս

lusinearustamyan758@gmail.com

Համալսարանական կրթությունը կարևոր դեր և նշանակություն ունի յուրաքանչյուր ուսանողի կյանքում: Առավել կարևոր է ճշգրիտ և պիտանի կրթության առկայությունը, որի հիմքն է հանդիսանում կրթական ծրագիրը: Կրթական ծրագրի մշակումը պետք է իրականացվի տարբեր մասնագետների կողմից, թե՛ տվյալ ոլորտի, թե՛ հարակից ոլորտների: Այդ ծրագիրը որոշում է ուսանողների հետագա աշխատանքային հետադիժը և ոչ հասցեականության դեպքում կարող է թողնել բացասական սոցիալ-տնտեսական հետևանքներ: Եվ պատահական չէ, որ միջազգային պրակտիկայում ընդունված է բուհերի վարկանիշավորման սանդղակի հրապարակումը, որի առաջնագծում են գտնվում հետյալ համալսարանները.¹

- Harvard University.
- University of California--Los Angeles.
- New York University (Steinhardt)
- University of Wisconsin--Madison.
- Vanderbilt University (Peabody)
- Teachers College, Columbia University.
- University of Michigan--Ann Arbor.
- Stanford University.

Գիտելիքի տնտեսության տեսական հիմքերը դրել են ավստրիական տնտեսագիտական դպրոցի ներկայացուցիչներ Յոզեֆ Շումպերերը, Ֆրիդրիխ Հայեկը և Ֆրից Մեչլուփը: ² Գիտելիքն առաջին անգամ աչքի ընկնող դիրք գրավեց տնտեսագիտությունում Ֆրիդրիխ Հայեկի՝ 1945թ. «Գիտելիքի

¹ Տե՛ս <https://www.topuniversities.com/university-rankings/world-university-rankings/2022>

² Տե՛ս Տնտեսական պատմություն, Լ. Անանյան, Լ. Պետրոսյան, Երևան 2008թ., էջ 130

օգտագործումը հասարակությունում» հրապարակմամբ, որում գիտելիքի որպես ապրանք դիտարկելու երկչոտ փորձ արվեց:³

Որպեսզի ներկայացվի կրթության բարելավման ծրագրերը, անհրաժեշտ է հասկանալ ծրագրերի առաջացմանը խթանող թերությունները և խնդիրները: Կրթական ծրագրերի բարելավման հինգ ուղղություններ կօգնեն նվազագույնի հասցնել բացասական արդյունքի ռիսկերը:

Ուղղություն 1. Կրթական ծրագրում ընդգրկված առարկաների վերանայում և փոփոխություն:

Ուսանողը հիմնական դպրոցի հանրակրթական ծրագրով սովորում է դպրոցում 9 տարի, որտեղ անցնում է տարբեր առարկաներ՝ հայոց լեզու և գրականություն, բնագիտական առարկաներ, մաթեմատիկա, հանրահաշիվ, երկրաչափություն, հայոց պատմություն և այլ: Հաջորդիվ, ընդունվում է ավագ դպրոց, կամ քոլեջ, որտեղ կրկին սկսում է անցնել գրեթե նույն առարկաները: Հանձնելով համալսարան ընդունելության քննություններ նշանակում է, որ տվյալ անձը բավարար չափով տիրապետում է այդ առարկաներին, ընդունվում է բուհ, որտեղ կրկին սկսում է անցնել այդ նույն առարկաները:

Եթե ուսանողը երկար տարիներ այդ առարկաները սովորելով դրական արդյունքի չի հասել, ապա համալսարանում ևս մեկ տարի սովորելը ոչ մի փոփոխություն չի ստեղծելու, փոխարենը ժամանակի կորուստ է լինելու, որը հնարավոր կլինի ավելի նպաստավոր ձևով և առարկաներով հագեցնել: Ուստի կրթական ծրագրերի բարեփոխումների շրջանակում անհրաժեշտ է.

- փոփոխել կրթական ծրագրում առկա այն առարկաները, որոնք որոնք չեն առնչվում նրա մասնագիտությանը և ուսանողը արդեն անցել է դպրոցում և քոլեջում (ավագ դպրոցում):
- առաջին կուրսից սկսած սովորել մասնագիտական առարկաներ: Իսկ 2-րդ կուրսից սկսած ավելի խորացված անցնել մասնագիտական առարկաները և մեծ ուշադրություն դարձնել գործնական աշխատանքներին:
- մասնագիտական փորձառություն իրականացնել նաև նախավերջին տարում, ինչը կնպաստի ավելի հմտանալ և տիրապետել մասնագիտությանը:
- եթե ուսանողները օտարերկրյա քաղաքացիներ են, ՀՀ քաղաքացիներ են, բայց սովորել են արտասահմանում կամ այլ պատճառներով չեն տիրապետում դպրոցի բազային գիտելիքներին՝ ինչը խանգարում է մյուս ուսանողների հետ նույն մակարդակի վրա սովորելուն և ընկալելուն առարկան, առաջարկում ենք տվյալ ուսանողների համար համալսարանում առկա կամ հեռավար

³Տե՛ս Hayek, F (1945) The Use of knowledge in Society. American Economic Review, XXXV, No. 4; September, 519-30

եղանակով անցկացնել առանձին դասընթացներ՝ գիտելիքը որոշակի մակարդակի բերելու համար:

Զարգացած աշխարհում պետությունը, առաջին հերթին, կրթության և գիտության ոլորտում ապահովում է առաջընթաց, որի հիման վրա արդեն տեղի է ունենում նյութական արտադրության ճյուղերի արդիականացում: Բարձրագույն կրթության ոլորտում նորարարական զարգացման ապահովումը ժամանակի հրամայականն է:⁴

Ուղղություն 2. Տեսադասերի իրականացում:

Առաջարկում ենք ուսանողներին մասնագիտական առարկաների համար պատրաստել իրենց նախընտրած թեմայով տեսադասեր: Այն կնպաստի ուսանողի խոսքի զարգացմանը, գիտելիքի ամրապնդմանը, տեխնիկական գործիքներին տիրապետմանը: Բացի այդ, ցանկացած սովորող այդ տեսադասերի միջոցով ձեռք կբերի որոշակի պատկերացում տվյալ թեմայի վերաբերյալ և այն կարող է օգնել ստանալու ծագած հարցերի պատասխանները:

Այսօր ուսանողներն օգտագործում են ուսումնական տեսանյութերը՝ որպես ամեն ինչ սովորելու գործիք՝ սկսած հիմնական հմտություններից, օրինակ՝ անվադող փոխելը, մինչև վերջին՝ պարային մոլուցքը: Հատկանշական է, որ դիտումների հազարամյակները կազմում են թվային վիդեո դիտողների լսարանի 92%-ը: Վերացական թեմաները, որոնք ժամանակին դժվար էր թվում դասավանդելը և սովորելը, այժմ ավելի մատչելի և հասկանալի են առցանց ուսուցման արդյունավետ կրթական տեսահոլովակների առկայության շնորհիվ:⁵

Տեսանյութերը մեծացնում են ուսանողների ներգրավվածությունը, որն իր հերթին օգնում է խթանել ուսումնառության ձեռքբերումները: Եթե ուսանողները հետաքրքրված են նյութով, նրանք ավելի լավ կմշակեն և կհիշեն այն: Նրանք առաջարկում են ճկունություն՝ դադարեցնելու, ետ փաթաթելու կամ բաց թողնելու ամբողջ տեսանյութը՝ դասի քննարկումներ անցկացնելու կամ որոշակի ոլորտներ վերանայելու համար: Այսպիսով տեսադասերի պատրաստման միջոցով նպաստում ենք միաժամանակ երկկողմանի գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը և փոխանակմանը:

Ուղղություն 3. Պրոյեկտորով դասընթացների կառուցում և ներկայացում: Պրոյեկտորով անցկացվող դասերը ավելի պատկերավոր են և մատչելի ուսանողների համար: Երբ դասախոսը թելադրում է թեման, ապա ուսանողը կատարում է մեխանիկական աշխատանք՝ ծախսելով ավելորդ

⁴Տե՛ս Владимирова А.И. Об инновационной деятельности вуза, М., ООО «Издательский дом Недра», 2012, с. 12

⁵Տե՛ս <https://www.nextthoughtstudios.com/video-production-blog/2017/1/31/why-videos-are-important-in-education#:~:text=Videos%20increase%20student%20engagement%2C%20which,discussions%20or%20review%20particular%20areas.>

Ժամանակ գրելու վրա: Ուսանողի համար ավելի հոգնեցուցիչ է երկար ժամանակ նույն տոնայնությամբ ձայնը լսելը և դասի ժամանակ որևէ գործնական աշխատանք չկատարելը: Պրոյեկտորով դասընթացի դեպքում խնայվում է ժամանակը, ուսանողը միաժամանակ լսելով դասախոսին և տեսնելով թեմայի վերաբերյալ նյութը, զարգացնում է տեսողական և լսողական հիշողությունը, հեշտ է յուրացնում նյութը և այն ապրապնդում: Տեսանյութերն ավելի գրավիչ են, քան միայն տպագիր նյութերը: Պրոյեկտորով անցկացվող դասընթացները ունենք մի շարք առավելություններ: (տե՛ս գծապատկեր 1):




Գծապատկեր 1. Պրոյեկտորով անցկացվող դասընթացների առավելությունները

Ուղղություն 4. Գործնական աշխատանքների տեսակարար կշռի ավելացում: Փորձը ցույց է տալիս, որ գործնական աշխատանքներին ավելի շատ են ուսանողներին ներգրավում դասապրոցեսի մեջ, քան սեմինարները: Գործնական աշխատանքների ավելացումը հնարավորություն է տալիս ավելի լավ տիրապետել առարկային, ստանալ որոշակի պրակտիկ գիտելիքներ, հետաքրքրությունը չկորցնել առարկայի հանդեպ, սեփական աշխատանքը ներկայացնել և ստեղծարար միտքը զարգացնել: Գործնական աշխատանքը կարող է իրականում հեշտացնել ուսուցումը դասարանում: Գործնական գործունեության օգտագործումը

կարող է օգնել դասի կառուցմանը և բարելավել ներգրավվածությունն ու գիտելիքների պահպանումը: Շատ ուսանողներ ավելի հեշտ են սովորում՝ իրականում «կատարելով» գործողություններ: Սա հատկապես կարևոր է գործնական գիտական գործունեության մեջ:⁶

Մարդիկ ընդհանրապես հիշում են

Սովորողները կարողանում են



Գծապատկեր 2 Դեյլի կոնի կառուցման մոտեցումը

⁶ Տե՛ս <https://www.cambridge.org/us/education/blog/2018/12/05/practical-work-benefits-challenges-and-solutions/#:~:text=Practical%20work%20can%20in%20fact,relevant%20in%20practical%20science%20activities.>

Դեյլի փորձի կոնը մոդել է, որը ներառում է մի քանի տեսություններ՝ կապված ուսումնական նախագծման և ուսուցման գործընթացների հետ: 1960-ականների ընթացքում Էդգար Դեյլը առաջարկեց տեսակետ, որ սովորողները ավելի շատ տեղեկատվություն են պահպանում իրենց «գործի ուսնակությամբ» ի տարբերություն «լսածի», «կարդալու» կամ «դիտարկվածի»: Նրա հետազոտությունը հանգեցրեց կոնի զարգացմանը: Այսօր այն հայտնի է դարձել որպես «փորձառական ուսուցում» կամ «գործող ուսուցում»:⁷

Ուղղություն 5. Ուսանողի սեփական կարծիքի արտահայտում: Բազմաթիվ դեպքերում ուսանողը դասընթացի կազմակերպման, ընթացքի վերաբերյալ ցանկանում է արտահայտել իր կարծիքը, սակայն տարիների ընթացքում ձևավորված կարծրատիպերը թույլ չեն տալիս լիովին արտահայտվել: Ուսանողական խորհուրդը պետք է ժամանակ առ ժամանակ հարցաթերթիկների միջոցով տեղեկացված լինի ուսանողների ցանկությունների և դիտողությունների մասին: Ինչի հիման վրա էլ պետք է շտկվի և թարմացվի ծրագիրը, որովհետև ժամանակը առաջ է գնում և փոփոխվում են ուսանողների կարողությունները, մտածելակերպը, ցանկությունները:

Այս հիմնավորումը մշակելիս կարևորվում է, թե ինչպես արտահայտել, որ ուսանողներն իրավունք ունեն խոսելու ժամանակ լսելի լինելու և չընդհատվելու: Ուսանողները չպետք է իրենց կարծիքներում զգան թերաժեկորված, ոչ էլ պետք է թաքցնեն, թե ինչ կարող են լինել իրենց կարծիքները՝ վախենալով դատվելուց: Շատ հետազոտողներ բացատրում են ուսանողների՝ կանոնավոր կերպով դրսևորվելու և դասի քննարկումներին նպաստելու կարևորությունը, և ինչպես դա կարող է դրականորեն ազդել նրանց ուսման վրա: Հաշվի առնելով այն փաստը, որ վերոնշյալ ծրագրեր բխում են ուսանողի շահերից և ուղղված են կրթության որակի բարելավմանը՝ ծրագրերի կիրառումը կհանգեցնի ուսանողների քանակի ավելացման, լիարժեք մասնագետների ձևավորման, տնտեսության զարգացման և մի շարք այլ դրական արդյունքների ստեղծման:

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում դիտարկվում է բակալավրիատում կրթական ծրագրերի բարեփոխումների ուղղությունները անհրաժեշտությունը՝ որպես մի քանի ուղղությունների ամբողջություն, որոնք միտված են կրթական որակի բարելավմանը: Մասնավորապես, շեշտադրումներ են կատարվել կրթական ծրագրերի կառուցման գործընթացում ուսանողների մասնակցության անհրաժեշտությանը, տեսական ուսուցման ծանրության կենտրոնը գործնական աշխատանքների ոլորտ տեղափոխելու կարևորությանը: Հատկապես

⁷Տե՛ս Adapted from E. Dale, Audiovisual Methods in Teaching, 1969, NY: Dryden Press.

կարևորվել է տեսադասերի միջոցով կրթական ծառայությունների մատուցման կազմակերպումը, ընդ որում, առաջարկելով, որ դրանք կազմվեն հենց ուսանողների կողմից: Որպես ուսանողակենտրոն կրթության առանցքային մաս է առաջարկվել ուսանողի կարծիքի արժևորման և կիրառման հնարավոր ուղիների ներդրումը, որով սովորողի առաջարկները հասցեագրված կլինեն կրթական ծրագրերի բարելավումների գործընթացներին:

Հիմնաբաներ. բակալավրիատ, կրթություն, ծրագիր, առարկաներ, տեսադաս, ստեղծարար կարծիք, գործնական աշխատանքներ

Օգտագործված գրականություն

1. Top universities ranking, <https://www.topuniversities.com/university-rankings/world-university-rankings/2022>
2. Տնտեսական պատմություն, Լ. Անանյան, Լ. Պետրոսյան, Երևան 2008թ., էջ 130
3. Hayek, F (1945) The Use of knowledge in Society. American Economic Review, XXXV, No. 4; September, 519-30
4. Владимиров А.И. Об инновационной деятельности вуза, М., ООО «Издательский дом Недра», 2012, с. 12
5. <https://www.cambridge.org/us/education/blog/2018/12/05/practical-work-benefits-challenges>
6. Adapted from E. Dale, Audiovisual Methods in Teaching, 1969, NY: Dryden Press.

ПУТИ ВЛИЯНИЯ СТУДЕНТО-ОРИЕНТИРОВАННОГО ОБУЧЕНИЯ НА ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ ПРОГРАММЫ БАКАЛАВРИАТА

Лиана Григорян
Лусине Арустамян

В статье рассматривается необходимость реформирования образовательных программ бакалавриата как совокупности нескольких направлений на повышение качества образования. В частности, был сделан акцент на важности участия студентов в процессе построения образовательных программ, важности переноса центра тяжести

теоретического обучения в область практических занятий. Предлагалось совершенствование организации образовательных услуг посредством видеоуроков, причем предлагалось их готовить самим учащимся. В качестве ключевой части студенто-ориентированного образования было предложено внедрение возможных способов оценки и применения мнения учащегося, с помощью которых предложения учащегося будут адресованы процессам совершенствования образовательных программ.

Ключевые слова: бакалавриат, образование, программа, предметы, видеокласс, творческое мнение, практические работы

WAYS OF THE INFLUENCE OF STUDENT ORIENTED LEARNING ON UNDERGRADUATE EDUCATIONAL PROGRAMS

Liana Grigorian
Lusine Arustamyan

The article examines the need for reforms in undergraduate educational programs as a set of several directions aimed at improving the quality of education. In particular, emphasis was placed on the importance of students' participation in the process of building educational programs, the importance of moving the center of gravity of theoretical learning to the field of practical exercises. The organization of the delivery of educational services through video classes was especially improved, and it was suggested that they be prepared by the students themselves. As a key part of student-centered education, the possible ways of valuing and applying the student's opinion was proposed, by which the student's suggestions will be addressed to the processes of improving educational programs.

Keywords: undergraduate, education, program, subjects, video class, creative opinion, practical works

Ներկայացվել է՝ 12.09.2022 թ.

Ընդունվել է՝ 16.10.2022 թ.

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՇՈՒՐՁ**Սոնա Ղազարյան**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դոցենտ,
տ.գ.թ.

sona_ghazaryan@yahoo.com

Մարիանա Կարապետյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մագիստրոս

marian.akarapetyan.18@gmail.com

Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակն է բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերաորակավորումը, միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի՝ կրթության զարգացման պահանջմունքների բավարարումը: Հայաստանի Հանրապետությունում գործում են բարձրագույն ուսումնական հաստատությունների հետևյալ տարատեսակները՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա: Բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակը որոշվում է նրա կրթական ծրագրերով, կազմակերպական-իրավական ձևով, պետական հավատարմագրման առկայությամբ:

➤ Բարձրագույն կրթությունն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ բակալավրի և մագիստրոսի ծրագրերով, պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում, առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Բակալավրիատը առաջին քայլն է համալսարանական կյանքում:

Բակալավրիատը՝ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան է, որը շնորհիվում է միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցող և առնվազն քառամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան ատեստավորված անձանց⁸: Այսպիսով բակալավրիատը բարձրագույն կրթություն ստացած անձն է,⁹ որը հաստատվում է բակալավրի դիպլոմով, ակադեմիական աստիճանի կամ բակալավրի որակավորման շնորհմամբ:

Կիրառական բակալավրիատը հատուկ մեթոդիկա է, որի կիրառման դեպքում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները ստանում են գիտելիքներ և հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց միանգամից, առանց լրացուցիչ պրակտիկաների մասնագիտորեն աշխատելու համար:

⁸Տե՛ս <https://www.arlis.am/>

⁹ Տե՛ս <https://hy.wikipedia.org/>

Ֆրանսիայում «բակալավրիատ» բառը (baccalauréat) այլ նշանակություն ունի և ներկայացվում է որպես միջնակարգ կրթության վկայագիր (ատեստատ): Բարձրագույն կրթության մասնագիտական ուսումնական ծրագրերի բովանդակությունը նախատեսում է հանրակրթական առարկաների ցիկլի ուսումնասիրություն, հիմնական առարկաների, պրոֆիլային առարկաների ցիկլի, ինչպես նաև համապատասխան մասնագիտությունների գծով մասնագիտական պրակտիկայի ընդունում: Համալսարաններն իրավունք ունեն մրցութային հիմունքներով մշակել և ներդնել նորարարական կրթական ծրագրեր, որոնք պարունակում են որակապես կատարելագործված տեխնոլոգիաներ, ուսուցման մեթոդներ և ձևեր: Բարձրագույն կրթության մասնագիտական ուսումնական ծրագրերի յուրացման ժամկետը սահմանվում է բարձրագույն կրթության պետական համապարտադիր ստանդարտով և պետք է կազմի առնվազն 4 տարի:

Բոլորիս հայտնի է բուհերում գործող կրթական աստիճանները: Այս աստիճանները օգնում են տարեց տարի ամրապնդել և ավելի կատարելագործել: Բակալավրիատը հանդիսանում է ուսանողների բարձրագույն կրթության աստիճան և տալիս է ուսանողությանը բավարար գիտելիքներ՝ իրենց մասնագիտական ասպարեզում կիրառելու համար:

Ժամանակակից կրթական ծրագրերի ապահովում: Քանի որ մեր օրերում տեղեկատվական աղբյուրները և տեխնոլոգիաները գնալով զարգանում են և հասանելի են բոլորի համար, հետևաբար անհրաժեշտ է որպեսզի դասավանդողները նույնպես քայլեն ժամանակին համընթաց, որպեսզի ուսանողների համար հետաքրքիր անցկացվի դասապրոցեսը և նրանք ցանկանան ներկա գտնվել այդ դասին գիտելիք ստանալու՝ այլ որ թե բացակա չստանալու համար: Բուհերում սահմանված կարգը կրթության վերաբերյալ ամեն տարի գրեթե նույնն է: Մակայն տարեց տարի կարելի է նորովի մոտենալ կրթության մեթոդներին և ամենակարևորը ուսանողների մոտիվացնել կրթությանը:

Օտար լեզվի ուսուցման շարունակություն: Պետք է խորացվի անգլերեն լեզվի ուսուցումը, այսինքն բացի առաջին և երկրորդ կուրսերի ուսանողներից, մյուս բոլոր կուրսերի կրթական ծրագրում նույնպես ավելացվի անգլերեն լեզուն, որպես մասնագիտական անգլերեն, քանի որ այսօր այն անհրաժեշտ է գրեթե բոլոր ոլորտներում և մասնագետներին առավել մրցունակ է դարձնում միջազգային շուկայում:

Միջազգային փոխանակման ծրագրերի ձևուն համակարգ: Այսօր բոլոր ուսանողները չափազանց հետաքրքրված են, թե ինչ պայմաններում և ինչպես են սովորում իրենց հասակակիցները աշխարհի տարբեր երկրների համալսարաններում և նրանք նույնպես ցանկանում են որպեսզի սովորեն նման կրթական հաստատություններում: Առաջարկում

ենք, որպեսզի էլ ավելի տարածվի միջազգային փոխանակման ծրագրերը, ընդլայնվի փոխանակման թե երկրների և թե համալսարանների ցանկը:¹⁰

Ստեղծարար մտքի զարգացում: Անհրաժեշտ է անցկացնել խմբային աշխատանքներ և մտածել անցկացման հետաքրքիր մեթոդաբանություն, որպեսզի ուսանողները նույն նյութերը կրկնելու փոխարեն կարողանան ինքնուրույն մտածել և զարգացնեն իրենց ստեղծարար միտքը: Կատարեն նաև գիտահետազոտական աշխատանքներ, ինչպես նաև անցկացվեն գիտաժողովներ ուսանողների գիտելիքների ամրապնդման, ազատ մտածելակերպի և ճկուն արտահայտման միջոցների զանգացման համար:

Ուսումնական ծրագրերի համապատասխանեցում աշխատանքի շուկայի արդի պահանջներին: Մեր օրերում աշխատանքի շուկայի արդի պահանջներից են համարվում տիրապետել՝ MS office փաթեթին, ինչի համար էլ ուսումնական հաստատություններում այնպիսի խորությամբ պետք է ուսումնասիրել ժամանակակից համակարգչային ծրագրերը, որպեսզի ուսանողները բավականաչափ տիրապետեն համակարգչային գիտելիքներին, հետևաբար լրացուցիչ գումարներ և ժամանակ չվատնեն այդ ծրագրերը սովորելու համար:

Աշխարհը փոխում ենք մենք և ինքներս ենք որոշում այն լավը դարձնել, թե ոչ: Մենք հավատում ենք, որ յուրաքանչյուր ոք կարող է դերակատարում ունենալ աշխարհին էլ ավելի լավը դարձնելու գործում, անկախ նրանից թե ինչ ճանապարհ է նա ընտրում: Այնպես, որ յուրաքանչյուր մարդ պետք է աշխատի իր գիտելիքները էլ ավելի շատացնելու և խորացնելու գործում, որպեսզի լինի ինքնակրթված և զարգացած: Ճիշտ է կրթության արմատները դառն են, բայց պտուղը քաղցր է:¹¹

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Բարձրագույն կրթությունն իրականացվում է բակալավրի և մագիստրոսի ծրագրերով, պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում, ատկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Բակալավրիատը բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան է, որը շնորհվում է միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցող և առնվազն քառամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան ատեստավորված անձանց: Սակայն, դրան զուգահեռ, բակալավրիատի կրթական ծառայությունների շրջանակում անհրաժեշտ է ակտիվացնել ուսանողության շարժունության, ստեղծարար կարողությունների, ակադեմիական ճկուն ծրագրերի զարգացումը:

¹⁰ Տե՛ս <https://armstat.am/>

¹¹ Տե՛ս <https://www.iammedia.am/hy/post/The-roots-of-education-are-bitter-but-the-fruit-is-sweet>

Հիմնաբառեր. բակալավրիատ, մրցունակ կրթական ծրագրեր, ուսանողների շարժունություն, ստեղծարար կարողություններ

1. Владимиров А.И. Об инновационной деятельности вуза, М., ООО «Издательский дом Недра», 2012,
2. <https://www.armstat.am/file/doc/99526838.pdf>
3. <https://hy.wikipedia.org/wiki>
4. Постановление Правительства Российской Федерации от 24 сентября 2013 г. № 842 О порядке присуждения учёных степеней
5. Письмо Министерства образования и науки России от 04.04.2012 № 09-484 «О требованиях к уровню образования соискателей учёных степеней»
6. Этимологический словарь русского языка Московского университета Н. М. Шанский| 1965- страницы 13-14
7. <https://www.iammedia.am/hy/post/The-roots-of-education-are-bitter-but-the-fruit-is-sweet>

Сона Казарян
Мариана Карапетян

Ключевые слова: бакалавриат, конкурентоспособные образовательные программы, студенческая мобильность, творческие способности

FOR THE IMPROVEMENT OF UNDERGRADUATE EDUCATIONAL PROGRAMS

Sona Ghazaryan
Mariana Karapetyan

Higher education is carried out with bachelor's and master's programs, in state and non-state educational institutions, on-site and part-time, on a free and paid basis. Bachelor's degree is a qualification degree of higher professional education, which is awarded to persons with secondary (full) general education and at least four-year higher professional educational programs. However, in parallel with this, it is necessary to activate the development of student mobility, creative abilities, academic flexible programs within the framework of undergraduate educational services.

Keywords: baccalaureate, competitive educational programs, student mobility, creative abilities

Ներկայացվել է՝ 22.09.2022 թ.

Ընդունվել է՝ 25.10.2022 թ.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ԽԹԱՆՈՒՄԸ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԿԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

Արփինե Հակոբյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս

arpinehakobyan15@yahoo.com

Էմիլյա Գոգոբյան

Հյուսիսային համալսարանի բակալավրիատի ուսանող

gogoryan00@list.am

Բակալավրիատ և մագիստրատուրա կրթական աստիճանները Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթական տարածքում սկսել են կիրառվել հարաբերականորեն ոչ վաղ անցյալում՝ ընդամենը 20 տարի առաջ, և դրանց ներթափանցումը պայմանավորված է մեր երկրի՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածք ինտեգրմամբ:¹² Բակալավրիատը բարձրագույն կրթության առաջին, իսկ մագիստրատուրան երկրորդ աստիճանն է,¹³ իսկ երրորդ աստիճանը կոչվում է դոկտորանտուրա: Բակալավրիատն ավարտելուց հետո ուսանողը պարտադիր չէ, որ ընդունվի մագիստրատուրա, եթե մտադիր է սկսել աշխատել իր մասնագիտությամբ: Բայց ուսանողները, որոնք նպատակ ունեն գործունեություն կազմակերպել գիտության կամ դասավանդման հետ, ձգտում են ստանալ ակադեմիական մագիստրոսի որակավորում: Այսինքն՝ բակալավրիատն ու մագիստրատուրան չեն կարող միմյանց փոխարինել, դրանք տարբեր հեռանկարներ են տրամադրում իրենց տիրոջը:

Հետազոտական հմտությունները կարևոր են, քանի որ դրա շնորհիվ զարգանում է ուսանողի քննադատական, վերլուծական կարողությունները, ուսանողը կարողանում է ինքնուրույն խնդիրներ դնել, լուծել և հասնել հետազոտական նպատակների: Թե՛ որքանով են հետազոտական հմտությունները նպաստում բակալավրիատի շրջանավարտի ստեղծարար կարողություններին, մեկնաբանվում է Բլումի տաքսոնոմիայի միջոցով: Բլումի տաքսոնոմիան դասակարգում է կրթական նպատակները կամ ավելի շուտ կրթական վերջնարդյունքները: Այն առաջարկվել է համանուն հեղինակի կողմից 1956 թվականին, նպատակ ունենալով բարելավելու առարկայական ծրագրերի և դրանց գնահատման, մասնա-

¹² Տե՛ս Երիցյան Ս., Ճուղության Ա. 100 հարց և պատասխան Բոլոնյան գործընթացի մասին, Եր. «Էդիթ Պրինտ», 2007, էջ 45

¹³ Տե՛ս ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին», Եր. 2005 թ., հոդ.3

վորապես քննությունների շուրջ դասավանդողների միջև փոխըմբռնումն ու հաղորդակցությունը:¹⁴

Եթե քննարկում ենք Բլումի բուրգը, ապա պարզ է դառնում, որ գիտելիք, կարողություն ստանալու ճանապարհին անհատն անցնում է երկար ճանապարհի սկզբից տեղեկատվությունն անցնում է գիտակցության միջով, դառնում գիտելիք, նա սկսում է այն ընկալել, այնուհետև կիրառել, վերլուծել, համադրել, և վերջապես, ինքնուրույն հետազոտել ցանկացած հիմնախնդիր՝ հիմնված ստացած նախնական տեղեկատվության վրա: Գիտելիքը սկզբից անհնար է ինքնուրույն կիրառել, դրա համար հարկավոր է այն փորձարկել դասախոսի, ղեկավարի օգնությամբ, և այնուհետև, այն հնարավոր է դառնում ինքնուրույն կիրառել:

Որակավորումների համաեվրոպական շրջանակը, ապա և դրա հիման վրա մշակվող ազգային շրջանակները պարտադրում են, որպեսզի կրթական հաստատությունները վերանայեն սեփական կրթական ծրագրերը, որտեղ հստակ կսահմանվեն տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքները, ինչն էլ կպարտադրի դրանց ներքո գործող առարկայական ծրագրերի կրթական վերջնարդյունքների վերանայումը: Հիմնական նպատակն այստեղ գիտելիքի ծավալի ու խորքայնության չափելիության ապահովումն է, որը այս մեթոդաբանությամբ թույլ է տալիս չեղարկել բոլոր վերացարկված սահմանումները: Վերացարկումները չենթարկվելով չափագրման դժվար գնահատելի են դարձնում գիտելիքի գնահատումը, սակայն այս դասակարգման միջոցով հնարավոր է նկարագրել ցանկացած առարկայական ծրագիր և դրան համակցված գնահատման համակարգը, որը առաջին հերթին պետք է դիտարկվի լինի ուսանողի համար:

Կրթական վերջնարդյունքների նկարագրության չափագրելիությունն ապահովող Բլումի տաքսոնոմիան ունի հետևյալ կառուցվածքը, որտեղ դասախոսների կամ ուսումնական գործընթացի այլ պատասխանատուների համար պարզ ներկայացված է, թե ինչպես կարելի է խուսափել օգտագործել այնպիսի բառեր, ինչպիսիք են օրինակ ընկալելը, գնահատելը, այլ դրանց փոխարեն հստակ սահմանել այդ վերացարկված սահմանումների առարկայական տարբերակները, որոնց չափագրումը խնդիրներ չի առաջացնում:¹⁵

¹⁴ **Տե՛ս** Բլումի տաքսոնոմիան և կրթական վերջնարդյունքները,
[//www.herearmenia.wordpress.com](http://www.herearmenia.wordpress.com)

¹⁵ **Տե՛ս** Таксономия Блума: что это такое и зачем она педагогам и методистам,
[//www.skillbox.ru](http://www.skillbox.ru)

Բլումի տաքսոնոմիական կառուցվածքը	Նկարագրող բառեր
Գնահատում Գիտելիքի մասին դատողություններ անել	Մեկնաբանել, հիմնավորել, որոշել, քննադատել, դատողություն անել, լուծել, ռեյտինգավորել, արժևորել, գնահատական տալ
Համադրում Ստեղծել նոր գաղափարներ կամ առարկաներ	Առաջադրել թեզ, կանխատեսել, ստեղծել, արտադրել, մոդիֆիկացնել, ընդլայնել, նախագծել, ձևակերպել, մշակել, կառուցել, համադրել
Վերլուծություն Տեղեկատվությունը մասերի բաժանել	Ուսումնասիրել, միավորել, տարանջատել, դասակարգել, հայտնաբերել, զննել, ուսումնասիրել, տարբերակել, մասերի բաժանել, ընդհանրացնել, համեմատել, վերլուծել
Կիրառություն Տեղեկատվությունը գործածել, գործադրել, կիրառել	Փորձել, դիագրամ կառուցել, կատարել, գրաֆիկներ կառուցել, գործողությունների վերածել, կառուցել, զեկուցել, կիրառել, կիրառական համեմատություն անել, կիրառությունից հետևություն անել, տարրերը իրար հետ համադրել, հարմարեցնել
Ընկալում Տեղեկատվությունը հասկանալ	Հանրագումարել, համեմատել, փորձարկել, տարրական գուգահեռներ տանել, ցուցադրել, բացատրել, վերաձևակերպել, քննարկել
Գիտելիք Տեղեկատվությունը գտնել կամ հիշել	Պատմել, ցուցադրել, թվարկել, տեղադրել, կրկնել, սահմանել, բացատրել, քննել, մտաբերել, անվանել, ցույց տալ

Բակալավրիատի կրթական ծրագրի հետազոտական բաղադրիչի խթանման արդյունավետությունն ուսումնասիրելու նպատակով մեր կողմից ուսանողության շրջանում կատարվել են հարցումներ հետևյալ հարցադրումներով:

1. Ի՞նչ մեթոդներով են կազմակերպվում դասերը:

2. Ի՞նչպես են ձևավորվում վերլուծական, քննադատական կարողությունները և հմտությունները:

3. Ինչպիսի՞ ինքնուրույն աշխատանքներ են կատարվում դասընթացների շրջանակում և որքանո՞վ են դրանք խթանում մասնագիտական կրթական ծրագրի հետազոտականությունը:

4. Ի՞նչ թերություններ են նկատում մասնագիտական կրթական ծրագրում՝ կապված հետազոտական բաղադրիչի ներդրման և կիրառման հետ:

5. Ինչպիսի՞ առաջարկներ ունեն կրթական բաղադրիչը զարգացնելու ուղղությամբ:

Հարցման ամփոփումները մեկնաբանվում են հետևյալ կտրվածքով:

- Տրամադրվող մասնագիտական գրականությունն արդիական չէ և չի արտացոլում գիտության ներկայիս զարգացումները:
- Լսարանային և ինքնուրույն աշխատանքները մասամբ են խթանում հետազոտական բաղադրիչը:
- Ինքնուրույն աշխատանքները միանման են, դրանք հիմնականում կատարվում են տեսական նյութի հիման վրա, հաշվի չեն առնում արտաքին շուկայի և կրթության շահառուների պահանջները:
- Հետազոտական աշխատանքների մեթոդաբանության գործիքներին ուսանողները մասամբ են ծանոթ:

Հարցման արդյունքում ուսանողների կողմից կատարվել են հետևյալ առաջարկները:

- ամրապնդել բուհ-ձեռնարկություն կապը
- բազմազանեցնել ուսանողների գործնական պարապմունքների ձևերը և դրանց մեջ հստակեցնել հետազոտական բաղադրիչի տեղը և դերը.
- ավելացնել ինքնուրույն հետազոտական աշխատանքների կշիռը ուսանողի ժամային ծանրաբեռնվածությունում
- խթանել բուհական ստեղծագործական, հետազոտական մրցույթների կազմակերպումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ բուհերում իրականացվող բակալավրիատի կրթական ծրագրերում, որպես կանոն, հետազոտական բաղադրիչը մնում է հետին պլանում, համարելով, որ այդ բացը կլրացվի մագիստրատուրայում: Սակայն, մեր օրերում, բակալավրիատի շրջանավարտը աշխատանքի շուկայում մրցունակ է համարվում ոչ միայն ձեռքբերած մասնագիտական ունակություններով, այլև իր ստեղծարար և ձկուն գործելաոճով: Այս առումով, բակալավրիատի կրթական ծրագրերում անհրաժեշտություն է առաջանում ավելացնելու հետազոտական բաղադրիչը, երբ ավարտական աշխատանք կատարելուց բացի, ուսանողը սկսած հենց առաջին կուրսից, իրականացնում է հետազոտություններ մասնագետ հեղինակների շրջա-

նում, հավաքագրում և վերլուծում է տվյալների բազաներ, կիրառում է քանակական գնահատումներ և կատարում որակական եզրահանգումներ: Կրթական ծրագրերում այս ամենը խթանելու համար կարևորվում է ավելացնել ինքնուրույն աշխատանքի ժամաքանակը ուսանողի ծանրաբեռնվածությունում, բազմազանեցնել գործնական պարապմունքների ձևերը, ուսանողին հրամցնել իրավիճակային խնդիրների լուծումներ, ուսուցանել հետազոտության մեթոդաբանություն:

Հիմնաբառեր. բակալավրիատ, կրթական ծրագրեր, հետազոտական բաղադրիչ, ստեղծարար կարողություններ, մրցունակ շրջանավարտ

Օգտագործված գրականություն

1. ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին», Եր. 2005 թ., հոդ.3
2. Բլումի տաքսոնոմիան և կրթական վերջնարդյունքները, [//www.herearmenia.wordpress.com](http://www.herearmenia.wordpress.com)
3. Երիցյան Ս., Ճուղուրյան Ա. 100 հարց և պատասխան Բոլոնյան գործընթացի մասին, Եր. «Էդիթ Պրինտ», 2007, էջ 45
4. Таксономия Блума: что это такое и зачем она педагогам и методистам, [//www.skillbox.ru](http://www.skillbox.ru)

ПРОДВИЖЕНИЕ ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО КОМПОНЕНТА В ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ПРОГРАММАХ БАКАЛАВРИАТА

Арпине Акопян

Эмилия Гогорян

Как правило, исследовательский компонент остается на втором плане в реализуемых в вузах РА образовательных программах бакалавриата, учитывая, что этот пробел будет восполнен в магистратуре. Однако в настоящее время выпускник бакалавриата считается конкурентоспособным на рынке труда не только благодаря приобретенным профессиональным навыкам, но и благодаря своему творческому и гибкому подходу к работе. В связи с этим возникает необходимость усиления исследовательской составляющей в образовательных программах бакалавриата, когда помимо выполнения дипломной работы студент, начиная с самого первого курса, проводит исследования среди авторов-специалистов, собирает и анализирует базы данных, обращается к количественным оценкам и делает качественные выводы. Для популяризации всего этого в образовательных программах важно увеличить количество часов самостоятельной работы в учебной нагрузке студента, разнообразить формы практических занятий, предлагать студентом решать ситуационные задачи, обучать методике исследования.

Ключевые слова: бакалавриат, образовательные программы, исследовательская составляющая, творческие способности, конкурентоспособный выпускник

PROMOTING THE RESEARCH COMPONENT IN UNDERGRADUATE EDUCATIONAL PROGRAMS

Arpine Hakobyan

Emilia Gogoryan

As a rule, the research component remains in the background in the undergraduate educational programs implemented in RA universities, considering, that this gap will be filled in the master's degree. However, nowadays, a bachelor's degree graduate is careful competitive in the job market not only because of the acquired professional skills, but also because of his creative and flexible way of working. In this regard, there is a need to increase the research component in the undergraduate educational programs, when, in addition to completing the thesis, the student, starting from the very first year study, conducts research among specialist authors, collects and analyzes databases, applies quantitative assessments and makes qualitative conclusions. In order to promote all this in the educational programs, it is important to increase the number of hours of independent work in the student's workload, to diversify the forms of practical training, to force the student to solve situational problems, to teach research methodology.

Keywords: undergraduate, educational programs, research component, creative abilities, competitive graduate

Ներկայացվել է՝ 15.09.2022 թ.

Ընդունվել է՝ 28.10.2022 թ.

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՐՊԵՍ ՍԿՈԼԻՈԶԻ ԲՈՒԺՄԱՆ ՄԻՋՈՑ

Աննա Դարբինյան

Վ.Բրյուսովի ան. Երևանի պետական համալսարանի ֆիզկուլտուրայի և քաղաքացիականության ամբիոնի ավագ դասախոս
darbinyananna@gmail.com

Սկոլիոզը (հուն.՝ skoliosis – թեքվածություն) ողնաշարի դեպի կողք թեքվածությունն է, որը ուղեկցվում է ողերի պտույտով: Պտույտը ուղղահայաց առանցքի շուրջ ողերի խախտումն է, որն ուղեկցվում է դրանց առանձին մասերի աղավաղմամբ: Սկոլիոզը կեցվածքի շեղումներից է ու այլ շեղումներից տարբերվում է նրանով, որ այստեղ խախտվում և ախտահարվում է ոսկրահոդային համակարգը: Բազմաթիվ հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ սկոլիոզը երեխաների մոտ հենաշարժողական համակարգի ամենահաճախ հանդիպող հիվանդություններից է, որն առաջանում և հասնում է իր բարձր աստիճանին մինչև երեխայի աճման շրջանի ավարտը¹⁶:

Ըստ Գ. Ի. Թորների Պետերբուրգյան մանկական օրթոպեդիկ ինստիտուտի հետազոտման արդյունքների՝ դպրոցականների ավագ դասարանցիների 40 տոկոսի մոտ հայտնաբերվել են բուժման կարիք ունեցող շեղումներ¹⁷:

Ըստ որոշ մասնագետների՝ սկոլիոզի առաջացման պատճառները լինում են տարբեր: Նրանց կարծիքով՝ սկոլիոզը կարող է փոխանցվել ժառանգականությամբ: Ըստ հետազոտական աշխատանքի ուսումնասիրության՝ հետազոտվող երեխաների 60 տոկոսի մոտ գրանցվել է սկոլիոզ, որը կրել է ժառանգական բնույթ: Եղել են ընտանիքներ, որտեղ մոտ 4-6 հոգի ունեցել են սկոլիոզ, ընդ որում նրանցից երկուսի կամ երեքի մոտ այնքան բարդ վիճակ, որ նշանակվել է վիրահատություն²:

Գիտական գրականության վերլուծության արդյունքում պարզվեց, որ սկոլիոզը կարող է լինել նաև ձեռքբերովի: Սկոլիոզի առաջացման պատճառ կարող է դառնալ ողնաշարի վրա անհամաչափ ծանրաբեռնվածությունը, որը պայմանավորված է մարմնի բնածին կամ ձեռքբերովի անհամաչափություններով (օրինակ՝ ստորին վերջույթների անհամապատասխանություն, կոնքազդրային հոդի պաթոլոգիա), ինչպես նաև ողերի

¹⁶ **Տե՛ս** Аганянц Е.К., Бердичевская Е.М., Демидова Е.В. Физиологические особенности развития детей, подростков и юношей. Краснодар, 1999, с. 72.

¹⁷ **Տե՛ս** Фищенко В.Я., Вердиев В.Г. Сколиоз у взрослых // Ортопед. травматол. 1990, №8, с. -76.

տարատեսակ դեֆորմացիաները՝ թերզարգացած, սրածայր ձև ունեցող և լրացուցիչ ողերը²:

Սկոլիոզ կարող է առաջանալ նաև կեցվածքի ձևավորմանը մասնակցող մկանների անհամաչափ թուլացման կամ դրանց ֆունկցիոնալ անբավարարության հետևանքով: Նման դեպքերում հիվանդությունն ավելի են բարդացնում ծանր դպրոցական պայուսակները, ոչ ճիշտ դիրքով կանգնելն ու նստելը: Սկոլիոզը որպես կանոն կարող է զարգանալ կմախքի աճի փուլերում: Առավել հաճախ այն դեպքերում, երբ նկատվում է հասակի կտրուկ աճ, և մկանակապանային համակարգը չի կարողանում ոսկրային համակարգի հետ գուգահեռ զարգանալ¹:

Հատկանշական է, որ սկոլիոզից կարող է առաջանալ կոնքի շեղում, որը կստեղծի անհամաչափ ծանրաբեռնվածություն կոնքագոյրային հոդերի վրա և կհանգեցնի դրանց մաշվածությանը: Սա սկոլիոզի առավել հաճախ հանդիպող, բայց ոչ միակ հետևանքն է: Հանդիպում է նաև շեղված կրծքավանդակ: Սկոլիոզն առաջացնում է ներքին օրգանների՝ հատկապես սրտի ու թոքերի, աղեստամոքսային տրակտի գործունեության, շնչառության, նյութափոխանակության և այլ խանգարումներ¹:

Սկոլիոզն ըստ տեղայնության կարող է լինել՝ պարանոցային, պարանոցակրծքային, կրծքային, կրծքագոտկային, գոտկային, տոտալ (ընդհանուր): Սկոլիոզն ըստ ձևի կարող է լինել՝ C-աձև, S-աձև, եռակողմ¹⁸:

Գոյություն ունեն սկոլիոզի ախտորոշման բազմաթիվ մեթոդներ: Այն կարելի է ախտորոշել արտաքին զննումով, որը կատարվում է առջևից և հետևից: Առջևից զննման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել ուսագոտու դիրքին՝ համեմատելով ուսերի բարձրությունները, կրծքավանդակի ձևին՝ համեմատելով անրակոսկրերի համաչափությունը և կողերի դիրքը, կոնքի դիրքը, զստոսկրի կատարների հավասարություններ: Հետևից զննման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել ուսերի դիրքին, թիակների դիրքին, նրա ստորին անկյունների համաչափությանը, թևատակերի համաչափությանը, կոնքի դիրքին, համեմատել ձեռքի և կողերի միջև եղած տարածությունները, նստատեղերի ծալքերի համաչափությանը, ծնկափոսերի համաչափ բարձրությանը, միջային պճեղների դիրքին, իսկ ավելի օբյեկտիվ չափանիշ է հանդիսանում ռենտգենոգրաֆիան և ամենատարածվածը Չակլինի և Կորբի դասակարգումներն են³:

Ինչ վերաբերվում է սկոլիոզի բուժմանը, ապա այն պահանջում է յուրահատուկ համալիր մոտեցում՝ բուժական մեքսում, բուժական լող, կինեզիոթերապիա (բուժական ֆիզկուլտուրա): Երբեմն նշանակվում է կրել սեղմիքան:

Բուժական ֆիզկուլտուրան ներառում է.

✓ բուժական ֆիզիկական վարժություններ,

¹⁸ St' u Мельничук Н. В., Современные методы диагностики восстановительного лечения начальных форм сколиоза у подростков. Санкт-Петербург 2006, с. 153.

- ✓ ջրային վարժություններ,
- ✓ մարմնի դիրքի շտկում (կորեկցիա):

Բուժական ֆիզիկական վարժությունները պետք է ուղղված լինեն ողնաշարը ուղիղ դիրքում պահող մկանների ամրացմանը, իսկ մարմնի դիրքի շտկման վարժությունները՝ ուսագոտու, կոնքագոտու, իրանի դիրքի շտկմանը: Սկզբնական բուժման ժամանակ կիրառվում են ձգողական վարժություններ, հատկապես յոգայի ասանաներից շատերը¹⁹:

Հաշվի առնելով գիտական գրականության մեջ հանդիպող տվյալները, ինչպես նաև հիմնվելով այս առումով ոլորտի առկա փորձի վրա՝ կազմվել է վարժությունների 2 համալիր: Մշակված վարժությունների համալիրները նախատեսված են կրծքային և գոտկային սկզբնականների համար: Վարժությունները ձգող, ուժային և շտկող բնույթի են: Առավել արդյունավետ է վարժությունները կատարել ամեն օր, յուրաքանչյուրը 6-10 անգամ՝ աստիճանաբար ավելացնելով դրանց քանակը: Բուժման տևողությունը խիստ անհատական է, կախված բարդության աստիճանից և տարիքային առանձնահատկություններից⁴²⁰²¹:

ԱՄՓՈՓՈՒՄ

Վերլուծությունից պարզվեց, որ սկզբնական հենաշարժողական համակարգի ամենահաճախ հանդիպող հիվանդություններից է, որի պատճառները լինում են տարբեր և բոլոր դեպքերում բուժման լավագույն միջոց են հանդիսանում բուժական ֆիզիկական վարժություններն ու բուժական մերսումը: Հաշվի առնելով այս ամենը կազմվել են ֆիզիկական վարժությունների 2 համալիրներ՝ կրծքային և գոտկային C-աձև սկզբնականների համար, որոնք բուժական մերսման հետ մեկտեղ կիրառվել են մոտ 50 այցելուների հետ աշխատանքներում և թողել են դրական ազդեցություն: Անուշտ, դրանց կիրառումը պետք է լինի շարունակական և տևական, ինչը խիստ անհատական է ու պայմանավորված սկզբնական բարդության աստիճանով, ինչպես նաև բուժվողի տարիքային առանձնահատկություններով:

Հիմնաբաներ. սկզբնական, ախտահարում, շեղում, բուժական ֆիզիկական վարժություններ, բուժական մերսում:

¹⁹ **Տե՛ս** Dr. Kevin I Au, D.C. Ihr Plan Für eine natural NATÜRLICHE UND VORBEUGUNG VON SKOLIOSE: 2011-S 241-304

²⁰ **Տե՛ս** Иванова Ольга Вячеславовна-Методика лечебной гимнастики для детей 11-13 лет, имеющих грудной сколиоз II степени, на основе средств, методов и внутренней техники "хатха-йоги". Москва, 2009, с. 162.

²¹ **Տե՛ս** Чечётин Д.А., Цуканов А.Н., Филиустин А.Е., Надыров Э.А., Чарнаштан Д.В., Иванова Н.М., лечебная физическая культура при сколиозе у детей. Гомель 2015 с. 93.

ФИЗИЧЕСКИЕ УПРАЖНЕНИЯ КАК СРЕДСТВО ЛЕЧЕНИЯ СКОЛИОЗА

Дарбинян Анна

В статье представлены причины сколиоза, его виды и их последствия. Анализ профессиональной литературы показал, что сколиоз - одно из самых распространенных заболеваний опорно-двигательного аппарата, причины которого разные. Во всех случаях лучшим методом лечения являются лечебные физические упражнения и лечебный массаж. С учетом всего этого были разработаны 2 комплекса физических упражнений при грудном и поясничном С-образного сколиоза, которые, помимо лечебного массажа, использовались в работе около 50 посетителей, что дало положительный эффект. Конечно, их использование должно быть непрерывным, что очень индивидуально и зависит от тяжести сколиоза, а также возраста пациента.

Ключевые слова: сколиоз, поражение, комплекс лечебных физических упражнений, лечебный массаж.

PHYSICAL EXERCISES AS A MEANS OF SCOLIOSIS TREATMENT

Darbinyan Anna

In this article are presented the causes of scoliosis, the types of scoliosis and their consequences. It turned out from the professional analysis that scoliosis is one of the most common musculoskeletal disorders which reasons are different and the best treatment are physical exercises and therapeutic massage. Considering all this, 2 physical exercises' complexes are formed: chest and lumbar scoliosis, which have been used for about 50 patients visits with therapeutic massage and have had positive impact. Of course, their usage must be continuous and lasting, which is not only individual and connected with the degree of complexity of scoliosis, but also patient's age.

Keywords: scoliosis, defeat, a complex of therapeutic physical exercises, therapeutic massage.

Ներկայացվել է՝ 18.09.2022 թ.

Ընդունվել է՝ 25.10.2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կառավարում

<i>Արմեն Ճուղուրյան</i>	Ֆինանսական հաշվառման «տեղեկատվական ճգնաժամը» կառավարչական որոշումների համատեքստում	8
-----------------------------	--	---

<i>Mohammad Farzanegan</i>	Analysis of social media and business management association.....	26
--------------------------------	---	----

Տնտեսագիտություն

<i>Թաթուլ Սանասերյան</i>	Ֆինանսական անվտանգության ապահովումը ազգային և էլեկտրոնային արժույթների մրցակցության պայմաններում.....	37
------------------------------	---	----

<i>Արինե Ստեփանյան</i>	Զբաղվածության կարգավորման արդյունավետության գնահատման հիմնախնդիրները շահառուների սպասումների շրջանակում.....	52
----------------------------	--	----

<i>Հրայր Դանիելյան</i>	Ռիսկերի գնահատման հիմնախնդիրները էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերում.....	68
----------------------------	---	----

Իրավագիտություն

<i>Անի Խեչոյան Մարինե Հակոբյան</i>	Միջազգային հանցագործությունների համար պատասխանատվության հիմնախնդիրները արդի փուլում.....	88
--	--	----

<i>Վահագն Պետրոսյան</i>	Տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունները և դրանց իրականացման հիմնահարցերը ՀՀ-ում	91
-----------------------------	--	----

Կրթություն

<i>Լիանա Գրիգորյան Լուսինե Առուստամյան</i>	Ուսանողակենտրոն ուսուցման ազդեցության ուղի- ները բակալավրիատի կրթական ծրագրերի վրա.....	102
<i>Սոնա Ղազարյան Մարիանա Կարապետ- յան</i>	Բակալավրիատի կրթական ծրագրերի բարելավման շուրջ.....	110
<i>Արփինե Հակոբյան Էմիլյա Գոգորյան</i>	Հետազոտական բաղադրիչի խթանումը բակալավրի- ատի կրթական ծրագրում.....	115
<i>Աննա Դարբինյան</i>	Ֆիզիկական վարժություններն որպես սկոլիոզի բուժ- ման միջոց.....	121

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼ»-Ի ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Հյուսիսսփայլում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:
- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A 4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):
- Հոդվածի վերջում գրել հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում, հիմնաբառերը:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով.
 - Երևանի Հյուսիսային համալսարան, խմբագրական խորհուրդ,
 - ուղարկել hyusisayin@gmail.com էլեկտրոնային փոստին:

ՀՅՈՒՄԻՍԱՓԱՅԼ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏ

2022 2 (10)

ЮСИСАПАЙЛ

НАУЧНЫЙ ЖУРНАЛ

2022 2 (10)

HYUSISAPAYL

SCIENTIFIC JOURNAL

2022 2 (10)

Համարի պատասխանատու՝ Ա. Ճուղուրյան

Համակարգչային ձևավորում՝ Ի. Մարուխյան

*Գիտական հանդեսի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է
Հյուսիսային համալսարանի [www//northern.am](http://www.northern.am) պաշտոնական
կայքում:*

Չափսը՝ 60x84 ¹/₁₆

Տպագրություն օֆսեթ՝ 6.6 մամ.

Տպաքանակ՝ 120

Տպագրված է՝ Մեկնարկ ՄՊԸ-ում

Երևան-25, Աբովյան 41